


Թ. ՎԱՐԴԱՐԻՆ ՅԵՎ Ս. ԿՐԵՎԵՐ


ԶԻՈՒ ՊԱՅՏՈՒՄԸ



ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1940



ԱՐ

636.1
4-29
Պ. ՎԱՐԴԱՐԻՆ ՅԵՎ Ս. ԿՐԵՎԵՐ

30 JUL 2010

ԶԻՈՒ ՓԱՅՏՈՒՄԸ

ՁԵՌՆԱՐԿ

ԲԳԿԲ ԶՈՐԱՎԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԴԱՐԲՈՂՈՆԵՐԻ ՑԵՎ ՊԱՅՏԱՌ
ԴԱՐԲԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերկրարդ սովորված նրատարտկության



Պ. Վարվարին յեվ Ս. Կրեվեր: «Ձիու պայտամբ», 2-րդ ուղղված հրատարակություն:

Գիրքը ծանոթացնում է ձիու վոտի ստորին մասի կառուցվածքի հետ, ԱԿԻ-ի (Աշխատանքի կենտրոնական ինստիտուտ) մեթոդի հիման վրա պայտամբն տալիս է պայտ պատրաստելը սովորեցնելու մեթոդիկան, բացատրում է ձիերի պայտելու կանոնները և գարբնա-պայտառական գործիքների պատրաստելը:

Գիրքը հանձնաբարվում է ուսումնական գարբնոցների և ԲԳԿԲ գորամասերի պայտող դարբինների համար վորպես ձեռարկ:

ՊԱՅՏԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պայտը ծառայում է պինդ գետնի վրա բանող ձիու ոմքակի ներբանային մասերի յեղջերը մաշվելուց, ճնշումից և ջարդվածքներից պաշտպանելու համար: Բացի դրանից, պայտը ձիու համար, ոայթաքուն գետնի վրա ման գալիս, ծառայում է վորպես հենարան:

Պայտումը պետք է կատարվի վորոշ կանոններով: Այդ կանոնները հիմնված են ձիու վոտի ստորին մասի կառուցվածքը գիտենալու վրա: Միայն կանոնավոր պայտումը կարող է իր նպատակին ծառայել: Կանոնավոր պայտելու միջոցով կարելի յեւզգել անկանոն սմբակները, արագացնել հիվանդ սմբակների բուժումը, վերացնել ձիու անկանոն ընթացքի վնասակար հետևանքները (հարևան վոտերն իրար խփելը, յետերի վոտով առջեին խփելը): Ընդհակառակը, անկանոն պայտումը զնչ թե ոգուտ և բերում, այլ բնառ: Միաւ շինած, սխալ նստացրած պայտը, սխալ խփած մեխերը և այլն կարող են սմբակին զանազան վնասվածքներ պատճառել ու նրա նորմալ աշխատանքը խախտել և այլն: Կրկնվող սխալ պայտման վնասակար հետեւկանքները հաճախ արտահայտվում են զոչ թե միանգամից, այլ առտիճանաբար և ձիուն հառցնում են վաղաժամ անաշխատունակության:

ՁԻՈՒ ՎՈՏԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ձիու վոտի ստորին մասը ծածկված է ամուր յեղջերային մաշիկով: Այդ յեղջերային մաշիկը զգայուն չե: Յերբ պայտը մեխվում է յեղջերային մաշիկին ու մեխերն անցնում են նրա պատի միջով, ձին ցավ չի զգում:

Յեղջերային մաշիկի տակ գտնվում են զգայուն մասերը (վոսկերներ, կապաններ, ջլեր, մաշկի հիմքը, նյարդեր և այլն), այս մասերի ամենափոքր վիրավորվելուց, որինակ՝ սմբակի մեխերն անհմուտ խփելուց ձին ցավ է զգում և սկսում է կաղալ:



Պ. ВАРВАРИН И С. КРЕВЕР
КОВКА ЛОШАДИ


Արտցէ, Երևան, 1940 թ.

Զիու վոտի ստորին մասի կառուցվածքը ցույց է տված 1 և 2 նկարներում:


Սմբակոսկրի (նկ. 3): Սմբակոսկրն ունի յերեք մակերես՝ առջևի կամ պատի, ստորին կամ ներբանային, վերին կամ հողային և յերեք յելուն՝ (առջևի կամ պատի և յերկու կողքի):

Առջևի կամ պատի մակերեսն ունի վերից վար և դեպի առաջ թեք ուղղություն. Նրա վրա գտնվում են արյունատար անոթների շատ անցքեր. Առջևի մակերեսն իր մեջտեղում ունի բարձրություն (սմբակոսկրի պատկային յելուն), վորին ամբացված և մատի ընդհանուր տարածիչ ջիլը:

Սմբակոսկրի առջևի մակերեսը յետեի կողմից վերջանում է յելուններով, վորոնց ամոււր կցված են սմբակի կոճիկները (աճառները):



Նկ. 1. Զիու վոտի ստորին մասի յերկայնակի կտրվածքը՝
Ա—սմբակոսկր, Բ—պատակոսկր, Գ—մակույկոսկր, Դ—յեղջերային պատ,
Ե—յեղջերային ներբան, Զ, Է—յեղջերային փափկան և սլաք, Ը, Թ—փափկանի և սլաքի յենթամաշկային
չերտը, Ժ—խորանիստ ծալիչի ջիլ, Վ—ընդհանուր տարածիչ ջիլ:



Նկ. 2. Զիու վոտի ստորին մասի
փոփոկները՝
Ա—կապոսկր, Բ—պատակոսկր, Գ—սմբակոսկր:

Սմբակոսկրի յուրաքանչուր յելուն արյունատար անոթների համար ունի գողավորություն և նավիկ:

Վերին կամ հողային մակերեսը, վորը ծառայում է պատակոսկրի ստորին մասը տեղավորելու համար, ծածկված ե կոճիկով, ունի յերկու հողային փոսիկներ, վորոնց մեջ կա բարձրություն:

Մասը ին կամ ներբանի մակերեսը գողավագործ ե, ըստ վորում առջևի վոտի վրա այդ գողավարությունն ավելի փոքր է, քան յետեի վոտի վրա:

Սմբակոսկրի յետեի մասն ունի կիսալուսաձև փոսիկ,

բաժանված փոքրիկ կատարով՝ մակույկոսկր տեղա-

վորելու և խորանիստ ծա-

լիչի ջիլն ամբացնելու համար:

Ներբանային մակերեսի յետեի մա-

սում կա յերկու անցք, վորոնց մեջ մտնում են ձիու վոտի ստորին մասի զարկերակները:

Այսուհետև զարկերակները շարունակվում են վոսկրի ներսի խողովակներով և աղեղնաձև միանում են իրար. այդ կենարոնական խողովակից զանազան ուղղությամբ սկիզբ են առնում բազմաթիվ մանր խողովակներ, վորոնք վերջանում են սմբակոսկրի առջևի մակերեսի վրա. մանր խողովակների մեջ կան սմբակոսկրը սնող արյունատար անոթների ճյուղավորություններ:

Սմբակոսկրը փոփոխվում և կինգանու հասակի համապատաս-

խան. մարուկների սմբակոսկրի յելուններն ավելի կարճ են ու

հասու, սմբակոսկրի առջևի բռնիչ մասը սրբած ե, մեծահասակ կենդանիների սմբա-

կոսկրի յելուններն ավելի յերկար են ու ավելի բարձր, իսկ սմբակոսկրի բռնիչ մասն ա-

վելի կլորացած ե:

Նկ. 3. Սմբակոսկրի (նկ. 4) փոքրիկ յերկա-


րավուն վոսկր ե, վորը տեղավորված ե սմբա-

կոսկրի վերին մակերեսին՝ նրա կողքերի յելունների միջև. Մակույ-

կոսկրը սմբակի հողը ծալող մկանի ջիլ համար վորպես ճախարակ և ծառայում:

Պատակոսկրը (նկ. 5) կարծ վեց և հեշեցնում, վոր կիսով չափ

տեղավորված ե յեղջերային մաշիկում և ընկած և սմբակ ու մակույկ վոսկրների վերևում:



Նկ. 3. Սմբակոսկր:

Ա—պատակաձև յելուն, Բ—հողի վերին մակերես, Գ—սմբակոսկրի կողքի յելուն:

Եիչի ջիլն ամբացնելու համար:

Ներբանային մակերեսի յետեի մա-

սում կա յերկու անցք, վորոնց մեջ մտնում են ձիու վոտի ստորին մա-

մասի զարկերակները:

Այսուհետև զարկերակները շարունակվում են վոսկրի ներսի խողովակներով և աղեղնաձև միանում են իրար. այդ կենարոնական խողովական խողովակից զանազան ուղղությամբ սկիզբ են առնում բազմաթիվ մանր խողովակներ, վորոնք վերջանում են սմբակոսկրի առջևի մակերեսի վրա. մանր խողովակների մեջ կան սմբակոսկրը սնող արյունատար անոթների ճյուղավորություններ:

Սմբակոսկրը փոփոխվում և կինգանու հասակի համապատաս-

խան. մարուկների սմբակոսկրի յելուններն ավելի կարճ են ու

հասու, սմբակոսկրի առջևի բռնիչ մասը սրբած ե, մեծահասակ կենդանիների սմբա-

կոսկրի յելուններն ավելի յերկար են ու ավելի բարձր, իսկ սմբակոսկրի բռնիչ մասն ա-

վելի կլորացած ե:


Նկ. 4. Մակույկոսկր (նկ. 4) փոքրիկ յերկա-

րավուն վոսկր ե, վորը տեղավորված ե սմբա-

կոսկրի վերին մակերեսին՝ նրա կողքերի յելունների միջև. Մակույ-

կոսկրը սմբակի հողը ծալող մկանի յանու վորպես ճախարակ և ծառայում:

կոճիկով պատած յուր հոդային մակերեսներով նա միացած և սմբակ ու կապ վոսկրների հետ:



Նկ. 5. Պատոսկը:

Ա—առջևից, Բ—յատկայից:

Կապոսկը կարճ, խողովակաձև վոսկը և, իս ստորին ծայրում ունի թմբիկ, վորը մտնում է ներքեռում գտնված պատոսկը փոսիկի մեջ: Կապոսկը վերին մասում կա մի վոս, վորտեղ տեղափորվում է վերը գտնված յենթադասակային վոսկը ստորին ծայրը (առջևի վոտի վրա), կամ թաթի ծայրը (հետեւ վոտի վրա): Կապոսկը առջևի մակերեսը հարթ և ուսուցիկ եւ յետեկի մակերեսը կապանների ամրացման համար ունի յեռանկյունի անհարթություն:

ՀՐԴԵՐ ՅԵՎ ԿԱՊԱՆՆԵՐ

Զիու վոտի ստորին մասի վոսկրները հոդային մակերեսներով իրար շփվելով ու կապաններով միանալով հոդեր են կազմում: Սմբակոսկը՝ պատոսկը հետ միասին կազմում են սմբակի հոդը, պրակոսկը, վերը գտնված կապոսկը հետ պատկի հոդը, կապոսկը՝ յենթադասակի հետ, առջևի վոտի վրա (կամ թաթոսկը՝ յետեկի վոտի վրա) կազմում ե կապի հոդը:

Սմբակի հոդն ունի պարկային կապան, յերկու կողմանային կապան, վորոնք միացնում են սմբակ և պատոսկը ները, նաև կարճ կապաններ՝ մակույկը, սմբակն ու պատոսկը միացնելու համար:


Պատոսկին և կապային հոդերում բացի պարկային կապաններից, հոդերի կողքերին և յետեկին տեղափորված են նաև կապաններ: Պարկային կապաններն անցնելով մեկ վոսկը ստորին ծայրից՝ մյուսի վերին ծայրը, բոլոր կողմերից շրջապատում են հոդերը և կազմում պարկանման մի բան, վորի մեջ տեղափորված են վոսկը ները, Պարկային կապանի ներքին մակերեսը մածու-

ցիկ, բաց գեղնագույն հոդային հեղուկ (սինովի) և արտադրում: Այդ հեղուկը, գտնվելով հոդի ներքին խոռոչի փոքրիկ տարածության մեջ, խոնավացնում է վոսկը հոդային մակերեսը և նվազեցնում վոսկը ների ծայրերը ծածկող կոճիկների միջև կատարվող շփումը: Մնացած կապանները հաստ, կարճ և ամուր ձգափոք կեր են:

ՍՄԲԱԿԱՅԻՆ (ՓԱՓԿԱՆԱՅԻՆ) ԿՈՃԻԿՆԵՐ (Նկ. 6)

Սմբակային (փափկանային) կոճիկներն ունեն քառանկյունի թիթեղնիկի ձև: Նրանք ամբացած են սմբակոսկը կողմանային յեղուններին և իրենց առջևի մասով կպչում են պատակոսկին: Սմբակային կոճիկները, համարյա ամբողջովին, ծածկված են յեղջերային մաշիկով: Ամբակային կոճիկների վերևուրելու, միայն յետամի կողմից, յեղջերային մաշիկով փոքրը ինչ դուրս են ընկած: Յեղջերային մաշիկից դուրս ընկած սմբակային կոճիկի այդ մասը մաշկի վրայից կարելի յեշողափել: Սմբակային կոճիկների միջև ընկած են փափկանները, խորանիստ ծալիչի ջիլը և մաշույկոսկը:

Սմբակի (փափկանային) կոճիկները նպաստում են սմբակի կրունկների առաձգականությանը:




Նկ. 6. Սմբակային (փափկանային) կոճիկ:

ՓԱՓԿԱՆ (Նկ. 7)

Փափկանն ունի հաստ առաձգական բարձիկի ձև, վորի մեջտեղը յերկայնակի նավիկ կա: Փափկանի առջևի ծայրը սուր է: Փափկանն ընկած է սմբակի կոճիկների միջև, ծածկելով խորանիստ ծալիչ ջիլը: Փափկանի սուր ծայրը (պլաֆ) համապատասխան սմբակոսկի մեջ յերրորդականին: Փափկանը մեղմացնում է ձիու վոար գետնին դնելիս առաջացող զարկը:



Նկ. 7. Փափկան:



Նկ. 8. Զիու վոտի
ստորին մասի զիլերը:


Ա—մատի ընդհանուր տարբա-
ժիչի վիլ, Բ—մակերեսային
ժալիչի վիլ, Գ—խորանիստ
ժալիչի վիլ:

ԱՐՅՈՒՆԱՏԱՐ ԱՆՈԹՆԵՐՆ ՈՒ ՆՅԱՐԴԵՐԸ

Արյունատար անոթները (նկ. 9) ստորաբաժանվում են զարկերակների և յերակների. Զարկերակներով արյունը սրտից տարածվում է զեղչի որդանիքմի հյուսվածքները, տալով նրանց սննդանյութ. արյունը հյուսվածքներին տված սննդաբար նյութը յերակներով նորից վերադարձնում և սիրտը:

Սմբակում արյունատար անոթների ցանցը շատ հարուստ է:

Արյունատար անոթիներին ուղեկցում են նյարդերը, Նյուրգելը
բարակ թելի ահաք ունեն:



Եկ. Պ. Զիու վոտի ստորին մասի արյունատար
անոթները:


ՎՈՏԻ ԱՏՈՐԻՆ ՄԱՍԻ ՄԱՇԿԵ

Զիւռ մարմինը ծածկող մաշկը կազմված է յերեք հիմնական
շերտեց՝ ա) մակերեսային շերտ, բ) մաշկի հիմքը,
գ) յենթամաշկային շերտ կամ յենթամաշկային բջանը:

Զիու վասի ստորին մասի (սմբակի շրջապատում) մաշկը մազերից զուրկ եւ մաշկի մակերեսային շերտն ուժեղ գարզանում և դառնում ե հաստ, պինդ յեղջերային մաշկի. յենթամաշկային շերտ կա միայն վափկանների և պատկի հատվածում, իսկ սմբակիունքի ներբանային և առջեի մակերեսների վրա բոլորովին դոյլություն չունի:

Մաշկի հիմքը գտնվում է յեղջերային մաշկի տակ: Առաջներում ընդունված եր ձիու վոտների ստորին մասերի մաշկի հիմքն անվանել «մօային մասեր», վորովհետև այդտեղ մաշկի հիմքը շատ հարուստ է արյունատար անոթներով և ունի մկանների (մօի) գույնը՝ հիշեցնող մուգ կարմիր գույն:

Մաշկի հիմքը կազմված է՝ յեղերածքից, պսակից, պատից, ներբառնից և գրափուանից (նկ. 10):



Ակ. 10. Զիու սմբակի
մաշկի հիմքը:


թյան ուսուցիկ գլան։ Այդ գլանը գեպի փափկանները զնալով ավելի տափականում եւ և թեքվում դեպի սմբակի ներբանային մակերեսը, վորտեղ հետզհետե անհետանում եւ Պատկի մաշկի հիմքն առջևից ծածկում ե պսակոսկրի սառըին մեկ յերսորդականը, իսկ կողքից ընդդում ե պսակոսկրի կողմանային մակերեսները և սմբակի կոճիկների վերին մասը։

Պատկի մաշկի հիմքի արտաքին մակերևունը ունի 5—6 մմ յիշ-կարության կոնսածի պտկիլներ:

Պատի մատկի հիմքն ամուր միանում ե սմբակոսկրի առջնի
մակերեսի հետ, նրա կազմությունը թերթային ե, թերթիկները զու-
գահեռական շարքերով իջնում են վերից-վար, թերթիկների լայնությունն ամեն տեղ միա-
ահամակ չե, պսակի տակ թերթիկները նեղ են,
իջնելով դեպի ցած՝ նրանք աստիճանաբար
լայնանում են և ոկոսած պատի կեսից մինչև
ներբանի յեղը պահպանում են միառեակ
լայնություն։ Թերթիկները շրջվում են որմ-
քակի ներբանային մակերեսի վրա, վորտեղ
հետզհետե փոքրանում ու անհետանում են։
Ամենալայն թերթիկները բռնիչային մասումն
են, կողքի և կընկի մասերում թերթիկները
կարձանում են։ Պատի վրա թերթիկների թի-
վը հասում է 500—600 հատի։

Ներբանի մատկի հիմքը (նկ. 11) ծած-
կում և սմբակոսկրի ստորին մակերեսը, վորի հետ նա ամուր միա-
ցած է: Ներբանի մաշկի հիմքի արտաքին մակերեսը ծածկված է
պտկիկներով:

Փափկանի մաւելի հիմքը նույնպես պտկելային կազմություն առնելի



‘Եկ. 11. Ներբանի
փափկանիու ոլա-
քի մաշկի հիմքը:



Յեզերածի մասի հիմքը գտնվում
է մազոտ մաշկի և սժբակի սահմանի
վրա ու ներկայացնում է 5—6 մմ. լայ-
նությամբ մի շերտ. Այդ շերտը վերևից
շրջապատում է սմբակը և յանում հե-
տող ետև լայնանալով ձուլվում է փափ-
կանի մաշկի հիմքի հետ:

Պասկի մատկի հիմքն ընկած ե յեղեւ-
րածքի մաշկի հիմքի և պատի միջն ու
ներկայացնում ե մոտ 2 ոմ լայնու-

ՏԵՂՋԵՐԱՅԻՆ ՄԱՆԵԿ

Յեղերային մաշիկը (նկ. 12) սերտորեն միանում եւ սմբակի մաշկի հիմքի հետ. յեղերային մաշիկը հազվագյուտ դեպքում միայն կարող եւ սմբակից պոկիվել, յերբ սմբակը ձիռ արագ գնալու ժամանակ ընկնի նեղ անշքի մեջ (խարխուլ կամ ոջի վրայով արշավելիս, պայտի զգեսը տրամվայի ակոսավոր գծի մեջ ընկնելուց և այլն):

Մմբակիր յեղջերային մաշիկը կազմված է յերեք մասից՝ յեղջերային պատից, յեղջերային ներբանից և յեղջերային փափկանից՝ ոլաքի հետ միասին:



‘Ակ. 12. Յեղյերային մաշիկ:

Ա.՝ յեղջերային յեղերածք, Բ.—պատկային սավան, Գ.—յեղջերային պատի, Դ.—յեղջերային բանիչային մաս, Ե.—յեղջերային պատի կընկային մաս, Զ.—յեղջերային պատի կողմնային մաս:


Յեղքերային պատը՝ (նկ. 13) շրջապատում և սմբակին առջեցից և կողքերից. նա սկիզբ է առնում մազոտ մաշկի սահմանից, գնում և վերևից ներքեւ և կողքերի ուղղությամբ. կրնկային մասերում պատն անկյունով շրջվում և սմբակի ներքանացին մակերեսի վրա և առաջ ացնում են ետաղարձ պատեր. Պատի դեպի ներս և առաջ շրջած տեղը կոչվում է կրնկային ոյուն (կրնկային անկյուն), վորը սմբակի ամսութ հենարանն և հանդիսանում կրնկներում:

Յեղջերային պատը կազմված է յերեք շերտից՝ արտաքին, միջին և ներքին (սկ. 14): Արտաքին բարակ շերտը թաղանթաձև է և կոչվում է գլազուրային թաղանթ կամ գլազուր (փայլաներկ):

Յեղջերային պատի միջին շերաը պատի բոլոր շերտերից ամենահաստն եւ կազմված եւ յեղջերային խողովակներից Յեղջերային պատի ներսի շերաը բազկացած եւ յեղջերային թերթիկներից, վորոնք տեղափորված են մաշկի հիմքի թերթիկների միջն և նպարտում են մաշկի հիմքի ու յեղջերային պատի ամուր միացման:

Յեղիշեային պատն արտաքինից վողարկ և, ներսից գոգավոր և
թերթիկներով ծածկված։ Տարբերում են յեղիշեային պատի 2 յեղը՝
վերին (պսակային) և ստորին (ներբանային)։

Յեղջերային պատի վերին յեղը շըջագիծը $\frac{1}{3}$ -ով փոքր և սուրբին յեղը շըջագիծը: Յեղջերային պատի ներսի կողմում, վերեկից բավականաչափ լայն փոռ կա, վորը կոչվում և պատկային նավիկի: Պատկային նավիկի մեջ տեղավորված և պատկի մաշկի հիմքը: Ստորին (ներբանային) յեղը ներբանից ցած և իջնում և նրա հետ միանում և սպիտակ գծի միջոցով, վորն իր արտաքին տեսքով, մոտ 4 մմ լայնությամբ, բաց գեղնավուն մի շերտ և: Սպիտակ գիծը կազմում են յեղջերային թելթիկների ծայրերը, վորոնց արանքները լցված և խողովակավոր յեղջերային զանգվածով: Սմբակի սպիտակ գծով կարելի յել վորոշել յեղջերային պատի հաստությունը:




‘Ակ. 14. Յեղջերային մաշեկի
յերկայնական կտրպածքը:

Ա—յեղերային յեզերածք, Բ—պսակային նավիկ, Գ—յեղերային թերթիկներ, Դ—մակերեսային շերտուղագուր, Ե—մէջին շերտ-խողովակավոր, Զ—ներքին թերթիկային շերտ:


անցկացնում, վորը սմբակը բա-
ժանում ե յերկու մասի՝ տրտաքին և ներսի, կամ չորս գծով հինգ-
մասի՝ մեկ բռնչային, յերկու կողմնային և յերկու կրնկային:

Յեղօթրային ներբանը (նկ. 16) յեղջերային մաշիկի ստորին
մասն և նա ընկած եւ յեղջերային պատի ներբանային յեղքի և
շրջամած պատերի միջև։ Ներբանն ունի յերկու մակերես՝ ստո-
րին և վերին, ստորին մակերեսը գոգավոր եւ կամարաձև։ Գոգա-
վորությունը յևուելի սմբակներում ավելի մեծ է։ Այս ձիերի սմբակ-
ները, վորոնք յերկար ժամանակ չենտաշ-
վել, ունեն անողորկ ներբանային մա-
կերես, վորը ծածկված եւ փխրուն, ճաք-
ճռքված մոխրագույն յեղջերով, այսպես
կոչված «մեռած յեղջերով»։ Ներբա-
նի գերին մակերեսն ուռուցիկ եւ հ
ծածկված եւ կետանման փոսիկներով, վո-
րոնց մեջ տեղավորված են ներբանի
մաշկի հիմքի պտկիլները։




Ակ. 15. Սմբակի պատը մասերի բաժանելը:

Ներբանն ունի արտաքին և
ներսի յեզրեր, արտաքին յեղըն ա-
ղեղնաձև է, ամբողջ արածության վրա
սպիտակ գծի միջոցով միացած և պատի
ստորին մտուի հետ. ներսի յեղըն մի
սեպաձև կտրվածք է: Այդ կտրվածքի մեջ սեպաձև մտնում են՝ յեղ-
ջերային ոլաքը և յեղջերային պատի շրջված մտսերը: Ներբանի հաս-
տությունը միատեսակ չե. բանիչային մասում նա ավելի հաստ է,
իսկ ոլաքի սուր ծայրի մոտ ավելի բարակ: Միջին մեծության նոր-
մալ սմբակիների ներբանի հաստությունը գոյա լոռուակս 8—10 մետ:



ԵԿ. 16. Յեղջելային
ներբան:



‘ԵԿ. 17. Յեղիսային ոլաք
(վերին մակերես):

Յեղօթեային սլաքն (նկ. 17) ընկած և ոմբակի ստորին մակերևսի վրաւ Նա կազմված և փափուկ, առաձգական յեղջերից, Առջևից ուղաքը միանում և ներբանի, իսկ կողքերից ու յետերից՝ շրջված պատերի հետ:

Յեղիշերային սլաքն ունի յերկու մակերես, ստորին և վերին, ստորին մակերեսի վրա կան յերկու սեպաձև բարձրություններ, նրանք ուղղված են դեպի առաջ և ձուլվում են ուղաքի մարմնի հետ, վորը վերջանում է սուր ծայրով։ Այդ բարձրությունները կոչվում են «ուղաքի ազդյեր», իսկ սլաքի ազդյերի և յեղիշերային պատի շրջված մասերի միջև ընկած խորությունները կոչվում են «ուղաքային ակոսի կներ»։ Սլաքի մեջտեղում գտնվող խորությունը կոչվում է «միջուղաքային ակոսի կ»։ Յեղիշերային ուղաքի վերին մակերեսի վրա կա յերկու խորություն, վորոնք ներքեում համապատասխանում են սլաքի կողերին, մեջտեղում կա նաև յելուն («աքաղաղի կատար»)։

ՍՄԲԱԿԻ ՅԵՂԻՇԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սմբակի առանձին մասերում յեղիշերի առաձգականության առավիճանը միատեսակ չէ։ Սմբակի պատի և շրջված պատերի յեղիշերն ավելի կարծր են և համեմատաբար պակաս մկունություն ու առաձգակականություն ունեն։ Ներբանի յեղիշերը պատի յեղիշերից ավելի փափուկ է։ Սլաքի յեղիշերը փափուկ ու առաձգական է։

Նորմալ սմբակի յեղիշերը պարունակում է մոտ 40% ջուր, ինչնական այս միջին քանակը ամենաեյտական պայմանն է սմբակային յեղիշերը նորմալ դրության մեջ պահելու համար։ Խոնավության քանակի պակասումը վատթարացնում է յեղիշերի վորակը։ Ջուրը չուրանալուց նա կարծր, փիլուն և դյուրաբեկ զանգված և դառնում, ավելորդ ջուր պարունակելու դեպքում յեղիշերը թուլանում և փափում է։


Սմբակի յեղիշերը ջերմության վատ հաղորդիչ է և գրանով իսկ յեղիշերային մաշկի ներսում զանգված մասերը լավ պաշտպանում է ցածր և բարձր առտիճանի ջերմության աղբեցությունից։ Սմբակի յեղիշերի այդ հատկությունը բացարվում ենրա կառուցվածքով։ Սըմբակի յեղիշերի միջին շերտում կան ողով լցված յեղիշերային, սնամեջ խողովակներ, իսկ ողը տաքության վատ հաղորդիչ է։

ԶԻՈՒ ՍՄԲԱԿԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ (նկ. 18)

Հինգ ամսական պաղի սմբակը կոնաձև ու փափուկ և հետագայում է միայն յեղիշերի ամրություն ստանում։ Նորածին մարուկի պսակային յեղին ավելի լայն է, քան ներբանայինը։

Մեկ տարին լրացած մարուկի սմբակը կողքերից սահմանա-

փակված է զուգահեռ գծերով։ 15—18 ամսից սկսած ներքանային մասում ոմբակն ավելի լայնանում է։



Նկ. 18. Զիու սմբակի զարգացումը։

Ա—4 ամսական պաղի սմբակը, Բ—5½ ամսական մարուկի սմբակը,
Գ—մեկ տարին լրացած մարուկի սմբակը։

Սմբակի զարգացումը վերջանում է ձիու որգանիզմի լրիվ զարգացման հետ, այսինքն նրա կյանքի 4—5 տարում։

ՈՒՂԻՂ ՅԵՂ ԱՌՈՂԶ ՍՄԲԱԿԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (նկ. 19)

Առողջ, կանոնավոր սմբակը հետևյալ հատկանիշներն ունի՝


1. Առջևի սմբակի ներքանի ձեռք համարյա կլոր է, յետեինը ձվածիր (ովալ)։ Առջևի սմբակի պատի բռնիչային, կողմանային և կրնկային մասերի յերկարության հարաբերությունը 3:2:1 է, այսինքն՝ բռնիչային պատը 2 անգամ յերկար է կողմնային պատից և 3 անգամ կրնկային պատից։ Յետեվի վոտում հարաբերությունը $2\frac{1}{2}:1\frac{1}{2}:1$ է։

2. Յեղիշերային պատի, ինչպես առջևի նույնպես և յետեւ սմբակների բռնիչ մասը թեք ձևով և ուղղված դեպի գետին։ առջևի վոտների բռնիչային մասի թեքության անկյունը՝ ավասար է $45—50^\circ$, յետեւի վոտներինը՝ $50—55^\circ$, յեղիշերային պատը զնալով դեպի կրունկներն ավելի ուղղածիք և դառնում և կրունկների անկյունների շրջանում դառնում է համարյա ուղղանայաց (սմբակների թեքության անկյունը վորոշում են հատուկ գործիքով—անկյունափով, վորը շարժական թիթեղնիկի վ ա աստիճանների բաժանումներ ունի)։

3. Առջևի սմբակի ներքանը քիչ գոգավոր է, Յետեւի սմբակի գոգավորությունն ավելի մեծ է, ներքանի վրա ճմլվածքներ, ճեղք-

վածքներ չկան, շրջված պատի վրա կոտրվածքներ ու ծռվածքներ չկան:

4. Յեղիբային մաշիկի ամբողջությունը չի խախտված. ճեղքեր, պատուփածքներ, դատարկ պատեր, տձև դասավորված ողականման բարձրություններ, ոյունաձև կոշտեր, ոմբակի կոտրված տեղեր չկան:



Կանոնավոր սմբակ.

Ա—առջի սմբակ, Բ—յատի սմբակ:

միջուաքային ակոսները պարզ արտահայտված են:

6. Սպիտակ գծի գրությունը խախտված չե, սպիտակ գիծը լայնացած չե ու ներբանային յեղքի վորեւմ մասում փշրված տեղեր (անջատվող, դատարկ պատ) չկան:

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՅԵՂԻԲԵՐԻ ԱՃՐ

Յեղիբային մաշիկը հավասարաչափ է աճում. Սմբակային պատի յեղիբն աճում է վերից դեպի վար,—յեղիբածքի մաշկի հիմքի (մազաբերանի) և պատկի կողմից: Դրանում հեշտ է համոզվել, յեթե պատի վերին յեղքին մոտ յերեսանց նշան (կտրվածք) արվի. այդ նշանը յեղիբի աճման հետ ցած կիշնի: Քանի վոր սմբակի յեղիբային պատը թեք ե և բոնիչային, կողմանային ու կրունկային մասերում հավասար բարձրություն չունի, ուստի յեղիբի աճման համար,

պատի ամբողջ յերկարությումը վերից վար, տարբեր ժամկետներ կպահանջվեն: Որինակ, բռնիչային մասում՝ 11-ից մինչև 13 ամիս, կողմանային՝ 6—8 ամիս և կրոնկային՝ 3—5 ամիս: Միջին հաշվավ, բարենպատ պայմաններում, պատի յեղիբը, յուրաքանչյուր ամիս, 3 միլիմետրի չափ աճում է:

Ներբանի յեղիբը՝ ներբանի մաշկի հիմքի կողմից և աճում՝ փափկանների (ոլաքի) յեղիբը՝ փափկանների (ոլաքի) մաշկահիմքի կողմից:

Սմբակային յեղիբի նորմալ աճմանը նպաստող պայմանները՝

ա) ձիու կանոնավոր ման գալը փափուկ գետնին, վորի վրա սմբակի թիթե հետք և մնում:

բ) ձիու կանոնավոր խնամքը (լով կեր, առատու մաքուր ցամքալ և այլն):

գ) սմբակների կանոնավոր խնամքը:

Զպայտած սմբակներն ավելի արագ են աճում, քան պայտածները: Ձիերին արոտային պայմաններում պայտաթափ պահելը նպաստավոր ազդեցություն ե գործում սմբակի յեղիբի աճման և վորակի վրա:


Սմբակի վրա ձիու մարմնի ծանրության անհավասար բաշխումը (սմբակը սխալ մաքրելուց), պայտը սխալ պատրաստելուց և ամբացնելուց), սմբակը չոր պահելը և պինդ գետնին բանելը դանդաղցնում են յեղիբի նորմալ աճը:

ՍՄԲԱԿԻ ԼԱՅՆԱՑՈՒՄԸ

Շնորհիվ ձիու վերջավորությունների վոռկրների առանձնահատուկ դասավորության (անկյունավոր), շնորհիվ նրա կապանների, Ձիերի, փափկանների և սմբակի կոճիկների առաձգական հյուսվածքից կաղման լինելուն ձին ցնցումներ ու զարկեր չի զգում:

Վոտը գետնին կոխելիս սմբակը, առանձնապես կրունկի մասերում լայնանում է. լայնացումը կրնկի պատի վերին յեղիբը ունի 2—4 մմ-ի, ստորին մասում (ներբանային)՝ 2—3 մմ-ի: Քայելով ման գալիս, թեթև աշխատանքի ժամանակ, սմբակն ավելի քիչ է լայնանում. ծանրություններ տեղափոխելիս, վարչի (ըիս) կամ քառատրոփ ընթացքի ժամանակ՝ ավելի շատ: Սմբակից պոկան պայտերի ներբանային վերին մակերեսի ճյուղերի ծայրերի վրա գտնված մաշված տեղերը նույնպես վկայում են սմբակի կրունկների լայնանալու մասին:

Վոտը գետնին գնելիս առաձգական փափկանը, ոլաքը և սմբակի



կոմիկները մարմնի ծանրության ազդեցության տակ տարածվում են դեպի կողքերը, վորի հետեանքով սմբակի կողքերի և կրունկի պատերը լայնանում են:

Սմբակի ճկուն մասերի հավասարաչափ լայնանալն ու սեղմվելը,
ինչպես արտաքին, նույնպես և ներքին կեսի վրա կատարվում ե հավա-
սար չափով, վորովհետև ձիու մարմնի ծանրությունը կենտրոնով ե
անցնում, հավասարաչափ բեռնավորելով սմբակի բոլոր մասերը:
Սմբակն անկանոն մաքրելու և սխալ պատրաստած ու վատ նստաց-
րած պայտով պայտելու դեպքում սմբակն անհավասար ե լայնանում,
վորը վատ ե անդրադառնում ձիու վոտի ստորին մասի դրության
վրա (սմբակի ձեվափոխության, յեղջերի ամբողջության խախում,
կապանների ձգումներ և այլն):

ՊԱՅՏԱՌԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑԸ ՅԵՎ ՆՐԱ ՍԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ԴԱՐԲՆՈՑԻ ՇԵՆՔԸ (նկ. 20)

Դարբնոցի համար նախատեսվող շենքը, հրդեհի վտանգից ապահովելու նպատակով. պետք է կառուցել հրակայուն նյութերից, ընակելի և տնտեսական շենքերից հեռու:


Դարբնողի համար պետք ե հատկացնել ընդարձակ, բավական լուսավոր շենք: Շենքի չափը կախված ե հնոցների և աշխատող գարբինների թվից: Շենքի բարձրությունը՝ 4 մետրից պակաս չպետք ելինի, հնոցի հեռավորությունը՝ զնդանից առնվազն՝ $1-1\frac{1}{2}$ մետր պիտի լինի, զնդանից մինչև մամլակի դազգյահը (1 թե այն գտնվում ե զնդանի յետեւ)՝ առնվազն յերկու մետր, յերկու զնդանի միջի տարածությունը՝ $1\frac{1}{2}-2$ մետր:

Գարբնոցի հատակը շինվում ե քարից կամ կավից. ավելի լավ ե կավաշեն անել, վորովհետև այդպիսի հատակի վրա աշխատելիո դարբինն ափելի քիչ ե հոգնում:

Պետք են հասունկ ուշադրություն դարձնել դարբնոցում հովահար ողանցքներ կառուցելու վրա, քանի վոր այրման արդյունքները դարբնոցում աշխատողների առողջության վրա վատ ազդեցություն կարող են ունենալ:

Քարբնոցին կից անհրաժեշտ ե ունենալ տաքացվող ձիամարզա-
րան (մանեթ), աննպաստ յեղանակներին ձիերին այնտեղ պայտելու
համար։ Ձիամարզարանի տարածությունը վորոշվում ե այն հաշվով,
վոր յուրաքանչյուր ձիուն հասնի 12—15 քառ. մետր տեղ։ Ձիամար-
զարանում պատից մի փոքր հեռու (0,5 մետր) սարքվում ե ձիակա-

պարան՝ ձիերը կապելու համար։ Զիամարգարանում գտնված ձիերը չպետք ետեսնեն հնոցի կրակը և լսեն դարբնոցի աղմուկը, այդ հանգամանքը ձիերին, մանավանդ յերիտասարդներին, հաճախ վախեցնում եռ նրանք պայտելու ժանամակ անհանգստանում են։



‘Ակ. 20. Զորամասային դարբնոցի հատակագիծը յերեք
հնոցի համար (6 կըսակ):

Զիամարզարանի հատակը փայտից (կոճղից) կամ կավից եւ շին-
վում: Քարե կամ առֆալտե հատակը սայթաքուն ե: Զիերին վնաս-
վածքներ ու վիրավորութներ չպատճառելու համար ձիամարզարանում
ավելորդ իրեր չպետք ե պահպեն:

Դարբնոցին կից պատրաստվում ե յերկու պահեստ, մեկը՝ ածուխ պահելու, իսկ մյուսը՝ գործիքների և դարբնոցային նյութերի համար:


Դարձնոցի կողքին, շենքից դռւբ, շինվում և ձիակապարան, տաք որերին ձիերն այստեղ պայտելու համար:

Պայտելուց առաջ և հետո ձիերը ման ածելու համար դարբնոցի առաջ շինվում ե տոփանած հարթակ:

ԴԱՐԲՆՈՑԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Դարբնաւպայտառական աշխատանքներ կատարելու համար դարբնոցը սարքավորվում է փուլքավոր կամ հողմահար դարբնական

Հնոցներով, զնդաններով, մամլակներն ամրացնելու դադայահներով և այլն: Բացի դրանից, դարբնոցը պետք է ունենա հետեւալ հատուկ գույքը—գործիներ՝ կրակը կանոնավոր պահելու համար, գործիքներ՝ պայտ պատրաստելու համար, գործիքներ՝ ձիերը պայտելու և մետաղների փականագործական մշակման համար, չափող գործիք, սրոց, սրոցաձողեր, հարմարություններ՝ անհնաղանդ ձիերը պայտելու համար (թիկնափոկեր, պարաններ՝ վունակապերի համար, գելաւանակներ) (զակրուտիաներ), նմանապես աշխատողների համար մասնագիտական հագուստի կոմպլիկու: Մասնագիտական հագուստը պահպակ համար պահպակ հատուկ պահարանում:




Նկ. 21. Մշտական հնոց:

մական կամ դաշտային): Հնոցները շինվում են մեկ կամ յերկու կրականով:

Դարբնոցի հնոցները ծառայում են մետաղները տաքացնելու համար: Սրանք լինում են մշակական (անշարժ) և շարժաան (ուազմից ունի պաշտպանող պատ): Հնոցի կողքին տեղադրվում է փուքը կամ հողմանարը:


Հնոցի գլխավոր մասը, վորտեղ կատարվում է վառեանույթի առաջնորդը, կոչվում է հնոցարուն: Վերջինս թասանման (կիսագնդաձև) խորություն է 200—400 միլիմետր տրամագծով և 100—150 մմ լորրությամբ: Հնոցարնի հատակում (տակից փշելու համար), կամ

հնոցարնի կողքին (կողքից փշելու համար) դրվում է հաստ (փողավոր), մեծ մասամբ թուղից պատրամտած սալ (նկ. 22), վորպես աշելի հրակայուն: Սալը 2—4 տեղ ձակում են հաստապատ փողի հաշելի հրակայուն: Սալը 2—4 տեղ ձակում են հաստապատ փողի հաշելի հրակայուն:



Նկ. 22. Փողավոր սալեր:


մար (նկ. 23), վորի միջոցով կրակը բորբելունպատակով սպ են փշում: Յեթի փողի ծայրը ենքան կպած սալի մի մասն այրվի, այդ դեպ ըում սալը այրված մասը յիտ են քաշում, իսկ փողի ծայրը միացնում են պահաստի անցքերի հետ: Փողը շինվում է թուղից, մի քիչ ավելի յերկար, նկատի ունենալով, վոր սրա ծայրը կարող է այրվել Փողի հակառակ ծայրից անց և կացվում մետաղյա խողովակ, վորը փուքը միացնում է հնոցի փողի հետ: Այրման արդյունքները (ծուխը, գաղերը) հեռացնելու նպատակով, հնոցի վերելում շինում են դուրս հանող ծխնելույզով թիթեղի հովանոց: Դուրս հանող ծխնելույզի մի մասը դարբնոցի տանիքից բարձր է շինուվում: Այրման արդյունքները դարբնոցից լրիվ չափով հեռացնելու համար ծխնելույզի վրա (վերելից) հագցվում է կարճ, ծալքավոր, կողքից ձեղքեր ունեցող յերկաթի խողովակ (գեֆլեկտոր, «ֆլյուգարկա»): Դարբնոցի հովանոցի համար հնոցները յերեսն յերկաթե սեղանի նման են շինվում (նկ. 24), վորոնց միացվում է յերկու խո-



Նկ. 24. Յերկաթե սեղանի նման հնոց:

դոգվակ, մեկը՝ ող ներս մզելու, մյուսը՝ ծուխը հեռացնելու համար:

Շարժական հնոցները գործադրվում են գլխավորապես ուղղմական (յերթային) և ճամբարային պայմաններում (նկ. 25): Շարժա-



Նկ. 25. Շարժական (յերթային) հնոցներ:

կան հնոցները սարքավորվում են փոքրիկ հողմահարներով, վորոնք տեղակորվում են ներքեռում, հնոցաբնի տակ: Հողմահարը շարժման մեջ ե դրվում վոտնատեղի կամ բռնակի միջոցով: Հնոցաբռւն ունի յերկաթե փոքրիկ տուփի ձեւ, միջնադիր պատով, վորին ամբացված և ռալը՝ փողի հետ միասին:

Դարբնոցի փութօնը: Դարբնոցի փութօն ունի յերկու բաժանմունք, կազմված՝ յերեք տախտակ—վահաններից (միջնապատ, հատակ և տանիք), վորոնք կողքերից պատած են կաշվե պատյանով: Փութօնը սեղմելու համար, ներքեկի տախտակի ծայրին ամբացվում ե՝ լծակի հետ միացրտծ բռնակը: Փութօնը սեղմելու զեղքում պատյանը հարմոնիկի նման ծալքավորվում է: Փութօնի ներսում գտնված ողը՝ ողամուղ խողովակով անցնում ե փողի և հնոցաբնի մեջ:


Յերկու բաժանմունք ունեցող փութօների աշխատելու ժամանակ հնոցաբռւնը մտնող ողի անընդհատ հոսանք և ստացվում. այդ դեպքում միջին վահանը (միջնապատը) մնում է անշարժ: Միջին և ստորին վահանների մեջ կաշվե կափույրներով ծածկված անցքեր կան, կափույրները բացվում են դեպի վեր:

Փութօն աշխատում է հետեյալ ձեռվակ՝ լծակն իջեցնելիս փութօնի ստորին խուցը ծավալով փոքրանում է և ճնշում իր մեջ յեղած ողը, վորի հետեւանքով ներքեկի կափույրը փակվում է, իսկ միջին վահանի կափույրն ողի ճնշումից բացվում է և ողը մտնում է փութ-

ով վերին բաժանմունքը: Բոնակն ազատ թողած դեպքում ցածի տախտակն իր ծանրության հետևանքով իջնում է, կափույրը բացվում է և ողը մտնում է ներքեկի բաժանմունքը: Հենց այդ ժամանակ վերին տախտակի ճշման տակ ողը փութօնի վերին բաժանմունքից գուրս կմղվի հնոցի մեջ: Մինչև ներքեկի տախտակի վերջնական իջեցումը հարկավոր ե լծակը դեպի ցած ձգել, այն ժամանակ ներքեկի բաժանմունքից ողը կդնա վերին բաժանմունքը և այլն:

Դարբնոցի փութօներն ըստ ձեր լինում են՝ սեպան և գլանան (նկ. 26):

Փութօների փոխարեն հաճախ գործադրում են հողմահարներ, վորոնք աշխատեցվում են ձեռքով կամ վոտով: Լավ կահավորված դարբնոցներում հողմահարները բանեցվում են ելեկտրական մոտորով:




Նկ. 26. Սեպան փութօն:

Ա—կտրվածքը, Բ—ներքեկը:

Զնդանը ծառայում է մետաղի մշակման համար: Զնդանը պատրաստվում է յերկաթից կամ թուղից, վորի պողպատով ծածկած վերին մակերեսը կոչվում է զնդանի յերես: Զնդանի յերեսը պետք է ուղիղ և վողորկ լինի: Զնդան ընտրելիս հարկավոր ե հատուկ ուշագրություն դարձնել յերեսի մխվածության վրա: Դրա համար անհրաժեշտ է զնդանի մակերեսը զանազան տեղերում խարսոցվ փորձել: Ցեթե խարսոցը սուլը հետքեր և թողնում, կամ ընդհակառակը՝ բոլորվին հետքեր չեն յերեսն, ուրեմն զնդանն անպետք ե՝ առաջին դեպքում զնդանի յերեսը թույլ և մխված լինում, աշխատանքի ընթացքում նրա վրա փուեր կգոյանան: յերկրորդ դեպ-

Քում՝ զնդանի յերեսը չափից ավելի յէ մխված լինում, վորից այդպիսի զնդանի յեղբերը շուտ կիշրվեն: Զնդանը լավ և համարվում, յերբ խարտոցի թողած հետքերը հազիվ են նշմարվում: Բայց զնդանի յերեսի մխվածությունն ստուգելուց, պետք ե պարզել՝ չկան արդյոք ձեղքեր, փուչ (գատարկ) տեղեր և յերեսն արդյոք կարծը և զողված: Զնդանի արտաքին ճեղքերը մակերեսային զննումից իսկ արդին յերեվում են. ներքին ճեղքերը վորոշելու համար հարկավոր ե զնդանի յերեսի տարբեր տեղերում ձեռնամուրճով թեթև հարկածել: Պարզ ձայնն ապացույց ե զնդանի յերեսի կարծը մխվածության, խուլ ձայնը ցույց ե տալիս ներքին ճեղքերն ու դատարկությունները:

Զնդանն ամրացվում ե հաստ կոճղի վրա: Ավելի կայուն լինելու համար աթոռը թաղում են հողի մեջ, իսկ աթոռի տակ խիճով ամրացնում: Աթոռի յերեսը, վորիվրա ամրացվում ե զնդանը հարթված պետք ե լինի: Զնդանն աթոռին ամրացվում ե յերկաթե կապերով կամ անուրներով (խամութ) (նկ. 27): Վորպիսպի աթոռը չհաքճքի, վերից յերկաթի կապանով փաթաթում են:



Նկ. 27. Զնդանի ամրացումն անուրներով:



Զնդանները լինում են զանազան ձևի (նկ. 28). զնդանները մեկ կամ յերկու ծայրից ունենում են կոնաձև յելուն՝ զնդանի յեղյուր, վորը պայտի յեղբերը, պայտի ձեն ուղղելու համար, վորոնք պահանջվում են զարրնի աշխատանքի ընթացքում: Դարձնապայտառական աշխատանքների համար զործադրվող զնդանի կշեռը միջին հաշվով 45—50 կիլոդրամ պիտի լինի:

Պայտ պատրաստելու համար ամենից ավելի զործածական են՝ մի ծայրում (յեղյուր) կոնաձև յելուն և մյուսում՝ քիչ հաստություն (պոչ, կրունկ) ունեցող զնդանները:

Զնդանի բարձրությունն աթոռի հետ միասին՝ վորոշվում ե դարբնի հասակով: Նորմալ բարձրություն կհամարվի զնդանի այն

դրությունը, յերբ նրա յերեսի մակերեսությունը հավասար լինի դարբնի բութ մատի հիմքին (նկ. 29):

Մամլակով ողովում են գարբնի զործիքները փականագործական մշակման յենթարկելիս, գվեռնը ըլլ (շիպերը) պայտի մեջ պատելիս, պայտի սուր յեղբերը (բրոնզ) խարտոցելիս և այլն: Մամլակները լինում են աթոռային և զուգահեռական (նկ. 30, 31):



Նկ. 28. Զնդանի տարբեր ձևեր:

Աթոռային մամլակի շարժական շուրթն աղեղնաձև և բացվում գուգահեռական մամլակի շարժական շուրթը բացվելիս, անշարժ շուրթի նկատմամբ, զուգահեռ և մնում:



Նկ. 29. Զնդանի բարձրությունն աթոռի հետ:

Մամլակի շուրթերը զորվում են պողպատից, մխվում են ու ծրատվում (բրոնզ մակերեսի վրա զծային փորվածք անել), վորպես զի կանխվի մամլակի մեջ սեղմած առարկաների ոլկումը:

Հեղը խնամելու զործիքներ (նկ. 32): Կբակը՝ կանոնավար

խնամելու համար յուրաքանչյուր հնոցի մոտ պիտի լինեն մի քանի
անհրաժեշտ գործիքներ:

1. Ծերկաթե թիակ՝ ածուխը հնոցաբունը լցնելու համար. թիա-
կը պատրաստվում ե բարակ յերկաթե թիթեղից, կոթը շինվում և
առանձին, 12 մմ կլոր յերկաթից, վոր հետո զողվում և թիակին:

2. Անթրոց (կաչերգա)՝ հնոցաբունը կրակն ուղղելու և կույտ
անելու համար. պատրաստվում ե կլոր յերկաթից:


3. Մախաթ (ժիգալո)՝ փողանցքը մաքրելու և թխված ածուխի
կեղել ծակելու համար (շինվում ե կլոր յերկաթից):

4. Զողավիլ կեղեկվաթելերից՝ ածու-
խը թրջելու համար:

Հնոցի մոտ մշտապես ջուր պիտի
լինի՝ ածուխը թրջելու, կրակը հանդցը-
նելու և դարբնած իրերը սառեցնելու
համար, նույնպես և ավազ, վորը պա-
հանջվում և զողելու դեպքում:


ՅԵՐԹԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ

Դաշտային պայմաններում զորա-
մասերի ձիերը պայտավում են, կամ
տեղական բնակչության դարբնոցնե-
րում, կամ դաշտային յերթային դարբ-
նոցներում։ Յերթային դարբնոցները
տեղափոխվում են սայլերով, կամ
բենակիր թամբերի վրա (լեռնային
պայմաններում): Յերթային դարբ-
նոցն ունի փոխադրվող (շարժական)
հնոց, թեթևացր. ծ զնդան (նկ. 33),
մամլակ, գործիքներ (կոճն, ձեռնա-
մուրճ, ակռահատ (դարոժնիկ), ծակիչ (պրոբոյնիկ), ձողիկ (շպի-
լա) և այլն):




Նկ. 30. Սթոռային մամ-
լակ:

մուրճ, ակռահատ (դարոժնիկ), ծակիչ (պրոբոյնիկ), ձողիկ (շպի-
լա) և այլն):



Նկ. 31. Զուգահեռական մամլակ:


Զիերը պայտելու զործիքները դարբինը պայուսակով կրում ե
հետը։ Դաշտային պայմաններում ձիերը պայտելու դարբնոցը մեծ
մասամբ տեղավորվում է տնտեսական դարբնական արհեստանոցի
հետ։ Լեռնային պայմաններում դարբնոցը փոխադրվում է ձիու
նակիր թամբով, վորի յերկու կողմից յերկու հակ և ամրացվում։



Նկ. 32. Հնոցը խնամելու գործիքներ:

Ա—թիակ, Բ—ձողավիլ, Գ—անթրոց, Դ—մախաթ:

Մեկ հակում տեղավորում են՝ զնդանը, մամլակը և դարբնի
գործիքները, մյուսում՝ յերթային ծալվող հնոցը՝ հողմահարիչներ։



Նկ. 33. Թեթևացրած (սնամլա) զնդան։

ԴԱՐԲՆՈՑԱՅԻՆ ՆՅՈՒԹ

Դարբինը գործ ունենալով յերկաթի ու պողպատի հետ, պեսք և խմանա այդ նյութերի հատկությունը և կարողանա զանազանել նրանց վորակն ու տեսակները:

ՅԵՐԿԱԹ

Սովորական յերկաթը պարունակում է մինչև $0,2\%$ ածխածին-Յերկաթը պողպատից փափուկ է, լավ կուելի յի և ոժութած և հեշտ զոգվելու հատկությամբ, այսինքն համապատասխան չափով տաքացնելու դեպքում կարելի յի իրար միացնել յերկու, յերեք և ավելի կտորներ, ըստ վորում միացման տեղերը նկատելի չեն լինի: Յերկաթի վորակը վորոշվում է կոտրվածքի մակերեսով. Լավ կուելի յերկաթը կոտրվածքի վրա ունի թելիկային կամ ջլային կառուցվածք ու ատամնավոր մակերես, կոտրվածքի վրա հատիկավոր կառուցվածք ունեցող յերկաթը վատ և կովում: Մանր հատիկավոր մակերեսույն փայլը նշան է, վոր յերկաթն ամուր է, իր հատկություններով մոտ և պողպատին ու վատ կուելի յի:

Ցոսֆոր շատ պարունակներու դեպքում, յերկաթը կոտրվածքի վրա բյուրեղային կառուցվածք և ունենում, բյուրեղները տափակ թեփուկավոր, հատիկանման և բաց գույնի լինում. այդպիսի յերկաթը սառը վիճակում հեշտությամբ և կոտրվում (սառնաբեկ յերկաթ):

Յեթի յերկաթը շատ ծծումը և պարունակում, այդ դեպքում մինչև կարմիր գույնի շիկացումը տաքացնելիս ճնշքեր կտա, ըստ վորում, այդպիսի յերկաթը կոտրվածքի վրա նույնպես ոթելային կառուցվածք և ունենում, բայց նրա յերակները խոշոր և ավելի մուգ են լինում:

Այրված յերկաթը, վոր կոտրվածքի վրա տափակ հատիկներ և համարյա թերթային կառուցվածք ունի, ստաց լում և յերկար տաքացներու հետևանքով: Այլպիսի յերկաթը գործածության համար անպետք է:

Պողպատն ու յերկաթն արտաքին տեսքով նման են, և գործնականում դարբինը հաճախ դժվարանում և նրանց իրարից տարբերել: Յերկաթն ու պողպատը ճանաչելու համար հետեւյալ կերպ են վարդում: Հետազոտվող մետաղի ձողը տաքացնում են մինչև կարմերու աստիճանը, ծայրը կոնով բարակացնում են և ապա գցում սառը ջրի: մեջ: Յերկաթը ջրի մեջ դցելուց հետո իր հատկությունները չի փո-

խում: Նա փափուկ և մառա և ձեռնամուրճով հարվածելիս բարակացրած ծայրը կուանա, իսկ պողպատը կմխվի, ըստ վարում վերոհիշալ ձեռով ձգած, սառած ծայրին ձեռքի մուրճով հարվածելիս՝ կկոտրվի:

Վաճառվող յերկաթը լինում և յերեք հիմնական տեսակի 1) տեսակավոր, 2) թերթային, 3) ձևակոր:

Տեսակ ավոր յերկաթն իր հերթին, հատվածքով բաժանվում և շերտավոր, քառակուսի և կլոր տեսակների:

Եերտավոր յերկաթն ունի $4-50$ մմ հաստություն— $12-200$ մմ լայնության դեպքում. 4 մմ-ից պակաս հաստության դեպքում նրան անվանում են ողացին յերկաթ: $10-12$ մմ հաստության և $22-25$ մմ լայնության շերտավոր յերկաթը կոչվում է պայտի յերկաթ:

Շերտավոր յերկաթը նշվում է մոտավորապես այսպես՝ $\times 25 \times 12$ մմ (առաջին թիվը ցույց է տալիս լայնությունը, իսկ յերկրորդը՝ հաստությունը):

Բառակ ուռուի յերկաթը հատվածքով լինում է 8-ից մինչև 60 մմ 8 մմ-ից պակաս հաստության յերկաթը պատրաստվում է կարված շերտավոր յերկաթից և կոչվում է կտրած յերկաթ:

Կլոր յերկաթն ունենում է 8-ից մինչև 150 մմ տրամագիծ:

Թերթային յերկաթը, նայած նրա գործածությանը, տարբեր անուններ ունի, այն և՝ կաթսայի, տանիքի, փականի, նավի և զրահի:

Զեփավոր յերկաթի զիսավոր տեսակներն են՝ անկյունավոր, խարանային (լայնակի հատվածքի մակերեսը հիշեցնում է T տառը), յերկիսարանային (հատվածքի մակերեսը կրկնակի է T տառի ձեռն ունի) և այլն:

ՊՈՂԱՎՈՐ

Պողպատի մեջ պարունակվում է $0,2-ից$ մինչև $1,5\%$ ածխածին: Նա կարող է «մխվել» (ավելի յի ամբանում), յեթե տաքացվի և բագ սառեցվի: Իր ամրության շնորհիվ պողպատն ավելի դժվար և զարբնվում, քան յերկաթը: Պողպատը կարելի յի փափկացնել, յեթե տաքացվի մինչև մուգ կարմիր գույնը և մնա, վոր դանդաղ սառչի: այն գործողությունը կոչվում է «այրում»:

Պողպատը, ինչպես և յերկաթը, զանազանվում են հատվածքով:

Պողպատը լինում և շերտային կամ տափակ, քառակուսի և կլոր: Պողպատից պատրաստում են պայտելու աքցաններ, սմբակի դանակներ, շավլահատներ, հատիչներ, ծակիչներ, պայտելու մուրճեր և ձեռնամուրճեր:

ԴԱՐԲՆՈՑԻՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ

Մշակվող մետաղները (յերկաթ, պողպատ) տաքացնելու համար դարբնոցում գործադրվում են փայտածուխ և քարածուխ:

Փայտածուխն ստացվում է փայտն այրելիս ողի մուտքն անբավար (պակաս) թողնելուց: Փայտի ածխացումը կատարվում է այսպես. առանձին գերանները դարսում են փոսի մեջ և հողով ծածկում: Փոսի ստորին մասում անցք են շինում, վորի՝ մեջ կը վառում են այն հաշվով. վոր այրումը դանդաղ կատարվի:

Լավագույն փայտածուխն ստացվում է ամուր տեսակի (կաղնի, կեչի և այլն) ծառերի բներից: Ածխի համար այրելու ծառերը փտած չպետք է լինեն, վորովհետև փտած բների մանրունքն ավելացնում է ածխի մոխրի քանակը:

Քարածուխը դարբնա-պայտառական աշխատանքների համար փայտածուխից ավելի ճեռնտու յի, այրվելու ժամանակ նա կեղեւ և առաջացնում, վորը հնոցաբնում ջերմություն է պահպանում: Լավ տեսակ է համարվում լվացած «ընկուզային» ածուխը: Նա կազմված է ամուր, ուժ գույնի, միատեսակ մեծության, մանր ($1-1\frac{1}{2}$ ամ) կտորներից:

Հողոտ, թեթև և մանր ածուխը քիչ է պետք գալիս. այդպիսի ածուխը շատ ծծումք է պարունակում, կեղեւ չի կապում, իսկ այրվելուց շատ խարամ է առաջացնում, Ածխի վատ տեսակն իմացվում է ծծմբի բնորոշ հոտով: Ծծմբի հոտն ավելի ուժեղ է զգացվում, յերբ շիկացած ածուխը ջրով թրջում են:

Կոկսն ստացվում է քարածուխից, հատուկ (կոկսացնող) վառարաններում, կամ ստացվում է վորպես յերկրորդական արդյունք, քարածուխից լրացածու գաղ պատրաստելու ժամանակ: Կոկսով ոգտվում են բարձր ջերմաստիճանի տաքուցում պահանջող դարբնական աշխատանքներ կատարելիս:

ԱԾՈՒԽ ԾԱԽՍԵԼՈՒ ՆՈՐՄԱՆ

Նոր յերկաթից 16 կգր պայտ պատրաստելու համար ծախսվում է 24-ից մինչև 30 կլգ քարածուխ, նայած ածխի վորակին և դարբնի հմտությանը:


ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՊԱՅՏԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՈՒՆԸ

Պայտերը պատրաստվում էն պայտ արտադրող գործարաններում գործարանային մեքենայական ձևով և ձեռքով: Գործարաններում

պայտ պատրաստելիս յերկաթը պայտի մեծության չափով բաժանվում է ձողերի: Կտրափած ձողերի կապոցը, քանակով մոտ 1000 հատ, դրվում է հնոցի մեջ և տաքացվում. այնուհետև տաքացրած ձողը հաջորդաբար անցնում է մի շարք դազգյաճներով, վորտեղ ձողը ձգվում է, ծայրերը կտրվում են և պայտի ձևով կուցվում. այնուհետև ձողի վրա հատում են ակոսը (գարոժկա), նոտեցնում ըուխտովկան (պայտի ներբանային մակերեսի ներքին յեղերի բարակացումը), նշում են մեխերի անցքերը և, վերջապես, սառը վիճակում հանում են գգեռների անցքերը, ծակում են մեխանցքները և ավարտում պայտի շինելը: Պայտի գործարանային ձևի արտադրությունն ապահովում է պայտի լավ վորակը և եթանացնում արժեքը: ԽՍՀՄ-ում սահմանված է պայտերի համամիութենական ստանդարտ (ԽՍՀ-327, 1928 թ.), վորտեղ ցույց են տրված պայտերի չափերն ու ձեռքը, պայտային յերկաթի համապատասխան վորակը, պայտեր ընդունելու պայմանները և այլն:

ՊԱՅՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ (Նկ. 34 և 35)

Նայած իրենց նշանակությանը պայտերը լինում են՝ հեծնելու և լծելու (գումակային և հրետանային) ծիերի համար: Հեծնելու



Նկ. 34. Առջևի պայտի զծաղիրը (տառերի նշանակությունը տես 1-ին աղյուսակում):

Ա դ յ ո ւ -
Պայտերի չափերն (բա
(Չափերը ցույց են աված

Պայտի համարները	1		2		2,5		3	
	Առջև- դի	Յետի- դի	Առջև- դի	Յետի- դի	Առջև- դի	Յետի- դի	Առջև- դի	Յետի- դի
Պայտի յերկարությունը վահանիկի մեջտեղից մին- չև ճյուղերի ծայրերը Ա.	122,1	119,8	130,1	130,5	136,7	140,8	142,3	142,6
Պայտի մեջտեղի արտաքին կողե- րի մեջի տարածությունը կլորացման ամենալայն աստված Բ	105	105	114	114	118	118	122	122
Պայտի ճյուղերի ծայրե- րի մեջտեղի տարածու- թյունը Գ	47	54	52	58	58	62	63	66
Վահանիկը մինչև ճյուղե- րի ծայրերը միացնող գծի տարածությունը Դ	120	117	128	128	134	134	139	139
Պայտի լայնությունը վա- հանիկի մոտ, առշեկի մա- ստված Ե	22	22	24	24	24	24	25	25
Պայտի լայնությունը ճյու- ղերի մեջտեղում Զ	20	20	20	20	20	20	21	21
Պայտի լայնությունը ճյու- ղերի վրա, զգեսային անց- ուի մոտ Ե	22	22	22	22	22	22	22	22
Աղջևիկ գղեսի անցքի ենարքնից մինչև արտա- մին բոլորը Լ	10	10	11	11	11	11	12	12
Երնկային գղեսի անցքի ենարքնից մինչև արտա- մին ճյուղերի ծայրե- րի ծայրերը Թ	20	20	20	20	20	20	20	20
Աղջիկ մեխանացքերի միջև եղած տարածությունը Ժ. Եկեղին մեխանացքից մին- չև ճյուղի ծայրերի տարա- ծությունը Ի	44	40	50	46	51	48	52	50
Աղջիկ մեխանացքից մինչև ըստաքին բոլորը Լ	56	56	60	60	62	62	65	65
Երնկային մեխանացքից մինչև ըստաքին բոլորը Լ	7	7	7	7	8	8	8	8
Այստի հաստությունը Եկեղակոսի լայնությունը Եկեղակոսի խորությունը զեսպի անցքի պատուակա- նին փորակը	4,5	4,5	4,5	4,5	5,5	5,5	5,5	5,5
Այստի հաստությունը Եկեղակոսի լայնությունը Եկեղակոսի խորությունը զեսպի անցքի պատուակա- նին փորակը	11	11	11	11	11	11	11	11
					7 — ի ց զ ո չ			
					5 — ի ց զ ո չ			
					½" (Վերջորադի սկսեմով դյույմանոց			
Եկեղանցքերի քանակը .	3	3	3	3	3	3	3	3
ծու ձիու պայտի կշիռը .	8	8	8	8	8	8	8	8
սելու ձիու պայտի կշիռը .	355	355	412	395	448	432	485	470
սելու ձիու պայտի կշիռը .	372	372	425	408	460	445	498	483

Ա ա կ
ՌՍՏ 327 ստանդարտի
միլիոներով, քաշը՝ գրամներով,

առ ու ակռ համաձայն ՈՍՏ 33 ա


3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	+1
8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	+8%
505	497	525	525	557	545	590	565	635	620	685	680	650	+5%
518	510	538	538	570	568	603	578	648	633	760	650	650	+5%

ձիերի պայտերը պատրաստվում են յերկու գզեռով՝ յուշաքանչյուր ճյուղի ծայրին մի հատ. լծի ձիու պայտն ունենում ե 3 կամ 4 գզեռ՝ յուրաքանչյուր ճյուղի ծայրին մի հատ, և մեկ կամ յերկու գզեռ պայտի առջերի բռնչացին մասում։ Մեքենայական պայտերի վրա համապատասխան քանակով գզեռների անցքեր են շինդում։

Սմբակի ներքանային յեղի ձեի համեմատ առջեի վոտների պայտն ավելի կլոր ձեին և մոտենում և ճյուղերի միջի տրամագիծն ավելի մեծ և յետեսի վոտների համար պատրաստված պայտը մոտենում և ձգածիրին, իսկ տրամագիծն ավելի մեծ և ճյուղերի յետեսի մեկ յերրորդականի ոկղուում։ Ինչպես առջեի, նույնպես և յետեսի պայտերի, ներսի ճյուղը պետք և մի քիչ ուղիղ լինի, իսկ արտաքինը՝ ավելի կյորագած։

Բատ մեծության մեքենայական պայտերը պատրաստվում են տասը չափի՝ 1, 2, 2,5, 3, 3,5, 4, 4,5, 5, 6, 7. առջևի և յետևի վոր-ների համար յուրաքանչյուր համարից առանձին:

Պայտի առանձին մասերի հիմնական չափումները, նրանց հարաբերությունն ու քաշը ցույց եւ տված 1-ին աղյուսակում և 34 ու 35 նկարներում:



ՆԿԱ 35. Յետևի պայտի գծագիրը (տառերի նշանակությունը տես 1-ին աղյուսակում):

Պայտն ունի շ ձյուղ—դրսի և ներսի. յերկու մակերես՝ վերին,
վոր կպչում ե ոմբակին, և ստորին, վոր դարձված ե գեղի գետին.
յերկու կող (յեղը)՝ ներսի և դրսի: Պայտի առջևի մասը կոչվում է
բռնչային, յետևինը՝ կրնկային: Պայտի մակերեսը պիտի լինի առանց
ճեղքերի, թեփու կների այրվածքների և առանց խորը պոկվող փշրունք-
ների ու ժանդի: Պայտի վերին մակերեսի արտաքին յեղին կպչում
ե յեղջերալին պատի ներբանի մասը, պայտակ գիծը, և մոտ 3 մի-
լիմետրի չափ յեղջերային ներբանը. ուստի պայտի զերին մակերեսը
պետք ե հարթ դարբնված լինի (առանց փոս տեղերի) և ընկած՝
մեկ հարթության վրա. հարթությունից շեղումներ թույլատրվում
ե 0,75 մմ ից վոչ ավելի: Պայտի վերին մակերեսի ներսի յեղը մուր-
ճով նռտեցվում ե (բուխտովկա), փորը հեռացնում ե ներբանը պայ-
տից և, այդպիսով, սմբակը պաշտպանում ձմռտվելուց (նամինկա):
Համապատասխան բուխտովկան առանձնապես անհրաժեշտ է տափակ և
լիքը սմբակները պայտելիս: Պայտի ծայրին բուխտովկա չեն անում.
բուխտովկան պայտի ճյուղերի ծայրերին չպիտի հասնի. № 1, 2, 2,5 3,5
պայտերի վրա ծայրերից պիտի լինի 30—40, № 4, 4,5, 5, 6, 7
պայտերի վրա՝ 40—50 միլիմետր տարածության վրա: Բուխտովկան
պիտի գնա մոտավորապես մինչեւ պայտի լայնության կեսը:

Պայտի ստորին մակերեսի վրա անց ե կացվում ակող (գարոֆլա), վորը պայտի և գետնի միջև կպչունակություն ե ստեղծում (առանց դպեռի հարթ պայտով պայտելու դեպքում), և ծառայում ե մեխերի գլուխները տեղափորելու համար։ Ակոսի խորությունը պիտի լինի 5 մմ ~ից վոչ ավելի, իսկ լայնությունը՝ 7 մմ ~ից վոչ շատ։

Ակոսն անց ե կացվում պայտի ճյուղերի վրա, համարյա բուխ-
առվկայի յերկարությամբ, նա ընդհատվում ե բռնիչի մասում և վեր-
ջանում ե կրնկային մեխանիզմի յետնվում՝ 12—20 մմ տարածու-
թյան վրա:

Մեխանցքերի քանակը սովորաբար 8 հատ ե (պայտի յուրաքանչյուր ճյուղի վրա 4-ական), վորոնք անց են կացվում պայտի արտաքին յեղրից վորոշ չափով գեպի ներս, ըստ վորում՝ պայտի բանիչի մասում, վորտեղ յեղձերային պատճ ավելի հաստ են քան կրունկի մասում, մեխանցքերն արվում են յեղրից ավելի հեռու (տես աղյուսակ 1): Փոքր չափի պայտերի մեխանցքերի քանակը կարելի յե պականեցնել մինչև 6-ի: Մեխերի անցքերը պետք ե դասավորված լինեն իրարից հավասար հեռավորության վրա՝ աղեղնաձև, վոչ բեկյալ գծի վրա և պատրաստված լինի այնպես, վոր անցքի մուտքի սոորին մասը համապատասխանի մեխի գլխիկին, իսկ յելքի վերին մասը՝ մեխի պարանոցին: Քանի վոր սմբակի յեղջրային պատի թեքությունը նրա զանազան մասերում՝ մեխատեսակ չե, մեխի անցքերը

գիտք ե արվեն հետևյալ ուղղություններով. տուաջին և յերկրորդ բռնիչային անցքերը մի քիչ թեք դեպի ներս, յերրորդը՝ պակաս թեռթությամբ, համարյա ուղղաձիգ և, վերջապես, վերջին կրնկային անցքը՝ ուղղաձիգ կամ փոքր ինչ դեպի դուրս:

Պայտի կողերը (յեղբերը) պետք ե դարբնված լինեն հավասար: Արտաքին կողի վրա վորեն անհարթություն (ոտղուլինա) չի թույլատրվում: Կողը պետք ե ունենա փոքր թեքություն (գեղի պայտի տակը), վորպեսզի պաշտպանի ձիուն պայտով վերավորվելուց (թորուխից): Պայտի առջեկ մասի արտաքին յեղբից բռնչային մասում ձգվում ե յերկաթե բարակ թիթեղ՝ վահանիկ (ատվարտ): Վահանիկը հեշտացնում ե պայտի հարմարեցումը, ուժեղացնում ե պայտման ամբությունը, արդելում պայտի տեղաշարժումն ընթացքի ժամանակ և մասամբ ամբակային պատի առջեկ մակերեսը պաշտպանում հարվածներից:


Աղյուսակ 2

Պայտերի վահանիկի չափերը (1928 թ. ԹՍՏ-327 սահմանադաշտ)

Պայտերի համարները	1, 2, 2,5, 3, 3,5	4, 4,5, 5, 6, 7+
Չափերը		
Բարձրությունը	10—15	10—15
Հաստությունը հիմքում	1,5—2,5	1,5—2,5
Հաստությունը վերեւում	0,25—1,0	0,25—1,0
Լայնությունը հիմքում	22—28	28—33

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՅՏ (Նկ. 36)

Մեր Միության լեռնային շրջաններում գործադրվում են այսպես կոչված արեվելյան պայտեր, վորոնք ձգածն թիթեղներ



Նկ. 36. Արեվելյան պայտեր:

են հաստացրած արտաքին յեղբով. մեջտեղում ունեն կոր կամ ձվաձև անցք և յուրաքանչյուր կողմում՝ 3—4 մեխանցք, Մեխերը կարծ են, ձուլը կլոր, կամ քառանիստ ու սուր զլիսրկներ ունեն:


ՊԱՅՏԻ ԳԶԵՌՆԵՐ (Շիդ)

Զիու վոտը գետնին ավելի ամուր բռնելու համար, վոր առանձնապես կարեւոր ե սառնամանիքների ժամանակ, պայտի վրա զգեռներ են ամբացնում: Գզեռները պայտը պաշտպանում են նաև մաշվելուց:

Գզեռները լինում են մշտական և հանովի (պտուտակային, դնովի): Ամառը պայտելիս գործադրվում են բութ գղեռներ, իսկ ձմեռը՝ սուր: Նստելու ձիերը ամառը կարող են պայտվել հարթպայտով (առանց զգեռի): Հանովի զգեռները շինվում են մեխանիկական ձեռվ՝ պողպատի հատուկ տեսակից:

Գետնի հետ շփվող հանովի զգեռի ստորին մասը կոչվում է պակ: Գզեռի այն մասը, վոր հազցվում ե պայտի պտուտակային ակոսին (նարեղկա), կամ դրվում ե անցքի մեջ, կոչվում ե զգեռի պոչ: Գզեռի պոչի և պակի միացման տեղը կոչվում ե պարանց: Պտուտակային գզեռը պայտին ավելի պինդ ամրացնելու համար պայտի ստորին մասի գղեռի անցքի շուրջը, զգեռի պարանոցի համար, փոքրիկ փոս ե արվում (ուղենկովկա): Հանովի պտուտակային զգեռի առավելությունն այն ե, վոր նրանց մաշվելու դեպքում կարելի յե փոխել հենց պայտած սմբակի վրա, այն ինչ մշտական զգեռի մաշվելու դեպքում պետք ե վերապայտել:


Մեխանիկական արտադրության զգեռները (Նկ. 37) շինվում են սովորական (սուր, բութ), «Նեյս» տիպի, վորոնց լայնակի կտրվածքը և տառի տեսքը ունի և կոնաձև ե: «Նեյս» տիպի զգեռները շինվում են յերկու համարի, № 6 և № 8: № 6 զգեռների ընդհանուր յերկարությունը 24 մմ ե, իսկ № 8ը՝ 28 մմ. Նստելու ձիու մեկ հատ բութ զգեռի կշիռը 27—28 գրամ ե, իսկ լծկան ձիու պայտագեռի քաշը՝ 44—45 գրամ: Հեծնելու ձիու պայտի մի հատ բութ զգեռի քաշը 26—28 գրամ ե, իսկ լծկան ձիունը՝ 43—45 գրամ:



Նկ. 37. Պտուտակային զգեռներ:

Համախ ձմեռը պայտելու համար գործադրվում են պատկի մեջտեղը պողպատե առանցք և արտաքին կողմն ավելի փափուկ թաղանթ ունեցող կոնաձև զգեստներ. արտաքին թաղանթը պողպատե առանցքից ավելի շատ և մաշվում և այդպիսով գերու սրբում են:

Եինում են նաև ուրիշ ձեմ գղեռներ՝ գլանաձև, դրաձև և այլն: Պտուտակային գղեռները պայտած սմբակին հազցնելու և հանելու համար գործադրվում են գղեռի բանալի և պայտի ճյուղը պահելու թաթ (նկ. 38):



Նկ. 38. Պայտած սմբակին գղեռ հազցնելն ու հանելը՝ բանալու և թաթի ոգնությամբ:

Գղեռի հագցրած մասը չպետք ե դուրս ցցվի պայտի վերին մակերեսի վրա, հակառակ դեպքում գղեռի պոչի ծայրը կճնշի սմբակի լրնկի յեղջերին: Գղեռի պսակն ընդուալ պետք և կաչի պայտի ստորին մակերեսին, կազմելով պայտի հետ վորպես մի ամբողջություն:

ՊԱՅՏԻ ՄԵԽԵՐԸ

Պայտի մեխերը (նկ. 39) պատրաստվում են մեքենայական ձեռվով յերկաթի հատուկ տեսակից (մեխի ժապավեն): Մեխերը ըստ չափերի լինում են՝ 5, 6, 7, 8 և 9 համարի: Մեխի վերին մասը կոչվում ե գլխիկ, գլխիկից սեղիկին անցման տեղը կոչվում ե վզիկ: Պայտամեխի սուր ծայրի վրա կա թեքություն, վոր կոչվում ե կովածք (նակլյառպկա), վորը սմբակի յեղջերային պատի մեջ խփելու ժամանակ մեխին տալիս և համապատասխան ուղղություն: № 5 մեխի յերկարությունը, գլխիկի հետ միասին՝ 51,5 մմ է: Համարը հաջորդաբարանալով՝ մեխերի յերկարությունը համապատասխանութեն ավելանում է 4—5 միլիմետրով:

№ 5 մեխի 1000 հատի քաշը հավասար է 2,47—2,78 կգ.

№ 6 » » » » » 3,24—3,6 կգ.

№ 7 » » » » » 3,92—4,4 կգ.

№ 8 մեխի 1000 հատի քաշը հավասար է 4,41—4,96 կգ.

№ 9 » » » » » 5,88—6,27 կգ:

№ 5 մեխի մեկ կելուքը պարունակում է 360—405 հատ:


№ 6 » » » » » 278—308 հատ:

№ 7 » » » » » 227—254 հատ:

№ 8 » » » » » 202—226 հատ:

և № 9 » » » » » 158—169 հատ:

Մեխերը պիտի լինեն վողորկ, ունենան պարզ արտահայտված կովածք (նակլյառպկա). ձեղքեր, ճաքեր, թեփուկներ, ցլեղներ, ծայրերը



Նկ. 39. Պայտամեխեր:


բութ և ժանգուած չպետք ե լինեն: Մեխերը պետք ե գիմանան ծովելու հետևյալ փորձին, յեթե սառը վիճակում կլորաշուրթ ունելիքով (սեղմելով մեխի յերկարության $\frac{1}{3}$ -ականում սուր ծայրի կողմցից) և անգամ այս ու այն կողմը 180° ծունք, մեխը չպիտի ճաքի և կոտրվի, ըստ վորում մեխի 90°-ի առաջին ծովածքը հաշվի չի առնվազում:

ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

(նկ. 40)

Ձեռնամուրնը պատրաստվում է կլոր 48 միլիմետրանոց գործիքացու հատուկ պողպատից կամ յերկաթից. վերջին դեպքում ձեռ-

Նամուրճի զարկանները պողպատում են: Զեռնամուրճերը տալքեր
ձեփ յեն լինում (տակառածեն, քառակուսի կողքերը զեհավոր և այլն):
Զեռնամուրճի մեկ զարկանը հարթ պիտի լինի, իսկ յուսն ուսուցիկ:



Նկ. 40. Պայտ պատրաստելու գործիքներ:

Ա—կռան (կուվարդա), Բ—ձեռքի աքցան, Գ—հնոցի աքցան (կլեշի),
Դ—սոսրահարթիչ (նիժնիկ), Ե—յերահարթիչ (վերինիկ), Զ—հարթիչ
(գլազիկա), Է, Ը, Ը—ձեռնամուրճեր (ռուչնիկներ), Թ—ակոսահատ
(գարոժնիկ), Ժ—հատիչ (զուբիլո), Խ, Լ—ծակիչներ (պրաբոյնիկ),
Կ, Ծ—ձողիկներ (շիպիկա), Կ, Հ—գոլորաններ (գարատոկ),
Զ—նշիչ (միուչիկ):

Բուխտովկան նստեցնելու համար, ձեռնամուրճի քաշը լինում է
0,9—1,5 կգ, կոթի յերկարությունը՝ 350 միլիմետր, կոթի արամա-
գիծը՝ 30×25 մմ: Զեռնամուրճը սեպով լավ ամրացված պիտի
լինի:

Պողպատե մուրեն, կամ կոան (կուվարդա). կշիռը՝ 4—6 կգ, կո-
թի յերկարությունը՝ մոտ 800 մմ:

Զեռքի աքցան (կլեշի), ծառայում ե կոելու ժամանակ յերկա-
թի կտորը բռնելու համար, պայտ պատրաստելու համար աքցանի
շուրջիրը տափակ պիտի լինեն, կշիռը 900 գր, յերկարությունը՝
420 մմ: Աքցանը պատրաստվում ե 24×12 միլիմետրանոց շերտա-
վոր յերկաթից:

Հեռցի աքցանը ձեռքի աքցանից տարբերվում ե նրանով, վոր
նրա կոթը յերկար ե, իսկ շուրջերն ավելի մեծ: ծառայում ե յեր-
կաթի հնոցի մեջ դնելու համար:

Սկսահատը պատրաստվում ե 28—30 քառ. միլիմետրանոց
քառակուսի պողպատից և ծառայում ե պայտերի վրա ակոս (գարոժ-
կա) հատելու համար: Ակոսահատը կոթում են այնպես, ինչպես և
բոլոր գործիքները, վորոնցով աշխատելիս կոանով հարվածում են:
այսինքն կոթը սեպով չի ամրացվում: Ակոսահատի քաշը մոտ
400—500 գր ե, կոթի յերկարությունը՝ 380 մմ:

Մեխանցիկի ծակիչը պատրաստվում ե 28—30 միլիմետրանոց
քառակուսի պողպատից, քաշը՝ 400—450 գր, կոթի յերկարությունը՝
400 մմ: Պայտ պատրաստելու գործիքների թվում ցանկալի յե մե-
խանցքերի յերկուծակիչ ունենալ (№ 1 և № 2), մեկը (№ 1)^o իր քա-
ռակուսի ավելի բարակ ծայրով համապատասխանում ե մեխի պա-
րանոցին, մյուսը (№ 2)^o բարի ե և չափով համապատասխանում ե
մեխի գլխին:

Մեխի անցիերը մաքրելու չեվ ըսկելու ձողիկներ (օպիկաներ),
ծակիչների պես, ցանկալի յե յերկու չափի ունենալ (№ 1 և № 2):
300 մմ յերկարությամբ № 1 ձողիկը կիսակլոր, բարակ և կոնաձեռ,
ձողիկ № 2-ը նույն յերկարությունն (300 մմ) ու ձեռ ունի ինչպես
առաջինը, բայց ծայրն ավելի լայն ու բութ եւ: Ձողիկներ կարելի յե
պատրաստել մաշված խարտոցներից, 384 միլիմետրանոց խարտոցից
կարելի յե շինել 2—3 ձողիկ:

Երկար կտելու տափակ հատիչը (զուբիլո) պատրաստվում ե
30 միլիմետրանոց քառակուսի պողպատից. կշիռը 500 գր ե:

Պայտի ծայրերը կտելու կիսակլոր հատիչը պատրաստվում ե
նույնպես 30 միլիմետրանոց քառակուսի պողպատից. քաշը 500 գր-
րամ ե:

Պայտի զգեստային անցիերը ծակիչը կլոր ծակիչը (պրաբոյնիկ):


պատրաստվում և 30 միլիմետրանոց կլոր պողպատից. կշիռը 450 գրամ է:

Գոյնութիւն անցքերը հղկելու պողպատե տևկիչը (ապրավկա) պատրաստվում և անպետք ձողիկներից. շակիչի տրամագիծը 9—10 միլիմետր է:

ՊԱՅՏԱՌԻՆ ՊԱՅՏԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼԸ (ԱԿԻ-Ի ՄԵԹՈԴԸ)

Պայտեր պատրաստելու գործնական ունակություններն ու ձեմբերն ավելի հեշտ և արագ յուրացնելու նպատակով, Աշխատանքի կենացքնական ինստիտուտը (ԱԿԻ), ուսուցման հատուկ մեթոդի լայնով, մշակել ե 14 փորձնական վարժություն:

Այդ մեթոդիկայով սկզբում մի շարք նախապատրաստական փորձնական վարժություններ և անցկացվում: Այդ փորձնական վարժությունների նպատակն ե մշակել՝ աշխատելու ժամանակ դարձնի ճիշտ կեցվածքը, գործիքի ուղիղ բռնելը, հարվածային (մուրճով) շարժումների ժամանակ ուժն ու տեմպը, յերկու ձեռքով, այլև դարձնի ու կրանսհարի միասին աշխատելու շարժումների համաձայնեցումը: Այս մեթոդի հաջող գործադրության համար պահանջվում են արտադրական խիստ դիսցիլինա, ժամանակի հաշվառում, աշխատելու տեղի ընտրություն ու սարքավորում, պարապմունքների ճիշտ զեկավաբություն և կատարվելիք վարժությունների հսկողություն: Ուսուցման ժամանակ հաշվի պիտի առնվի նաև ոռվորողի ֆիզիկական հատկությունները:



Նկ. 41. Դաստակի թափ փայտե ձողով, առանց մատները բանալու (յելման գրությունը, դաստակի շարժումը դեպի վեր, դաստակի շարժումը դեպի վար):

Ա-ին վարժություն՝ գաստակային բափ փայտե ձողով, առանց մատները բանալու (նկ. 41):

Այս վարժության նպատակն ե՝ զարգացնել աջ ձեռքի դաստակը և սովորեցնել գործիքի ճիշտ բռնելը:

Մեկ մետր յերկարություն և 2—3 սմ տրամագիծ ունեցող փայտե ձողը բռնում են մեջտեղից, աջ ձեռքի բռլոր մատներով, ըստ վորում բռնել մատը դնում են յուցամատի վրա: Զերքը հորիզոնական դրության մեջ պահելով, դաստակը լրիվ կծկում են դեպի վեր, ապա դեպի ցած (վար) մինչև ծայրահեղ աստիճանը:

Ա-ո վարժությունը կատարելիս իրանի դրությունը ուղիղ է, ձախ ձեռքն ազատ կախ ընկած:

Ժամանակին հաշվարկը.—վարժությանը տրվում ե 2 ժամ, յուրաքանչյուր մեկ բուք աշխատանքից հետո՝ մեկ բուք հանդիսավորությունը:

Վարժությունը (արագության չափը) հետզհետե արագանում և և մեկ բուքի յում համար 50 շարժման:

2-րդ վարժություն՝ կորավոր փայտե կոնդին գաստակային հարված (450 գր) մուրճով (նկ. 42 և 43):

Վարժության նպատակն ե՝ զարգացնել դաստակի հարվածային շարժումը, յուրացնել մուրճի ճիշտ բռնելը և իրանի ուղիղ կեցվածքը:

Փայտե կոճղը տեղակայվում է, իրանի ուղիղ կեցվածքի ժամանակ, կախ ընկած ձեռքի ափի մեջտեղի բարձրության հավասար:

Իրանի դրությունը, բանվորի կանգնելու տեղում (վրան կանգնելու կաղապարի վրա)՝ մուրճի կոթի յերկարության հեռավորությամբ և, աջ վուր մի փոքր առաջ ու դապի աջ դրված, իրանը կիսաշրջանով թեքված դեպի ձախ:



Նկ. 42. Փայտե կոճղին դաստակային հարված մուրճով (յելման դրություն):



Նկ. 43. Փայտե կոճղին դաստակային հարված մուրճով (հարված):

Սովորողը ձախ ձեռքով բռնում է կոճղի կոթը, աջով՝ մուրճի կոթի ծայրը, վերջինից յերկու սանտիմետր դեպի մուրճը։ Զեռքի դաստակը բարձրացնելով հարվածելու համար՝ մուրճը յետ և քաշվում մինչև ծայրահեղ առտիճանը։

Հարվածային շարժումը յեռանդուն ու արագ պիտի լինի։ Մատների մկանները չպիտի լարվեն։ Տեմպը՝ մեկ րոպեյում 30—50 հարված։ Ժամանակի հաշվարկը. վարժությանը՝ 2 ժամ, յուրաքանչյուր 2 րոպե աշխատանքից հետո մեկ րոպե հանդիսատ։



Նկ. 44. Փայտե կոճղին արմունկային հարված մուրճով։

4-րդ յեզ 5-րդ վարժություններ՝ ուսային հարված մուրճով (1 200 գր) փայտե կոճղին յեզ յերկարե փոքր զնզանին (նկ. 45)։

Կարժության նպատակն ե՝ զարգացնել արմունկի հարվածային շարժումը, յուրացնել մուրճը ուղիղ բռնելը և իրանի ուղիղ դրվածքը։

Աջ ձեռքը, թափի ժամանակ, արմունկով աղատ կպչում և աջ կողքին՝ արմունկի և դաստակի հողերում ձեռքը ծալվում և մինչև ծայրահեղ առտիճանը, ընդգորում մուրճին տրվում և ամենամեծ բարձրությունը։ Մատները չեն բացվում։ Հարվածներին ուսը չեն մասնակցում։ Տեմպը՝ նույնն և, ինչ վոր 2-րդ վարժության ժամանակ։

4-րդ յեզ 5-րդ վարժություններ՝ ուսային հարված մուրճով (1 200 գր) փայտե կոճղին յեզ յերկարե փոքր զնզանին (նկ. 45)։ Այս վարժությունների նպատակն ե՝ զարգացնել ձեռնամուրճով կատարելու լրիվ բանվորական հարվածը։ Այս վարժությունների




Նկ. 45. Ուսային հարված մուրճով։

Ա. Փայտե կոճղին, Բ. յերկարե փոքր զնզանին։

Ժամանակ ձեռնամուրճը բռնվում է կոթի ծայրից 10 սանտիմետր հեռավորության վրա։ Ձեռքը վեր և բարձրացվում և հարվածը կատարվում և ուղիղ անկյունով։ Տեմպը՝ մեկ րոպեյում 30—45—60 հարված։ Ժամանակի հաշվարկը նույնն և, ինչ վոր նախորդ վարժության մեջ։

Երգ վարժություն՝ մուրճով (1 200 գր.) ուսային հարված յերկարե փոքր զնզանին տարբեր հարությունների վրա զեզի իրեն, իրենց զեզի զենը, ձախից յեզ աչից (նկ. 46):

Այս վարժության նպատակն ե' զարգացնել ուսի լրիվ թափը և հարվածի շեշտակի փուլ փոխարքեր հարթություններով: Ժամանակի հաշվարկը՝ վարժությանը տրվում ե մեկ ժամ,



Նկ. 46. Ուսային հարված վերեից, յերկաթե փոքր զնզանին մուրճով տարբեր հարթություններով:

Ա—զեզի իրեն, Բ—իրենից զեզի զենը, Գ—աչից և Դ—ձախից:

յուրաքանչյուր 2 րոպեյից հետո մեկ րոպե հանդիսու: Տեմպը՝ մեկ րոպեյում 45—60 հարված:

Երգ վարժություն՝ ձախ ձեռքի զաստակով փայտե բառակուսի ձողը 90° իրենից զեզի զենը յեզ զեզի իրեն պտտելը (նկ. 47): Վարժության նպատակն ե' զարգացնել զաստակի պտուտային

շարժումը: Այս վարժությունը կատարելու համար փայտե ձողի ծայրից այնպես են բռնում, վոր բութ մատն ընկնի ձողի վեհի լայնությամբ: Զողը զեզի իրեն և իրենից զեզի դենը պտտելիս պիտք ե կատարել հետեւյալը՝

ա) ձողը կոճղին ամուր չռեղմել,


բ) պտտելիս հետեւ, վոր ձողի զեհերը բոլոր կետերով կպչեն կոճղի մակերեսին (չըարձրանան կամ չիջնեն),

գ) պտտումը կատարել վորոշ տեղում և վոչ ինքնակամ, կոճղի ամբողջ մակերեսի վրա:

Տեմպը՝ մեկ րոպեյում 20—40 դարձ: Ժամանակի հաշվարկը՝ վարժության տեղում մեկ ժամ, յուրաքանչյուր մեկ րոպե աշխատանքից հետո մեկ րոպե հանդիսաւ:

Երգ վարժություն՝ զաստակի շարժումով փայտե ձողի պտտելը 90° զեզի իրեն ու իրենից զեզի զենը յեզ արմունկային հարվածի կատարումը:

Վարժության նպատակն ե' յուրացնել յերկու ձեռքի շարժումների համագործակցությունը: Այս վարժությունը զնդանի վրա կատարվում է հետեւյալ ձողով. 20×30×300 միլիմետրանոց փայտե ձողը՝




Նկ. 47. Ձախ ձեռքի զաստակով փայտե ձողի 90° զեզի իրեն պտտելը:

Ա—յելման դրությունը, Բ—պտտելը:

բռնում են ձախ ձեռքով. (ինչպես 7-րդ վարժության մեջ), «մեկ» հաշվով աջ ձեռքը մուրճով արմունկային շարժում ե կատարում, իսկ ձախը՝ ձողը շրջում է 90° զեզի իրեն. «յերկու» հաշվով ձողին հարվածում են: Զողն իրենից զենը պտտելու վարժությունը կատարվում է նույնպիսի հետեւղականությամբ: Տեմպը՝ մեկ րոպեյում 30—45 հարված: Ժամանակի հաշվարկը նույնն է, ինչ վոր նախորդ վարժության ժամանակ:

9-րդ վարժություն՝ մուշենով արմունկային հարված յեվ փայտե առղի պտտեցնելը փոփոխակի 180° գեղի իրեն յեվ իրենից գեղի գենը բանելով:

Այս վարժության նպատակը նույնն է և կատարվում է նույն հետևողականությամբ ու տեմպով, ինչպես 8-րդ վարժությունը: Յուրաքանչյուր յերկու րոպե աշխատանքից հետո մեկ րոպե հանգիստ:



Նկ. 48. Աքցանով յերկաթե ձողի պտաելը:

Ա—յելման դրությունը, Բ—պտաելը

10-րդ վարժություն՝ հարված-յերկարե ձողն աքցանով 90° յեվ 180° գեղի իրեն յեվ իրենից գեղի գենը պտտեցնելով (նկ. 48):

Վարժության նպատակն է՝ յուրացնել յերկու ձեռքի շարժում-ների համագործակցությունը՝ լրիվ հարվածելու և աքցանով աշխատելու ժամանակ: Այս վարժությունը կատարելիս $25 \times 25 \times 300$ մմ-ոց յերկաթե ձողը ձախ ձեռքով սեղմակում և ացքանի մեջ, «մեկ» հաշվով ձողը զնդանի վրա 90° կամ 180° գեղի իրեն և պտավում, «յերկու» հաշվով մուրճով հարվածում են յերկաթին: Տեմպը՝ մեկ րոպեյում $50-45$ հարված: Ժամանակի հաշվարկը՝ յուրաքանչյուր մեկ րոպե աշխատանքից հետո—մեկ րոպե հանգիստ:

Չողը պտաելու համար հարթ շրթանի աքցան պիտի վերցնել: Աքցանով ձողը սեղմում են միայն ձեռնամուրճի ոգնությամբ (արտադրական ունակություններ հաղորդելու նպատակ): Աքցանի շրթերը ձողին այնպիս պետք է հարմարեցվեն, վոր շրթերի մակերեսներն ընդհանուր ձողին կպչեն ամբողջ բռնվիլը մակերեսով: Պետք է հետեւվել, վոր ձողը շրջելիս աքցանի շրթերում չճռվի և զնդանի մակերեսից չբարձրանա:

11-րդ վարժություն՝ կռանով արմունկային հարված (առանց կորի) կոնդին—աջ ձեռքի կողմից (թերի, ուղղաձիգ) (նկ. 49): Վարժության նպատակն է՝ կռանահարին՝ կռանով աշխատելիով պրիմմեր յուրացնել:



Նկ. 49. Արմունկային թափ կռանով:

Նկ. 50. Ուռային թափ կռանով:

Այս վարժությունը կատարելու համար սովորողը կանգնում է փայտի կոճղի մոտ կռանի կոթի յերկարության չափ հեռավորության վրա, իրանը կիսաշրջանով դեղի ձախ գարձած (45° -ի անկյունով), աջ վոտը դրված առաջ, վոտների թաթերը $70-80^{\circ}$ -ի անկյունով բացված, ձախ ձեռքով վարժական փայտի կռանի կոթը, ծայրից $2-3$ սմ գեղի ներս բռնած, աջ ձեռքը դրվում է կոթի վրա՝ կռանի ծայրից $30-40$ սմ հեռավորության վրա:

Թափի ժամանակ աջ ձեռքն արմունկում խիստ կռանում է մինչև ծայրահեղ առտիճան և բարձրանում ուժին հավասար, ձախ ձեռքով կոթը ծայրից պահպում է, վորպիսդի արմունկը չհեռանա իրանից: «Մեկ» հաշվով աջ ձեռքի արմունկային թափ և արվում մինչև ուսը, «յերկու» հաշվով՝ հարված և արվում կոճղի վրա: Ակզրում վարժությունը կատարվում է վարժական 1200 գրամանոց կռանով, ապա 4 կիլոգրամանոց սովորական կռանով: Տեմպը՝ մեկ րոպեյում $30-35$ հարված: Ժամանակի հաշվարկը՝ վարժության տևողու-

թյունը՝ յերկու ժամ, յուրաքանչյուր յերկու րոպե աշխատանքին՝ մեկ րոպե հանգիստ:

12-րդ վարժություն՝ կռանով ուսախն հարված չերկարե փոքր զեղանեին (լիվ ուղղանից) (նկ. 50):

Աջ ձեռքով կռանը բարձրացնում են վեր և դեպի իրեն այնպես, վոր աջ ձեռքի դաստակը հասնի աջ ականջի մակարդակին. ձախ ձեռքը կռանի կոթի ծայրից պահելով, իրանից չպիտի հեռանա և ծածկի հարվածի նպատակը: Թափի ժամանակ կռանը դեպի յետ չպիտի ընկնի կռանով աշխատելու ժամանակ իրանի ճոճվելը պետք ե հասցնել նվազագույն չափի: Վարժական կռանով վարժությունը կատարվում է 3—4 անգամ, իսկ սովորականով՝ 4—5 անգամ: Ժամանակի հաշվարկը և տեմպը նախորդ վարժության նման է:



Նկ. 51. Լայնարձակ հարված կռանով:

Եթի թաթերը բացվում են 70—80° անկյունով, իրանի դրությունն ուղղի ե, ձախ ձեռքը կոթին զրվում ե ծայրից դեպի ներս 3—4 ամ հեռավորության վրա. աջ ձեռքը՝ աջ կողմից զրվում ե ձախ պահում են պարզած ձեռքերով. իրանը դարձվում է 45° դեպի աջ և յետ, ձախ վոտը դեպի կոճղը դրվում ե առաջ, վոտնեանկյունով, իրանի դրությունն ուղղի ե, ձախ ձեռքը կոթին զրվում ե ծայրից դեպի ներս մոտ:

Հարվածի մոմենտին վոտները ծնկների մասում քիչ ծալվում են (զպանակի պես), վորը կանխում ե իրանի ծովելը և թեթևացնում ե մեջքի մկանների աշխատանքը: Բացի այդ, հետագայում վոտների ուղղվելը՝ իրանի դեպի յետ թեքվելու հետ միասին կռանին ավելի արագ շարժում ե հաղորդում:

Եյս վարժության մեջ, ինչպես և 11-րդ ու 12-րդ վարժություններում, վարժությունը կատարում են նախ վայտե, ապա սովորական կռանով:

Տեմպը՝ մեկ րոպեյում 30—40 հարված: Ժամանակի հաշվարկը՝ վարժության տևողությունը՝ 2 ժամ, յերկու րոպե աշխատելուց հետո՝ մեկ րոպե հանգիստ:

14-րդ վարժություն՝ գարբե յեվ կռանահատի միասնական աշխատանքը հաստատուն յեվ փոփոխական նպատակներով:


Վարժության նպատակն է՝ համաձայնեցված շարժումներ մշակել դարբնի և կռանահարի աշխատանքի մեջ: Եյս վարժությունը կատարվում է հետեւյալ ձեռվ. «մեկ» հաշվով՝ դարբինը մուրճով ուսուի լրիկ թափի ե կատարում, «յերկու» հաշվով՝ հարվածում ե. այդ ժամանակ ել կռանահատը՝ կռանով ուսային թափի ե անում և «յերեք» հաշվով՝ հարվածում ե կոճղին, իսկ դարբինը «յերեք» հաշվով լրիկ ուսային թափի ե կատարում: Ժամանակի հաշվարկը և տեմպը նախորդ վարժության նման ե:

Եյս 14 վարժությունները յուրացներուց հետո սովորողը դարբնական ձեռքը կատարելու վորոշ ունակություն է ձեռք բերում: Հետագայում անցնում ե յերկաթ մշակելու վարժություններին, նախ՝ սառը վիճակում (կտրել, յերկարացնել կլոր և քառակուսի ձողեր), իսկ հնոցի կազմության, հնոցում կը լու անելու և մետաղը տաքացնելու հետ ծանոթանալուց հետո, անցնում ե տաք յերկաթի մշակելուն:

Եերկար կտրելը (նկ. 52): Փոքր հատվածակոր (24×12 մմ) յերկաթը կտրվում ե սառը վիճակում մեծ հատվածակորը՝ տաք դրությամբ:

Կտրում են հետեւյալ ձեռվ. կավճով նշում անելուց հետո, ձախ ձեռքով, տափակ շրթավոր աքցանով յերկաթը սեղմում են և դնում զնդանի ուսի վրա. աջ ձեռքով վերցնում են հատիչը և դնում նշան արած տեղը: Եյնուհետև կռանահատը մի քանի անգամ խփում ե հատիչին, սկզբում արմունկացին թափով, ապա ուսային: Յերբ հատիչը մետաղի կիսից ավելին կտրած ե լինում, ազդանշան և տրվում՝ «թուլացնել հարվածը» և յերկաթը փոխադրվում ե զնդանի յեզրը, վորտեղ վերջնականապես կտրվում ե:

Յերկաթ կտրելու գործողությունը կարելի յե կատարել և զընդանի հարթության վրա, բայց այս դեպում, զնդանի յերեսը փչանալուց պաշտպանելու համար, տակը յերկաթի շերտ և դրվում:



Նկ. 52. Սառը յերկաթի կտրելը:

Սառը վիճակում բառակուսի յերկարի ծայրի կոնաձեզ յերկարացումը (նկ. 53): Յերկաթե ձողն աքցանով այնպես են սեղմում, վոր աքցանի շրթերն իրենց մակերեսներով ընդուալ կպչեն ձողին



Նկ. 53. Բառակուսի յերկաթե ձողի ծայրի կոնաձեզ յերկարացնելը:

Այս շրթավոր աքցանով և դնում զնդանի յերեսին: Ուսի թափով, մուրճի զարկանի ամբողջ մակերեսով հարվածներ են տալիս: Աշխատանքի ընթացքում ձողը շրջում են գեղի իրեն և իրենից դեմը 90°-ով, սկզբում յուրաքանչյուր յերկու հարվածից հետո, ապա մեկ հարվածից հետո. պետք չե պատրաստվածքի միենույն կողմին իրար յետեց ավելի թվով հարվածներ տալ: Կամ յերկաթի մակերեսները պետք ե հարթ լինեն:

Այս վարժությունները յուրացնելուց հետո սկսում են շիկացած յերկաթի մշակումը, նախորդ յուրացնելով հնոցում կրակ վառելը և յերկաթ տաքացնելը:

Հնոցում կրակ վառելը: Նախքան հնոցում կրակ անելը, ստուգվում ե փուքսի սարքին լինելը, մաքրվում և մետաղի խարամը (շլակ) և փողի անցքը: Այնուհետեւ փողի շուրջն ածուխի բարակ շերտ են ածում և մարխով կամ տաշեղով վառում: Վորքան ածուխն ուժեղ է վառվում, այնքան փշելը հետզհետեւ ուժեղացնում են: Յերբ ածուխը լավ բոցավառվի՝ կրկին մեկ բաժին ածուխ են ավելացնում: Աշխատանքը վերջացնելուց հետո ածուխը փողից յետ են քաշում:

Զեռքի փուքս ողտագործելիս չի կարելի փուքսի աշխատանքը կանգնեցնել՝ կոթը ուժգին բաց թողնելով, առանց վերին ծածկոցն

իր սկզբնական դրությանը հասցնելու, այս գեղքում ծուխը կարող է ծննիկ փուքսի մեջ և փուքսը փչացնել:

Յերկաթ տաքացնելը: Յերկաթե ձողը հնոցն են դնում այնպես, վոր շրջապատված լինի այրվող ածուխով և փողի անցքով մտնող ողով, սերքելից չառչի (դրա համար փողանցքի վրա ածուխի բավականաշափ հաստ շերտ պետք ե լինի): Յերկաթի տաքանալու չափը վորոշելու համար ձողը յերեքմն հնոցից առաջ են քաշում (առանց ածուխը գրելու): Տաքանալու ժամանակ պետք ե հետեւել, վոր աքցանի շրթերը յերկաթե ձողի հետ չտաքանան:

Սովորաբար տարբերում են տաքացման յերեք հիմնական աստիճանն կարմրացում ($700-900^{\circ}$)¹ յերկաթի ձողը կուացնելու և պատրաստած պայտափին ձեւ տալու համար, սպիտակացում ($1200-1300^{\circ}$)² պայտ շինելու ժամանակ և յեռացում, կամ հալելուց (մոտ 1500°)³ յերկաթը յետ անելու ժամանակ. վերջին գեղքում կրակի մեջ փայտն և կապույտ կայծեր են յերեւում:

Քարածուեալով աշխատելիս, հնոցաբնում ավելի բարձր ջերմություն ստանալու համար, այրվող ածուխի վերին շերտը ջրով թրծում են, վորպեսի պինդ կեղև գոյանա: Այդ կեղևը ժամանակ առ ժամանակ ջարդում են և ածուխի նոր բաժին ավելացնում:

Յերկաթ տաքացնելու հետ ծանօթանալուց հետո անցնում են՝ շիկացած յերկաթ մշակելու վարժություններին, տափակ ձողին քառակուսի ձեւ տալուն, քառակուսի ձողը տափակացնելուն, քառակուսի ձողը կլորացնելուն, կեռ շինելուն, ող շինելուն, տափակ ձողից պայտի կիսափաքրիկատ պատրաստելուն:

Այս վարժությունները կատարելուց և յուրացնելուց հետո անցնում են պայտ պատրաստելուն:

ՁԵՐՔՈՎ ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

ՅԵՐԿՈՒԻ ՄՇՏԱԿԱՆ ԳԶԵՐՈՒՎ ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Պայտափի աշակերտներին պայտ պատրաստելու ձերը սովորեցնելու նպատակով, հին պայտերը սառը և տաք վիճակում՝ ոգտագործելով նախնական վարժություններ են կատարվում: Այս զեղքում պայտ պատրաստելը սովորեցնելու համար քիչ ժամանակ և պահանջվում, աշխատանքն ուղիղ կատարելու տեսակետից հասնում են նպատակին և տնտեսում յերկաթը: Վարժությունները կատարում են հետեւյալ հաջորդականությամբ:

1. Յերկաթի ձողի 60° կուացնելը սառը և տաք վիճակում, — սկզբում կուանահատի ողնությամբ, իսկ հետագայում՝ միայնակ: Այս

վարժությունը կատարելիս ուշադրություն պիտի գարձնել՝ աքցանով ձոզն ամուր պահելու, ծոելու ժամանակ զնանի հարթության վրա ձողի ճշշտ դրության և ձեռնամուրճի հարվածների ուղիղ լինելու վրա: Այսուհետև սովորեցնում են ծոած ձողի ծայրերն ուղղելու ձևերը, այն գեղքում, յեթե նրանց յերկարությունն անհավասար է լինում:

2. Ճյուղերի յերկարացնելը (նախ՝ ձախ, ապա՝ աջ): Այս վարժությունը կատարելիս, սառը վիճակում հին պայտի վրա յուրացնում են պայտի բունելը: Ճյուղը յերկարացնելու ձևերը հիմնովին յուրացնում են տաքացրած հին պայտի վրա սովորելիս: այդ նպատակով ձախ ճյուղը տաքացնում են մինչև կարմիր շիկացումը և մյուս ճյուղն աքցանի մեջ առնելով՝ պայտը դնում են զնդանի յեղջյուրի վրա (ծայրին մոտ) ու ձեռնամուրճով կատարում յերկարացնումը: Պայտը յերկարացնելիս ուշադրությունը են զարձնում զընդանի յեղջյուրի նեղ տեղից պայտն ավելի լայն տեղ փոխադրելու վրա, միաժամանակ դեպի իրեն և դեպի ցած տեղափոխելու, այլև ձեռնամուրճի հարվածի վրա, պետք են հետեւ վոր պայտը թափ տալով չտեղաշարժվի:

3. Պայտի հավասարեցումը (ուղղումը):

ա) կողի հետ,—վորի համար բոնիչից դեպի ճյուղերի ծայրերը ձեռնամուրճի հարվածներով անցնում են յերկու անգամ, միաժամանակ վերից վար և դեպի ներս (պայտի տակը) թեքություն անում.

բ) վերին մակերեսով,—վորի համար պայտի վերին մակերեսի արտաքին կիսով ձեռնամուրճի թեթև հարվածով անցնում են մեկ անգամ, մի անգամ ել՝ անցնում են բուխտովկայի վրայով.

գ) ստորին մակերեսով,—վորի համար պայտը զնդանի յերեսի հարթության վրա պահում են ձախ ձեռքով, իսկ ձեռնամուրճով (աջ ձեռքում) պայտի ստորին մակերեսի արտաքին կիսով անցնում են թեթև հարվածներով:

Վարժությունն այս հաջորդականությամբ կրկնվում է՝ մինչև պայտի սառչելը:

Նույն վարժությունները կատարվում են աջ ճյուղը յերկարացնելիս, ըստ վորում պետք են հետեւ, վոր աջ ճյուղի հաստությունը, յերկարությունը և ձեր չտարբերվեն ձախ ճյուղի հաստությունից, յերկարությունից և ձեփից:

4. Պայտի ակոսահատումը (ըստ վորում առանձին ձևերը յուրացնում են սառը պայտի վրա).—այս վարժությունը կատարելիս ուշադրություն են դարձնում դարբնի իրանի կեցվածքի վրա, աքցանով պայտը բռնելու վրա, ակոսի լայնության ու խորության

զրա, ակոսահատի տեղափոխության վրա և կռանահարի հարվածի ուժի վրա:

5. Պայտի մեխանիզմը նշումը № 1 ծակիչով (ուշադրությունը են դարձնում ծակիչը բանելու, նշելու կարգի և մեխանցքերի տեղադրման վրա):

6. Մեխանիզմը ծակելը ձողիկով, այսուեղ ուշադրություն են դարձնում ծողիկի սարքին լինելու վրա, ժամանակին այն սառեցնելու և պայտի վերին մակերեսի ցլեպները վերացնելու վրա. այս ձեր ուսուցումը կատարվում են սառը պայտի վրա, մեխանցքերի ծակելը տաքացրած պայտի վրա յեւ կատարվում:

7. Պայտի ձեր ուղղելը, առջեկ վոտի պայտը յեւ կ վոտի դարձնելը:

8. Գեռոների ծռելը՝ այս վարժությունը կատարելու համար հին պայտերի ծայրերը մինչև զգեռային անցքերը կտրում են, ապա պայտը տաքացնում են և զգեռները ծռում ու հետագայում վերջնականապես պատրաստում: Կղեռները ծռելու և վերջնականապես հղկելու ձերը յուրացնելու համար նպատակահարմաք և հետեւյալ հաջորդականությամբ վարժությունը զեկավարել՝ ա) զնդանի յեղջրի վրա ծռել պայտի ճյուղը, բ) ճյուղի ծռած ծայրն ավելի կուցնել, գ) զընդանի կրունկի վրա զգեռը կողի հետ հավասար եցնել, դ) կոճղ (տոռքեց) նստեցնել, ե) ծալել մակերեսի վրա, զ) հավասարեցնել կողի հետ, է) հարթել անկյունները:

9. Պայտի ձեր ուղղելը (յետևի):

10. Վահանիկի յետ քաշելը:


11. Պայտերի վերջնական պատրաստումը (հղկումը): Այս վարժությունները յուրացնելուց հետո սկսում են պայտ պատրաստել:

Պայտ պատրաստելու պրոցեսը կազմված է հետևյալ հիմնական դարբնական աշխատանքներից՝ ծողիկ կուցում, ճյուղերի յերկարացնում, ակոսահատում, ծակում, բուխտովկա նստեցնել, գլուխուններ կուցնել և վահանիկ յետ քաշել:

Բացի այդ, անկանոն քայլվածք ունեցող ձիերը պայտելու համար պայտ պատրաստելիս, արատավոր և հիվանդ սմբակների վրա լրացնելու գործողություններ են կատարում, որինակ՝ շեղ զղեռներ պատրաստել, յերկաթը հաստացնել և այլն:

Զողի կուցնելը (նկ. 54): Պայտ շինելու համար 25×12 մմ չափածք (կարգածք) և բռնիչի ու կրնկի ոյան միջի տարածության կրկնակի չափի յերկարություն ունեցող, 5—10 մմ ավելցուկով ձևու կարում:

22×10 մմ հատվածք ունեցող յերկաթից գղեռավոր պայտ պատրաստելու ժամանակ, յերկաթի ձողի յերկարությունը պիտի ավելացվի 3—4 սանտիմետր (գղեռների համար):



Նկ. 54. Ձողի կուցնելը:
Ա—առաջին ձև, Բ—յերկրորդ ձև:

Են մինչև սպիտակ շիկացումը և զնդանի յերեսի վրա դնելով սկսած մեջտեղից, ձեռնամուրճի ու կուանի ոգնությամբ յերկարացնում են: Այնուհետեւ պատրաստվածքը յերկարացնում են զնդանի յեղջուրի վրա և նրան պայտի ձախ ճյուղի ձեւ տալիս: Ճյուղի ամբողջ հառտությունը միատեսակ պիտի լինի, իսկ ծայրերի լայնությունը միքիչ նեղ պիտի լինի, քան բոնիչում: Պայտի ճյուղերը յերկարացնելիս, պատրաստվածքը զնդանի վրա չպետք է ուժգին տեղաշարժել


*) Պայտ պատրաստելու ձախ ճյուղից սկսելն ընդունված է պայտառական հրահանգիչների դպրոցում: ուրիշ պատրաստական դպրոցներում պայտ շինելը կատարվում է բնշպես ձախ, նույնպես և աջ ճյուղից:

Ձողը տաքանում են մինչև վառ կարմիր գույշ՝ մի ծայրով գնում են զնդանի, իսկ մյուսով կը սանի վրա և մեջտեղում մինչև բութ անկյուն առաջանալ՝ կուցնում: Ծըռվածքի տեղում, մուրճի զարկանի յեղյերի հետքեր չթողնելու համար, հարվածում են մաւրճի բուխտով կային ծայրով:


Հետագա կուցման համար պատրաստվածքը ծայրով գնում են զնդանի անցքի յեղյերքին (իսկ հետո՝ զնդանի յերեսին) ու վերևի ծայրին ձեռնամուրճի տափակ զարկանով հարվածում: Ձողը կուցնելուց հետո պատրաստվածքը հավասարեցնում են:

Ճյուղերի յերկարացնելը
(Նկ. 55): Պատրաստվածքի ձախ կեսը^{*)} տաքացնում

այլ այն միենաւը աեղը յերկար պահել, վորովհետեւ այդպիսի դեպքերում ստացվում է անհարթ և վրան փոսեր ունեցող ճյուղ: Ճյուղը և պայտը յերկարացնելիս արտաքին կողի վրա միաժամանակ վերից գեպի վար թեքություն է արվում (պայտի տակը):



Նկ. 55. Ճյուղի յերկարացնելը
և հավասարեցնելը:




Նկ. 56. Ակոսահատումը:

Ակոսահատումը (Նկ. 56): Այս գործողության ժամանակ դարբինն ակոսահատը գնում է պատրաստվածքի կենտրոնից 24 մմ դեպքած (սովորաբար ակոսահատի լայնության չափով) և արտաքին յեղյերից 7—8 մմ հեռավորության վրա: Դեպքի ճյուղերի ծայրերը ակոսահատի հեռավորությունը արտաքին յեղյերից պակասում է և պիտի լինի 5—6 մմ: Դարբինն սկզբում կունի թեթև, ապա ավելի ուժեղ հարվածներով ակոսահատը շարժում է գեպի իրեն, պատրաստվածքը վրայից չվերցնելով այն և չթողնելով, վոր տատանվի վհչ գեպի աջ և վհչ գեպի ձախ:

Ինչպես ակոսահատման, այնպես ել հետագա գործողությունների ժամանակ, աշխատանքի վորակն զգալի չափով կախված է ձախ ձեռքի դրությունից: պատրաստվածքն աքցանով պահող ձախ ձեռքի դառտակը զնդանի յերեսի մակարդակից ցած չպիտի լինի:

Մեխանիզմերի ծակուելը (Նկ. 57): Ճյուղն ակոսահատելուց հետո, դարբինը ծակիչով նշում է մեխանիզմերի տեղերը և ապա ձողիկով ծակում: Մեխիերի անցքերը ծակուվում են իրարից հավասար հեռավորության վրա և համապատասխան թեքվածքով: Հաշվումը հեշտացնելու համար մեխանիզմերը հետեւյալ հաջորդականությամբ են նշում: Նախ առաջին բռնիչային անցքը, ապա առաջին կրնկայինը, մնացած անցքերը տեղավորում են նրանց մեջ:

Մեխանիզմի համապատասխան թեքություն տալու համար ծակիչն ինչպես ցույց է տված 57 նկարում, թեք են պահում:



Նկ. 57. Մեխանիզմի նշումը:

գեղի ձախ են անում, իսկ ակոսահատը, ինչպես ձախ ճյուղը պատրաստելու ժամանակ, ակոսելիս ճյուղի ծայրի կողմից է անցկացվում:

Գգեռների ծռելը (նկ. 58): Կրնկային գգեռները ծռելու դեպքում նախև առաջ, վորպեսզի ճյուղերի յերկարությունը հավասար լինի, ծայրերը հավասար եցնում են, ապա աջ ճյուղի ծայրը տաքացնելով՝ կունահարի ողնությամբ ծռում են:


Այնուհետև պատրաստվածքի ծայրը դնում են զնդանի յերեսի վրա և ճյուղի ծայրը կունանում (վոչ ըրիվ): Դրանից հետո պատրաստվածքը փոխադրում են զնդանի կրնկի վրա և կողի յերկարությամբ հավասար եցնում են. վերջապես, շինվում են գգեռները՝ ձախ՝ դեպի դարբինը դարձված զնդանի կողի վրա, աջը՝ հակառակ կողմի վրա:

Պահանիկի յետ բաժելը (նկ. 59): Յերբ գգեռները պատրաստ լինեն, պայտն ուղղում են և բռնչային մասը տաքացնելուց հետո վահանիկը յետ են քաշում:

Պայտի վերջեական պատրաստումը: Ավարտական աշխատանքը կատարելու համար ամբողջ պայտը մինչև վառ կարմիր գույնը տաքացնում են: Պայտին համապատասխան ձեւ են տալիս, ուղղում են բուխտովկան և շտկում ակոսն ու մեխերի անցքերը:

Մեխերի անցքերը ծակոտելուց հետո վերին մակերեսի վրա հաճախ ցլեպանիր են մնում, ճյուղի կողի յերկարությամբ անհարթություններ են գոյանում և պայտի մակերեսը յերբեմն ծռվում ե. ուստի մեխանիզմը ծակոտելուց հետո, նախ ձեռնամուրճի տափակ ծայրի յեղորվ ջարգում են ցլեպանիրը, հետո ուղղում մակերեսը և, վերջապես, ձեռնամուրճով հարթում անհարթությունները ու նշում բռւխտովկան:

Ա. ջ ճ յ ո ւ ղ ը պատրաստելիս կատարում են մինույն գործողությունները, սակայն այն տարբերությամբ միայն, վոր կողի յերկարությամբ գնացող թեքությունը




Նկ. 58. Կրնկային գգեռի ծռելը, ավարտելը և սրելը:
Ա—ծռելը, Բ—ավարտելը, Գ—սրելը:

Հաճախ գործադրվում ե պայտ շինելու յերկարդ ձևը:

Այս ձևով պայտի շինելն ուկառում են աջ ճյուղից:

Պայտի յերկաթե ձողի յերկարության $\frac{3}{4}$ -ը տաքացնելով, ձեռքի աքցանով՝ լայնակի և տափակ յերեսից՝ բռնում են սառը ծայրից (չտաքացրած)՝ 5 ամ հեռու: Այնուհետև ձողը դարձնում են զեհի (կողի) վրա, սառը ծայրը զնդանի մակերեսի համեմատությամբ 45° բարձրացնում են և տաքացրած ծայրը զնդանի զեհի վրա դնում այն հաշվով, վոր ձողի մեջտեղը զնդանի յերեսի սահմաննե-



Նկ. 59. Վահանիկի յետ քաշելը:


րից դուրս չգա (նկ. 60): Չողի մեջտեղին ձեռնամուրճի ուսուցիկ զարդարականով հարվածներ տալով ձողը կուացնում էն (նկ. 61) մինչև բութ անկյուն ստանալը: Ապա, կուանահարի ոգնությամբ ձողի տաքացրած ծայրը զնդանի յերեսի վրա յերկարացնում էն:

Դրանից հետո պատրաստվածքը փոխադրում էն զնդանի յեղջուրի վրա և ձեռնամուրճի հարվածներով ուղղում ու պայտի ճյուղի արտաքին յեղբին (կողին) թեքություն էն տալիս: Կուացած ճյուղերին տալիս էն պայտի ճյուղի մոտավոր ձեւ, դրա համար պատրաստվածքը շրջում էն կողի վրա, ապա դնում զնդանի գենին և ձեռնա-


մուրճի հարվածներով պայտի ճյուղի լրացուցիչ կուացումն էն կատարում այն հաշվով, վոր պահանջված ձեն ստացվի, այսինքն՝ յետենի պայտի ճյուղի կուացումը կատարում, էն ճյուղի ծայրից ավելի մոտ (նկ. 62), իոկ առջենի պայտինը՝ ճյուղի ծայրից ավելի հեռու: Ճյուղն ակոսելուց հետո կատարում էն

Նկ. 60. Յերկաթե ձողի դրությունը յերկրորդ ձեռվ կուացնելու ժամանակ:

նշումը և մեխանցքերի ծակոտումը: Մեխանցքերի նշումն ու ծակոտումը ցանկալի յեւ կատարել յերկու ծակիչով ու յերկու ձողիկով:



Նկ. 61. Յերկրորդ ձեռվ կուացը յերկաթի ձողը:




Նկ. 62. Յետենի պայտի ճյուղի կուացնելը՝ ճյուղին մոտավոր ձեւ տալու համար:

Մեխիրի անցքերը նշումը են բութ ծայր ունեցող, մեխի զլիսին համապատասխանող ծակիչով ու վերջնականապես ծակոտում են բարակ քառակուսի ծայր ունեցող, մեխի պարանոցին համապատասխանող ծակիչով, այնուհետև անցքերն ակոսի կողմից ձողիկով շըտելում էն:

Պայտի վերին ներբանային մակերեսի կողմից ձողիկով ծակոտելն արգելվում է, քանի վոր դրանով մեխանցքերի ուղղությունը խախտվում է:

Պատրաստած պայտի ստուգումը (նկ. 63): Պայտի ձեն ու մեծությունն ստուգում էն սմբակից վերցրած չափով կամ սմբակաչափով (պեղոմեարով). մակերեսների հավասարությունն ստուգում էն զնդանի մակերեսի, կամ հատուկ սալի վրա: Առանձին մասերի հարաբերությունն, այսինքն՝ ճյուղերի լայնությունն ու հաստությունը, մեխսերի անցքերի տեղադրությունը, ակոսի լայնությունն ու խորությունը և զգեսների բարձրությունն ստուգում էն կալիբրումեարով (տրամագծաչափով):



Նկ. 63. Պայտի ստուգումը:

Ընդհանուր հասկացողություն յեռացնելու մասին: Սպիտակ շիկացումով տաքացրած (յեռացման ջերմություն) մետաղի մի քանի կտորների միացումը մի ամբողջ ձողի մեջ կոչվում է յեռացում:

Յեռացնելիս յերկաթի կտորները դարսվում են միատեղ, բըռնը գումարմ են հնոցային աքցանով և գրվում հնոցը տաքացնու համար: Յերկաթը, մինչև յեռացման ջերմությունը տաքացնելը հեշտությամբ կարելի յեռացրել ուստի (հենց վոր յերկաթից կայծեր արձակվեն) յեռացման յենթակա մակերևսների վրա անհրաժեշտ է չոր, մաքուր կվարցի ավագ ցանել: Ավազը տաքանալիս հալվում է, լուծում յերկաթի կոփափշրանքը և շիկացած յերկաթի մակերեսի վրա առաջացնում հավասարաչափ ապակենման խարամի շերտ, վորն արգելում է դրսից թթվածնի մուտքը դեպի մետաղի շիկացած մակերեսը:

Պողպատը յեռացնելիս, ավագի փոխարեն, վորպես յեռացման փոշի գործ և ածվում բորաք, անուշադրություն:

Յերկաթի յեռացման ժամանակ անհրաժեշտ է հետեւ, վոր յեռացման յենթակա մակերևսների արանքում հնոցալը (մոխիր, խարամ) չմնա, վորով հետեւ աղբ լինելու դեպքում յերկաթը վատ և յեռացվում:

Յերկաթի կարծր տեսակները տաքացնելիս յեռման ջերմությանը ավելի շուտ են հասնում, քան փափուկ տեսակները տաքացնելիս:



Ա.



Յ.

Նկ. 64. Յերկու պայտի չորս կեսի ծրարով յեռացումը:

Ա—հնոցը դնելուց առաջ, Յ—յեռացրած ծայրը:

Յեռացում կատարելիս հատուկ ուշադրություն պիտի դուրձնել հնոցարնում ջերմության կենտրոնացման վրա, յեռման տեղերում մետաղի տաքանալու, ժամանակին հնոցից մետաղը հանելու, յեռացվող մակերևսների մաքրության (կոփափշրանքի հեռացում), և յեռացման ժամանակ աշխատանքի արագության վրա:

Յերկաթը, յեռացման ջերմությամբ տաքացնելուց հետո՝ հնոցից հանում են, դնում զնդանի վրա, արագ մաքրում կոփափշրանքը և ձեռնամուրճով ոկզրում թեթե, իսկ հետո ավելի ուժեղ հարվածներ

տալիս: Յեթև միանգամից ուժեղ հարվածենք, այն դեպքում յերկաթը կարող է փշրվել:

Տարբերում են դարբնական յեռացման հետեւյալ հիմնական ձեւվերը:

ա) խուրձով (Նկ. 64), յերբ հարկավոր է յերկաթի առանձին կտորներից մի ձող յեռացնել, այդ դեպքում յերկաթի առանձին կտորները միատեղ դարսում և յեռացնում են (որինակ՝ պայտի չորս կեսերից յերկաթե ձողի յեռացումը):

բ) Վերադիր յեռացում (Նկ. 65), յերբ պա-


հանջվում է ձողի մի ծայրը կպցնել մյուսին, այդ դեպքում յեռացվող ձողերի ծայրերը նստեցնում են (հաստացնում), հաստացրած ծայրը յերկարացնում են և ծրատում (քերթ անում): Այնուհետև ծայրերը միացնում են իրար, դնում հնոցը և յեռացնում:

Պողպատ յեռացնելու ժամանակ կիրառում են հետեւյալ ձեւը: Յերբ վոր պողպատի կտորները պատրաստ են յեռացնելու համար, նրանց բարակացրած մասերում ծակեր են անում՝ իրար կպցնելու համար: Յերբ ծայրերն իրար կպցրած են, կտորները դնում են կրակի մեջ, տաքացնելու ժամանակ յեռացման տեղը բորաքի կամ անուշադրի փոշի յենց ցանում (վորպեսզի քամին փոշին չտանի, փուքությունում պակասեցնում են): Հենց վոր մետաղը պահանջված ջերմությամբ տաքանա, հանում են կրակից և մուրճի հարվածներով ձողերը միացնում իրար:

Յերկաթի վրա պողպատ քաշելիս, յերկաթն ավելի շուտ են հնոցը դնում, վորովինետև տաքացման միևնույն ջերմությունից պողպատն ավելի արագ և տաքանում, քան յերկաթը: Այս դեպքում ավելի լավ և պողպատը չացնել յեռման ջերմությանը, վորովինետև յեռացվող յերկաթի հետ պողպատը միանալով, վերինս յերկաթից խլում և ջերմության ավելցուկը և այսպիսով ստանում և յեռման համար պահանջվող ջերմությունը:

Յեռացման վարժությունները պետք են ուսել կոացրած յերկաթը յեռացնելուց: Դրա համար վերցնում են ձողը, նախորոք կոացնում նրա ծայրը, այնուհետև մինչև յեռման ջերմությունը տաքացնում են և իրար վրա յեռացնում:


Յերկաթի յեռացման ձեւերում մարդվելու համար սովորաբար



Նկ. 65. Վերադիր յեռացում:

ոգտվում են հին պայտերից: Յերկու հին պայտ մաքրում են կեղտից և մեխեն ու դգեռները (պտուտակային) հանում: Պայտերի մեջտեղը տաքացնում են, ակոսները դեպի ներս կիսով չափ կուացնում, տացված յերկու կուացած ձողերը հազցնում են միմյանց, կամ մեկը մյուսի վրա դնում, աղատ ծայրերից աքցանով բռնում են և տաքացնելուց հետո մշակում կուանի հարվածներով: Չողը պիտի յեռացվի յերկու նվազում, նախ յեռացնում են մեկ ծայրը, ապա՝ մյուս, ձողը դարբնում են պայտային յերկաթի չափով:

Բոնիչակին գգեռը պայտի մեջ յեռացնելը (նկ. 66): Յերկաթի շերտը կամ ձողը մինչև կարմիր շիկացումը տաքացնում են, վորից հետո հարթ հատիով յերկաթը կտրվում եւ վորքան հատիչը շատ եւ կտրում, այնքան նա թեք դիրք եւ ընդունում է կտրած ծայրը մի կողմն և շրջում (դառնում եւ այսպիս կոչված «յերշ»): Այնուհետեւ յերկաթի շերտից դգեռի չափով (մոտ 40 միլիմետր յերկարությամբ) մի փոքր կտրում են կտրում: Յեռման համար այս ձևով պատրաստած գգեռը կողերի հավասարությամբ նստացնում են և հարթության հավասարությամբ ուղղում: Դրանից հետո պայտը գգեռի տեղում տաքացնում են մինչև մուգ կարմիր գույն ստանալը և ստորին մակերեսից ծակիչով ծակում. պայտի այդ անցքի մեջ կտրված ծայրով (յերշով) դնում են դգեռը:



Նկ. 66. Բոնիչային գգեռի ամրացումն յեռացման համար:

Ա—առաջին նվագ, Բ—յերկորդ նվագ:

Յերշի կտրելուց առաջացած ակոռը պիտի ուղղված լինի դեպի պայտի ներսի յեզրը: Այնուհետեւ յերշի ծայրը վերին սակերեսից կուացնում են և պայտը հնոց դնում գգեռը դեպի ցած. գգեռը պայտից շուտ պետք եւ տաքանա. գգեռը պայտին ընդհուպ չպետք եւ սեղմել, վորովհետեւ այդ դժվարացնում եւ յեռացնելը:


Չեռնամուրձով հարվածելը սովորական ձևով են կատարում. սկզբում թեթե, իսկ հետո ավելի ուժեղ:

Մեջը յեռացրած բռնիչային գգեռով պայտ շինելու ժամանակ առաջին յերկու բռնիչային մեխերի անցքերը սկզբում միայն նշվում են, բայց վո՞չ միջաձիգ ծակվում, վորպիսպի պայտը բռնիչի մասում այրվելուց պաշտպանվի:

Բոնիչի գգեռը յերկարավուն քառանկյունի ձևի պիտի լինի: Գգեռի այս ձևը հենվելու համար ամենամեծ տարածությունն եւ ստեղծում: Գգեռի յերկարությունը պիտի լինի 30—40 մմ, լայնությունը՝ մոտ 15 մմ, իսկ բարձրությունը՝ մոտ 10 մմ: Բոնիչի գգեռը կը նկային գգեռներից մի քիչ ցածը են շինում, վորովհետեւ բարձր բռնիչի գգեռը նպաստում եւ ձիու սայթաքելուն:

ՊԱՅՏԻ ԳԶԵՌԱՅԻՆ ԱՆՑԲԵՐԻ ԾԱԿՈՑԵԼԻ, ՇՏԿԵԼԻ ՑԵՎ ՓՈՐԱԿԵԼԻ (նկ. 67):

Գգեռային անցքեր ծակելու նպատակով պայտի ձյուղերի ծայրերը հերթականորեն, մինչև վառ կարմիր գույն ստանալը տաքաց-



Նկ. 67. Պայտի գգեռային անցքերի նստեցնելն ու շտկելը:


Ա, Բ—նստեցնելը, Գ, Դ—շտկելը:

Նում են, վորից հետո կը ծակիչով, պայտի վերին մակերեսից սկսած՝ անցք են անում, Այդ կողմից վերջնականորեն չծակելով, պայտը շրջում են հակառակ կողմի վրա, և դնում զնդանի անցքի դիմացը ու գգեռային անցքը վերջնականորեն ծակում: Դրանից հետո շտկիչը դնում են ծակած անցքի մեջ և յերկու նվազով (շտկիչը չհանելով) գգեռային անցքը շտկում են, այսինքն՝ նրան տալիս են պահանջված ձևն ու տրամադրիծը:

Ստուգելով անցքերի ուղղությունը, հովացրած պայտը սեղմում են մամլակով, ստորին մակերեսը դեպի վեր այնպես, վոր անցքը ուղղահայց լինի: Յուղած նշիչը, ստրացրած վոլորանի կամ հատուկ փոքր մեքենայի մեջ, ձախից դեպի աջ պտտելով պատրաստում են անցքի պատրաստակային փորակը:

ԿԼԱՐ ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ (Նկ. 68)

Կլոր պայտ պատրաստելու համար վիրցնում են սմբակից 2,5 անգամ յերկար յերկաթե ձող (սմբակի յերկարությունը չափվում է բռնիչից մինչև կրնկային ոյուները): Կլոր պայտ պատրաստելու ձևերն ընդհանրապես նույնն են, ինչ վոր սովորական պայտ պատրաստելու ձևերը. կրնկային գգեռների ծոկում տեղում շինում են բարձր նույնականությունը:



Նկ. 68. Կլոր պայտ պատրաստելը.

Ա—լայնակի ճյուղի մասերի ծոկը յեռացնելուց առաջ, Բ—գգեռների պատրաստելը,
Գ—պատրաստի կլոր պայտը վերին մակերեսից:

Լայնակի ճյուղ: Լայնակի ճյուղ գարբենելու համար պայտի ծայրերը լայնականում և բարակացնում են, վորից հետո ծայրերը զնդանի յեղաբացնում

ջյուրի վրա (կողի վրա ուղիղ անկյունով) ծոռւմ են պայտի կրնկների լայնության հաշվով:

Այսուհետեւ յերկու ծոած ծայրերը կրկին տաքացնում են, մեկը մյուսի վրա յեն դնում ու յեռացնում: Յեռացնելու ժամանակ, պայտի յեռացրած ծայրերը վերջնականորեն շինում են վերին մակերեսից, ապա՝ ստորին մակերեսից: Միացնող ճյուղը (կամուրջը) միջին հաշվով ունի 13—15 միլիմետր լայնություն, 8—10 մմ հաստություն և սմբակի կրնկի լայնությանը համապատասխան յերկարություն:


Միացնող ճյուղը պատրաստելուց հետո յեռացնում են կրնկային և բռնչային գգեռները կամ պատրաստակային գգեռների համար փորակներ են պատրաստում:

ՎՈՏՆԵՐՆ ԻՐԱՐ ԽՓՈՂ (ԹՈԲՈՒԽ ՏՎՈՂ) ԶԻԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բռնիչի և սմբակի կողքերի մասերով թորուխ տվող ձիերի պայտը՝ թորուխի տեղերում (Նկ. 69) ավելի նեղ և ավելի ուղղագիծ են շինում: Դրա համար պայտը դնում են զնդանի յեղջյուրի վրա և մուրճի հարվածներով ճյուղի մի մասը նեղացնում և ուղղում են:


Կրնկի մասերով վոտներն իրար խփող (թորուխ տվող) ձիերի համար կարելի յերկարացնել այսպես կոչված «սահիչով» (պալաղկոմ) պայտ, վորի համար պայտի ներսի ճյուղը մեջտեղից վոլորում են (Նկ. 70) յուր առանցքի շուրջը, կամ ծայրը նստեցնում են:

Դարձնած սահիչը պետք է հանդիսանալ պայտի ճյուղերի աստիճանական հաստացումը, սկսած կրնկի վերջին մեխանցքից, այդ հաստացած մասը փոխարինում է գգեռին, սահիչի բարձրությունը արտաքին ճյուղի գգեռից ավելի չպիտի լինի, վորքեազի պայտելուց հետո սմբակը չծավիլ: Բացի դրանից, սմբակի կրնկային մասերով թորուխ տվող ձիերին պայտելու համար պատրաստում են կլոր պայտ, վորի կրնկի շրջա-



Նկ. 69. Սմբակների բռնիչներով և կողքերով մասերով թորուխ տվող ճիերի պայտելը:

նում ներսի ճյուղը կլորացնում են և կընկի գղեռը փոխադրում մի քիչ գեղի ներս:



«Ակ. 70. Վոլորելու միջոցով սահիչով պայտի պատրաստելը»

ԱՅՆԱՃՅՈՒԴ ՅԵՎ ԽՈՐԱՅՐԱԾ ԲՈՒԽՏՈՎԿԱ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՅՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Լայնաճյուղ և խորացըրած բուխտովկայով պայտեր պատրաստեցու համար 25×12 մմ հատվածավոր պայտի յերկաթը նախորոք նըստեցնում (հաստացնում) են, Դրա համար ձողը մեջտեղից տաքացնում են, հետո մի ծայրով ուղղահայաց դրությամբ դնում են զնդանում են, հետո մի ծայրով ուղղահայաց դրությամբ դնում են զնդանում (նկ. 71): Զողի լայնությունը հասցնում են $30-40$ մմ: Հետադաշտում պատրաստելը կատարվում է այսպես, ինչպես սովորական պայտի պատրաստումը:

ՈԵԶԻՆԵ ՉՈՂԱՎՈՐ ՊԱՅՏ (նկ. 72)

Վերջերս ԽՍՀՄ-ի մի քանի քաղաքներում հարթ ու պինդ ճամապարհի վրա (տսփայլա, գերաթուրծ աղյուս, կլինկեր) պահանգավագարի կամ կոճղաշեն ճանապարհ բանով լծի ձիերը պայտելու համար, կտալ կամ կոճղաշեն ճանապարհ բանով լծի ձիերը պայտելու համար, պայտի ճյուղերի կրնկային մասերում լայնակի ուղինե ձող ունեցող պայտի ճործագրում: Այդ սեղինե ձողը, կամ սովորական պայտի միջնկային մասերի վրա յեն ամրացնում, կամ հատկապես պատրաստած կլոր պայտի ուղիղ անկյունով կուպացած լայնակի ճյուղի վրա: Զիու ման գալու ժամանակ ուղինը փափկացնում և դարկերն ու ցնցումները և ձիուն սայթաքումներից պաշտպանում:

ԶԵՐՅԱՎ ՊԱՅՏԵՐ ՊԱՅՏԱՍՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՔԱՅՈՒՄՆԵՐԻ
ՔԱՆԱԿԵՐ ՅԵՎ ԺԱՄԱՆՈԿԻ ՀԱՇՎԱՐԿԵՐ

Պայտեր շինելիս, նայած դարբնի հմտության, տաքացում և Յ կամ 5 անգամ:

ՅԵՐԿՔ ՄԱՔ ԳՈՒՄ ՈՎ ՊԱՅ-
ՄԵՐ ՊԱՄՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՅՈՐԴԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ՝

1-ին տաքացում՝ ձողը կուցնել,
մի ճյուղը յերկարացնել, գղեռը կը-
ուացնել, ակոսահատել, անցքերը ծա-
կոտել, բուխտովկան նշել.


2-րդ տաքացում՝ նույնը յերկ-
որդ ճյուղի վրա:

3-րդ տաքացում՝ վահանիկը յետ
շրջել, պայտին ձև տալ և վերչնակա-
նապես պատրաստել:


Յերեք տաքացումով կրնկային
դղեռունեցող սովորական պայտ պատ-
րաստելու վրա դարբինը գործադրում
է $10-15$ րոպե:

Հինգ տաք ացում ով պայտեր
պատրաստելու հայորդականությունը՝

1-ին տաքացում՝ ձողը մեջտեղում կուցնել, մի ճյուղը յեր-
կարացնել, ակոսահատել, ծակոտել մեխանցքերը, նշել բուխտով-
կան:



«Ակ. 72. ՈԵԶԻՆԵ ՃՈ-
ՊԱՎՈՐ ՊԱՅՏ»



«Ակ. 71. ՅԵՐԿԱԹԻ ՆԱՏԵց-
ՆԵԼԸ (հաստացնելը)

2-րդ տաքացում՝ նույնը յերկրորդ
ճյուղի վրա:

3-րդ տաքացում՝ մի գղեռի կու-
տում:

4-րդ տաքացում՝ մյուս գղեռի կու-
տում:

5-րդ տաքացում՝ վահանիկը յետ
քաշել, պայտին ձև տալ, պայտը վերշ-
նականապես պատրաստել:


Հինգ տաքացումով պայտ պատ-
րաստելու վրա դարբինը գործադրում
է $18-22$ րոպե:

ԶԻՈՒ ՎՈՏՆԵՐԻ ԴՐՎԱԾՔԸ

ՎՈՏՆԵՐԻ ՈՒՂԻԴ ԴՐՎԱԾՔԻ

Վոտների դրվածք կոչվում են ձիու իրանի համեմատությամբ վոտների դրությունը և նրանց ուղղությունը գեպի գետին:

Ձիու վոտների դրվածքը վորոշելու համար, ձին կանգնեցնում են հարթ տեղ և դիտում առջևից, յետեկից ու կողքից:



Նկ. 73. Առջևի վոտների
ուղիղ դրվածք:

Ա—առջևից, Բ—կողքից:

Նկ. 74. Յետեկի վոտների
ուղիղ դրվածք:

Ա—յետեկից, Բ—կողքից:

Առջևի վոտների դրվածքը համարվում է ուղիղ այն դեպքում, յերբ իրանի տակ վոտներն ուղղահայաց են և իրար զուգահեռ (նկ. 73): Ուղիղ դրվածքի ժամանակ ուղղահայաց գիծը, վոր իջեցվում և առջևի բազկային հողից մինչև գետին, անցնում է վոտի միջով և յեղինային մասի մեջանով, բաժանելով վոտը յերկու հավասար կեսի: Առջևի վոտները կողքից դիտելիս, բազուկի միջտեղից մինչև կապային հողն իջեցրած ուղղահայաց գիծն անցնում է վոտի մեջտեղով և փափկանները շոշափելով՝ գետին և հասնում:

Յետեկի վոտների դրվածքը ուղիղ կհամարվի, յեթե յետեկից նաև յեւիս նստային բլրակից իջեցրած ուղղահայաց գիծն ամբողջ վոտը բաժանի յերկու կեսի (նկ. 74): Նույն այդ գիծը, ձիուն կողքից դիտելով՝ կապայինները շոշափելով՝ գետին և


ուղիղ պետք եւ շոշափի կրնկի վոսկրին և գետին ընկնի փափկանաւներից վորոշ տարածություն դեպի յետ, կոճերը պիտի թեքված լինեն, ավելի ուղղորդ (գիրթ), քան թե առջևի վոտներում:

ՍՄԲԱԿՆԵՐԻ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՏՆԵՐԻ ԴՐՎԱԾՔԻ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՆ

Սմբակների վրա ձիումարմնի ծանրության հավասարաչափ բաշխումը հնարավոր եմիմիայն վոտների ուղիղ դրվածք լինելու դեպքում: Վոտների ուղիղ դրվածքի ժամանակ սմբակների ուղիղ ձևը նորմալ յերկույթ եւ իսկ յեթե վոտներն ուղիղ դրվածքից շեղվում են այս կամ այն կողմը, այդ դեպքում ձիու մարմնի ծանրության բաշխումը սմբակների վրա փոխվում եւ սմբակի այն մասը, վորը վոտի վորոշ կետից իջեցրած ուղղահայաց գծին ավելի մոտ եւ գտնվում, ձիու մարմնի ծանրությամբ ավելի շատ ծանրաբեռնված կլինի: Յեղինային պատի ավելի շատ ծանրաբեռնված կեսը կարճանում և ավելի ուղղորդ և դեպի գետին ուղղվում, քան հակառակ, ավելի պակաս ծանրաբեռնված, կեսը: Սմբակի ձևի այսպիսի փոփոխությունն անհրաժեշտ պայման է ձիու մարմնին կայուն նեցուկ լինելու և սմբակը գետնի հետ ավելի հավասարաչափ շփվելու համար:

ՎՈՏՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԴՐՎԱԾՔՆԵՐ

Վոտների լայն դրվածք (վոտները դեպի ցած չոված են (նկ. 75) բնորոշվում և ձիու վոտների ստորին մասը ուղղահայացից դեպի



Նկ. 75. Առջևի Նկ. 76. Առջևի Նկ. 77. Առաջ Նկ. 78. Դիպի յետ վոտների լայն վոտների նեղ դրված վոտ: ուղղված վոտ:
դրվածք: դրվածք:

գուրս թեքվելով. այսպիսի դրվածքի ժամանակ ավելի շատ ծանրաբեռնված է յեղջերային պատի ներսի կեսը. այս մասը հակառակ մասից ավելի կարճ և գեղի գետին ավելի ուղղորդ, և ուղղված, այն ինչ արտաքին պատն ավելի յերկար եղեանի հետ ու ավելի փոքր թեքություն է կազմում. պատի արտաքին կեսի ներբանային յեղը նորմալից ավելի կլոր է, իսկ ներսինը՝ ավելի ուղիղ. Վոտների լայն դրվածքին համապատասխանում են ներսի կողմից շեղ սմբակները:

Պարավարակետի (սանցմայսերի) գրվածքը բնորոշվում է ուղղահայացից գեղի գուրս վոտների թեքվածությամբ, ու սմբակների բանիչների, կարծես թե իրենց առանցքի շուրջը նույնպես գեղի գուրս շրջվածությամբ (ծուռթաթություն). այս դրվածքի ժամանակ սմբակների ձևը նույնն է, ինչ վոր լայն դրվածքինը, բայց ավելի ցայտուն արտահայտված:

Նեղ գրվածք (գեղի ցած վատներն իրար մոտեցած են) (նկ. 76): Այսպիսի դրվածք լինելու գեղքում վոտներն ուղղահայացից թեքվում են դեղի ներս. սմբակի արտաքին կեսը ներսի կեսից ավելի կարճ ու ավելի ուղղորդ կլինի. սատի ներսի կեսի ներբանային յեղը ավելի աղեղնաձև է, քան արտաքինը: Նեղ դրվածքին համապատասխանում են գեղի գուրս շեղ ված սմբակները:


Սմբակների բռնիշերով գեղի ներս ուղղված վոտների գրվածքը: Վոտների այսպիսի դրվածքով սմբակների ձևը, ինչպես նեղ դրվածքի գեղքում շեղ է, բայց ավելի ցայտուն արտահայտված:

Սուած գրված վոտներ (նկ. 77): Վոտների այսպիսի դրվածքի դեպքում սմբակի կրնկային մասերն ավելի յին ծանրաբեռնված, գորի հետևանքով նորմալ կրնկից ավելի կարճ են. բանիչն ավելի գորի հետևանքով նորմալ կրնկից ավելի կարճ են. բայց ավելի յերկար ու թեք և գետնի հետ ավելի փոքր անկյուն է կազմում, քան ուղիղ դրվածքի ժամանակ. այս դրվածքին համապատասխանում է սուրբանկյուն յերկար սմբակը:

Վոտները հաճված են իրանի տակ (նկ. 78): Վոտների այսպիսի դիրքի ժամանակ սմբակի բանիչային մասը, վորպես ավելի ծանրաբեռնված, ավելի կարճ և ավելի ուղղորդ կլինի, քան նորմալ սմբակի վրա. այսպիսի դրվածքի սմբակը բութանկյունաձև (ուղղորդ սմբակ):

Ուղղորդ կոն ունեցող վոտների գրվածք պատահում է կարճ կապուկը լինելիս. այս գեղքում կոճը վերև ընկած վոսկը հետ ավելի բութ անկյունով և միանում, այս դրվածքի սմբակների ձևը նույնպես բութ անկյուն է:

Յետերի վոտների դրվածքի շեղումը նույնն է, ինչ վոր առջեկը համապատասխան անկանոն դրվածքների ժամանակ սմբակների ձևի փոփոխությունները նույնն են, ինչ վոր առջեկի վոտների վրա (նկ. 79):



Նկ. 79. Յետերի վոտների անկանոն դրվածքները:
Ա—լայն դրվածք, Բ—ճիղ դրվածք, Գ—գեղի առաջ դրված վրա,
Դ—գեղի յետ դրված վրա:


ԳԱՅԼՎԱԾՔԻ ՎՈՏՆԵՐԻ ԴՐՎԱԾՔԻ ԿԱՂԱԿՑՈՒԹՅԱՄԲ (նկ. 80)

Սմբակի ներբանային մակերեսը գետնին շփմելու բնույթը վոտի յետ հրելը գետնից և այլն, կախված է վոտների դրվածքից:

Ուղիղ դրվածք ունենալու գեղքում ձին վոտները մեկը մյուսից հավասար հեռավորության (զուգահեռական) վրա յետ առաջ տեղափոխում և գետնին հենվելիք սմբակները հպվում են գետնին ներբանային մակերեսի ամբողջ յեղը:

Լայն և պարավարպետի դրվածքների գեղքում, վոտները միք քիչ աղեղնաձև են տեղափոխվում (յեթե ձիուն գիտենք առջեկից). բարձրացնելու ժամանակ նրանք շարժվում են նախ գեղի առաջ և գեղի ներս, ապա՝ գեղի առաջ ու գեղի գուրս. այն գեղի վոր աղեղի ուսուցիկությունը գարձած է գեղի հակաղիք վատի կողմը: Լայն դրվածքի ժամանակ սմբակի արտաքին կեսը գետնի յետ ավելի շուտ և շփում է ավելի ուժեղ հարված կրում: Զի՞ն գետ-

Նից յետ և մղվում ներբանային յեզրի ներսի կիսով: Այսպիսի ընթացք ունենալու դեպքում՝ ձիերը նախատրամադրված են մի վոտով մյուսին խփել (թորուխ տալ):



«Ա. 80. Զիու ընթացքը՝ կախված վոտանի դրվածքից (յեթե ձիուն դիտենք առջեից կամ յետեից):»


Ա—ուղիղ դրվածքի ժամանակ, Բ—վոտների լայն և պարագաղետի դրվածքների ժամանակ, Գ—նեղ դրվածքի ժամանակ:

Նեղ դրվածքի դեպքում վերջավորությունները նույնպես աղեղնաձև են տեղաշարժվում, բայց այս դեպքում աղեղի ուսուցիկությունը դարձած է դեղի դուրս և ձին վոտները գետնին համարյա հավասարաչափ ե դուրս:

Վերջավորությունների նույնպիսի տեղաշարժում նկատվում են նաև այն դեպքերում, յերբ սմբակների բանիչներն ուղղված են դեղի ներս, այս դեպքում սմբակները գետնին են քավում նախ ներբանային յեղը, ներսի կեսով, ապա արտաքին կեսով յետ հրվում:

Զիուն կողքից դիտելու ժամանակ, յեթե վոտների դրվածքն

ուղիղ ե, սմբակը գետնից բարձրանալով և իջնելով ուղիղ աղեղ կծում (նկ. 81): Վերջավորությունները դեղի առաջ ուղղված լինելու դեպքում, սմբակը գետնից բութ անկյունով և բարձրանում,



«Ա. 81. Զիու վոտների տեղաշարժումը՝ վոտների դրվածքի կապակցությունը (յեթե ձիուն կողքից դիտենք):»

Ա—ուղիղ դրվածքի ժամանակ, Բ—վերջավորությունների դրվածքը դեղի առաջ ուղղված, Գ—վերջավորությունների դրվածքը դեղի յետ քաշած:

Բայց իջնում ե սուր անկյունով: Յետ քաշված վերջավորությունների սմբակները հակառակ կարգով են տեղաշարժվում, այսինքն բարձրանում են սուր անկյունով, իսկ իջնում բութ անկյունով: Առաջ դրված վոտները գետնին հենվելիս ավելի պակաս ցնցում են կրում, քան այն վոտները, վորոնք յետ են քաշված:


ԶԻ ՊԱՅՏԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ* (նկ. 82)

Պայտելու մուրեց ծառայում ե պայտն ամբացներու ժամանակ մեխերը սմբակի մեջ խփելու համար, այլ և, սրահանջված դեպքում՝ մեխերը սմբակից դուրս քաշելու համար: Մուրճի մեկ ծայրը փոքր ինչ հատացած ե և հարթ յերեսով զարկան ունի, իսկ մուրճի մյուս

*) Զափերն ու կշեռը ցույց են տրված համամիութենական ստանդարտով:

ծայրը ատփակ ե, կռացած դեպի ցած և յերկճյուղ ե: Պայտելու մուրճը պատրաստում են 24 միլիմետրանոց կլոր պողպատից: Զարկանը մխվում ե, իսկ կռացը ծայրը (յեղջերիկները) չի մըլսվում: Մուրճի և կոթի քաշը՝ 350 կգ, կոթի յերկարությունը դրվագով (նառաղեկա) 350 մմ ե, կոթի զբվագը իր տակն ե, այսինքն փոքր ինչ թեքված ե (թեքված դեպի ցած): Դրվագը կոթին ավելի լավ ամրացնելու համար նրա ներքեմ և վերեի կողմից փարչիններով յերկաթե թիթեղներ են ամբացվում:

Զիամբքակային աբցանը ծառայում ե՝ հին պայտերը պրեկելու, պայտամեխերի ծայրերը և խիստ յերկարացած սմբակային յեղջերը կտրելու համար: Աքցանը պատրաստվում է 24×12 մմ հատվածքունեցող պողպատից կամ յերկաթից, բայց այս դեպքում շրթերի վրա պողպատ ե յնուացվում: Աքցանի քաշը 1140 գր ե, իսկ յերկարությունը՝ 365 մմ:



Կ, Տ2. Զի պայտելու գործիքներ:
Ա—ձեւամբակային աքցան, Բ—պայտելու մուրճ, Գ—տովըիչ Դ—տաշիչ (աբսեղիա), Ե—կորիչ (սեկաչ), Զ, Հ—սմբակային դանորությամբ և ունի մեկ նականելու:

Պողպատե տովրիչը (ոաշպիլ) ծառայում է սմբակի ներբանային յեղջերի խորդուրություններն ուղղելու և հարթելու համար: Տովրիչի չափը 350—450 մմ ե:

Սմբակային դանակը ծառայում է սմբակը մաքրելու համար և տափակ միակողմանի կամ յերկարությունների բերան ունի բերանը փոքր ինչ ուսուցցիկ ե, ծայրը փոքր կիսաշըրշանով կուցըած ե: Դանակը պատրաստվում է 20×5 մմ չափի պողպատից: Դանակի յերկարությունը կոթի հետ 250 մմ ե, կոթի յերկարությունը՝ 160 մմ, դանակի քաշը՝ 136 գր:

Խիստ յերկարացած և պինդ նել բան ունեցող սմբակները մաքրելու համար զործադաշըրշում ե կտրիչը (սեկաչ, ոտորակ), վորը սմբակային դանակից տարբերվում է իր ծանրությամբ և ունի մեկ

ներան: Սմբակը կտրիչով մաքրելիս նրա բերանը դնում են սմբակի ներբանին և վերիի բութ յեղջերին մուրճով թեթև հարվածում:

Պտութակային զգեստերը հազցնելու յեվ հանելու պայտի բանալին: Դրանով գգեռները պայտին հազցնում և յետ են պտտում: Բանալու անցքի շուրջը յեռացվում է:

Թաքրը ծառայում է պայտած ծիռ պայտին պտութակային գըղեններ հազցնելիս՝ պայտի ճյուղը բոնկելու համար: Թաքրի մի ծայրին, պայտի լայնության չափի մեծությամբ ուղղանկյուն կարուք (վիրեղ) կա, իսկ մյուս ծայրը ինչ ուսուցցիկ (բոնակ) ե: Թաքրը պատրաստվում է յերկաթից: Թաքրի յերկարությունը՝ 245 մմ, իսկ կշեռը՝ 500 գր ե:

Տաշիչը (աբսեղիա) ծառայում է հին պայտը հանելու ժամանակ մեխերի փարչինները (բարաշկա) յետ ծալելու համար: Տաշիչի մեկ ծայրը փոքրիկ կացնի ձև ունի: Այդ փոքրիկ կացինը շատ սուր չպիտի լինի, վորպեղի փարչինները յելելու յեղջերը չվնասվի. կացնիկի վերին յեղջերը բութ պիտի լինի, վորովհետև աշխատելու ժամանակ նրան մուրճով խփում են: Տաշիչի մյուս ծայրը յերկարացած կոնի ձև ունի, ծայրը բութ ե և գործադրվում է սմբակի յեղջերի մեջ դեմ առած մեխերը գուրս հանելու համար:

Տաշիչը պատրաստվում է պողպատից: Տաշիչի յերկարությունը մոտ 200 մմ ե, իսկ քաշը՝ 360 գրամ:

ԶԻ ՊԱՅՏԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ ՑԵՎ ԿԱՆՈՆԵՐԸ*)

ԶԻՈՒ ԶՆԱՌԻՄԸ ՊԱՅՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Վորպեսպի ձին կանոնավոր պայտվի, պայտելուց առաջ պայտառը պիտի նրան զննի հանգիստ վիճակում և շարժման մեջ (քայլելիս, վարզով (ըիս) գնալիս): Հանգիստ վիճակում վորոշվում ե վոտների գրվածքը, սմբակների ձևը, սմբակների ձևը վոտների գրվածքին համապատասխանելու և սմբակի յեղջերային մասերի պատի, ներբանի, ոլաքի և սպիտակ գծի դրությունը: Վոտների գրվածքը վորոշելու համար ձիռն կանգնեցնում են հարթ տեղ այսպես, վոր նրա վոտները բնական դրություն ընդունեն և առջևից, կողքից ու յետեղից զննում են:

Վերջավորության ստորին մասերը զննելիս, յեղջերային պատի

*) «ԲԳԿԲ-ում» ձիեր պայտելու հրահանգը. ԲԳԿԲ-ում զործող վորոշումների 1932 թ. XI գիրք:

վերին յեղի վրա կարող են հայտաբերվել՝ այսումներ, թորուխի տեղեր, քերծվածքներ, սմբակի ներռում թարախային անցքեր, պատկի յերկարությամբ դգայուն մասերից յեղերի պոկված տեղեր և այն. Այսպիսի դեպքերում պայտառն անառաբուժի ողնությանն ե դիմում: Յեթե յեղերային պատի վրա հայտաբերվում են ճեղքեր, ճաքեր, յեղերային կոշտեր, ողակներ, խորդուբորդություններ, ներքանի յեղի կոտրվածքներ, յեղերային պատի ծովածքներ և այն, պետք ե հատուկ ձեռվ պայտեր:

Յեղերային ներբանը զննելիս վորոշում ե նրա գողավորությունը և ճմուկածքների (նամենկա) առկայությունը: Յեթե ներբանը տափակ է, ապա պայտի վրա բուխտովկան ավելի խոր ե արվում, իսկ ճմուկածքները համապատասխան բուժում են պահանջում:

Յեղերային սլաքը զննելիս ուշադրություն պիտի դարձնել սլաքի զարգացման, ձեր և յեղերի վորակի վրա, արդյոք սլաքում չեն կուտակվել կողմանակի առարկաններ, որինակ՝ մեխեր, վոսկըներ, փայտի կտորներ և այլն. Այդ կողմանակի առարկաններն անհապաղ պիտի հեռացվեն, իսկ պահանջված դեպքերում՝ գործադրել բուժում:

Սպիտակ գիծը զննելիս ուշադրություն պիտի դարձնել նրա ամբողջության վրա: Յեթե սպիտակ գիծը փշրվել է, ապա քիչ մեխերով թեթև պայտ են ամբացնում:

Յեթե սմբակները պայտակած են, սպիտակ գծի զննությունը կատարվում ե հին պայտը պոկելուց հետո:

Այսուհետեւ ձին զննվում ե հարթ գետնի վրա մանգալիս: Նախ ստիպում են ձիուն ման ածել քայլով, ապա վարդով, ըստ վորում ուշադրություն են դարձնում, թե վորչափ ազատ ե հենվում բոլոր վերջավորությունների վրա (արդյոք ձին չի կաղում), ընթացքի վարդակական վրա (առջնի և յետեր վոտ (առաջ շարժվելու) կանոնավորության վրա (առջնի և յետեր վոտ և ներով թոքության): Թոքության տվող ձիերի համար հատուկ պայտ և պատրաստվում: Ձիու կաղալը հայտաբերելիս պայտառը գիմում և անաօնաբուժական ողնության: Մինչև պայտելը ձիու կաղության հայտաբերումը պայտառին կազատի անհիմն մեղադրանքներից, վորի թե կաղալն առաջացել ե պայտելու հետեանքով:

Ձիուն վարդով քշելու ժամանակ զննելն անհրաժեշտ է, վորով հետեւ քայլով քշելիս յերբեմն դժվար ե լինում ձիու կաղությունը վորոշել:

Շարժման մեջ ձիուն փորձելուց հետո պայտառը զննում ե ձիու սմբակների վրա հին պայտելը, ուշադրություն ե դարձնում, թե կանոնավոր են արդյոք պայտելը կալչում սմբակին, և ամբողջ յերկարությամբ հավատարաշմի են արդյոք մաշվել: Կանոնավոր պայտելու

դեպքում պայտի յերկու ձյուղն ել հավասարաչափ են մաշվում, իսկ գղերը՝ ավելի շատ: Պայտի ձյուղերի անհավասար մաշվելը մեծ մասամբ կախված ե սմբակն անկանոն մաշքելուց:

Պայտի կողերը, այլև ձյուղերի ծայրերը դննելու ժամանակ պարզվում ե՝ կողերի և ձյուղերի ծայրերին չկան արդյոք կոկված տեղեր կամ ճանկավածքներ, վորոնք յերբեմն արյունոտված են լինում: Կողերի վրայի կոկված տեղերը թոքության տալու նշաններ են, իսկ ճանկավածքները՝ յետեկի վոտով առջևի վոտին խփելու նշան:

Զննության հետևանքների հիման վրա պայտառը վորոշում ե, թե ինչպես պայտի ձին և ինչպես ուղղի նախորդ պայտման թերությունները:

գուրս պրծած լինում: Բռնիչային պատն ավելի քիչ թեքություն ունի, քան նորմալ սմբակինը և գետնի հետ կազմում է մոտ 30°-ի անկյուն, կողքի պատերը նույնպես թույլ թեքություն ունեն: Սմբակի յեղջերն ավելի փխրուն ե, սմբակի պատի վրա նկատվում են ողակներ (նկ. 118):

Տափակ սմբակը ձմռտվելու և ճաքելու տրամադիր ե: Տափակ սմբակը տաշելիս ներբանի յեղջերը բոլորովին չպիտի կարել իսկ յեղջերային պատի ներբանային յեղջեր կարվում է միմիայն բռնիչային մասում:



Նկ. 118. Սմբակի
ողակավորում:



Նկ. 119. Տափակ
սմբակի համար խորը
բուխտառվկով պայտ:



Նկ. 120. Լիքը
սմբակ:

Տափակ սմբակները պայտելիս գործադրվում ե լայնաճյուղ և բուխտառվկան ավելի խոր պայտ (վերին մակերեսի ամբողջ լայնությամբ, մինչև մեխերի անցքերը) (նկ. 119), կամ վայտի ձյութով տոգորված խծուծե աստառով ու կաշվով կլոր պայտ:

Հետագայում, յեթե տափակ սմբակ առաջացնող պայմանները վերացված չեն, յեղջերային ներբանը կարող ե իջնել ավելի ցած, ընդունելով ուռուցիկ ձե: Այդպիսի սմբակները կոչվում են «լիքը» (նկ. 120): Լիքը սմբակ ունեցող ձիերն առանց պայտի չեն կարող քայլել, մանավանդ պինդ գետնի վրա, վերապայտելիս, ոկրում պայտահան ե արվում, տաշվում և պայտվում ե նախ մի վատը, ապա՝ մյուսը: Լիքը սմբակները պայտելու համար նույնպես գործադրվում ե խոր բուխտառվկայով կամ աստառով կլոր պայտ:

ՅԵՂՋԵՐԻ ՎՈՐԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ

Յեղջերի փխրունուրյունը: Յեղջերի փխրունուրյան պատճառն ավելի հաճախ հանդիսանում է սմբակի չոր վիճակում պահելը (պինդ

հատակի վրա առանց ցամքարի, տաք ախոռում): Ուստի յեղջերի փխրունուրյունը կանխելու համար անհրաժեշտ ե ամեն որ սմբակի պատերն ու ներբանի մասերը ջրով լվանալ: Խանգարված արյան շրջանառություն ու սննդառություն ունեցող նեղ և շեղ սմբակներն առանձնապես տրամադրված են յեղջերի փխրունուրյան:

Պինդ հողի վրա աշխատելիս չոր և փխրուն յեղջերը ունեցող սմբակները հեշտությամբ կոտրվում են և պայտելու ժամանակ ճաքճքվում: Յեղջերը փափկացնելու համար սմբակի վրա խոնավ կոմպրեներ են գործադրվում (ջրով թրջված փալածներով) կամ ձիուն կանգնեցնում են թաց կավահողի մեջ: Փափկելուց հետո պատին և ներբանին մաքուր (անալի) ճարպ են քռում:

Փխրուն սմբակների համար պահետի մեխանցքներով, կողքի և լրացնելով վահանիկներով թեթև պայտեր են գործադրում: Պայտերն ամբացնում են բարակ մեխերով, մեխերը խփում են այնտեղ, վրատեղ յեղջերը կոտրված չե: Փխրուն սմբակը պայտելիս գործադրվում ե աստառով կլոր պայտ, վոտը գետին տալիս ցնցումները մեղմացնում ե: Այդպիսի սմբակ ունեցող ձիերը համարավորին չափ ուշաց են վերապայտվում:

Յեղջերի փափկուրյուն (բունածուրյուն): Թոշնած յեղջերով սմբակներ ունենալուն տրամադրված են տափակ և լիքը սմբակավոր ու ցածրադիր վայրերում մեծացող ու ապրող ձիերը: Ախոռի հատակի կեղ: ոտ ու խոնավ (գոմաղբ, մեղ) պահելը, նույնպես նպաստում է յեղջերի թոշնելուն:

Յեղջերը փափկանում, կորցնում և իր առաձգականությունը և հեշտությամբ ջարդվում ե:


Յեղջերին ամրություն տալու համար գործադրում են տերպենտին, վորը քսվում ե սմբակին և տաք յերկաթի կտորով տաքացվում: (Տաք յերկաթը պահել յեղջերանյութից քիչ բարձր, վորպեսզի յեղջերը չայրվի): Տերպենտինը ծծվելով, սմբակը պաշտպանում ե ավելորդ խոնավություն մտնելուց:

Փափուկ յեղջեր ունեցող սմբակները պայտելիս, գործադրվում են թեթև պայտեր և խփում են ավելի բարակ պայտամեխերը: Քանի վոր (փափուկ) թոշնած սմբակների վրա հաճախ ճմուկված քներ, տափակ և նույնիսկ ուռուցիկ ներբան ե գոյանում, այդպիսի սմբակները պայտավում են աստառավոր կլոր պայտով:

ՅԵՂՋԵՐԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

Սմբակնի յեղջերապատի նեղինը (նկ. 121): Սմբակների չոր պահելը, սմբակի յերկու կողմը մաքրելու ժամանակ յեղջերի՝ անհա-

վաշար տաշելը, պայտի թույլ նբառելը, յեղջերապատի գլազուրի (փայլաներկի) խարտոցելը, պայտելու ժամանակ խոշոր մեխիեր ու ծանր պայտեր գործադրելը, հաճախակի վերապայտումները և այլն նպաստում են ձեղքեր առաջանալուն:



Նկ. 121. Ձեղքեր և ճաքեր ունեցող սմբակ.

Ա, Բ—ներբանային ձեղք,
Գ, Դ—պատակային ձեղք, Ե—ճաք,

Բոնիչի մասում պատակից մինչև ներբանային յեղքն անցնող լերկայնակի միջանցիկ ձեղքը կոչվում է «յեղան», կամ «յեղան ձեղք», վորովհետև նա կարծես թե սմբակը յերկու մասի յերաժանում և նմանեցնում յեղան կճակների:

Մակերեսային ձեղքերը ցավազգաց չեն և կաղություն չեն առաջացնում: Միջանցիկ ձեղքերը ձիու կազալու պատճառ են հանդիպանում, վորովհետև կմստում են սմբակի զգայուն մասերը. թարմ ձեղքերից արյուն և գալիս, իսկ հետագայում՝ թարախ:

Յերկայնակի, միջանցիկ ձեղքերը վերեխից և յերբեմն ներքենից անընդհատ ճնշման տակ լինելով, կարող են իրենք իրենց առողջանալ: Ձեղքն առողջ յեղջերից առանձնացնելու համար, նրա ծայրերում, յեղջերի վրա լայնակի կիսուլուսնաձեռ կտրվածք և արվում: Ձեղքի ուղղությամբ յեղջերը բարակացնել չի հարկավոր, վորովհետև բարակած պատը կարող է շուրջ գալ և ել ավելի սեղմել սմբակի զգայուն մասը: Յեթե ձեղքը հասնում է ներբանային յեղքին, այն գեպքում ներբանային յեղքի մոտ ձեղքի դիմացը յեղջերի մի մասը կտրվում է, վորպեսզի պայտի և ձեղքի միջն արանք մնա:

Յեթե ձեղքը գտնվում է բոնիչի մեջտեղում, ապա պայտի մեջտեղում վահանիկ չի շինվում, այլ յերկու վահանիկ և հանվում այն հաշվով, վոր նրանք ընկնեն ձեղքի յերկու կողմքը: Յեթե ձեղքը

գտնվում է կրնկի մասում, ձեղքի յետևում պայտը սմբակին չպիտի կպչի:


Սմբակային ձեղքերն ամրացնելու համար գործադրվում են յերկաթե փոքրիկ կազեր (կարթեր), թիթեղներ, պտուտակներ և բութ գլխանի մեխիեր (զակլյոպկա):

Դուրգամներով (բութ մեխիերով) ձեղքերն ամրացնելն ամենապիտանի, ամուր, հժան և հեշտությամբ կատարելու միջոցն են: Դրա համար սմբակի դանակով կամ ակոսավոր գրով, ձեղքի յեղջերից 10—12 մմ հեռավորության վրա յերկու կողմում, մելը մյուսի դիմաց, 4—5 մմ խորությամբ փոսիկներ են փրում: Փոսիկների մեջտեղը բզով, ուռը ձողիկով կամ մաթիսարով (դրել) ձեղքի յերկու յեղջերի միջն անցքեր են ծակում (նկ. 122): Անցքերը ծակելու ժամանակ բիզը կամ մաթիսարը չպետք են շեղին դեպի ներս կամ դեպի զուրս: Դուրգամները պատրաստում են 2—3 մմ հաստության պայտամեխից: Դուրգամները կարող են լինել կիսածվածե կամ կլոր ձևի, առանց ցլեպի (քցիմ) և սուր անկյունների: Դուրգամները դնում են անցքի մեջ և ծայրերն իրար հանդեպ ծռում: Դուրգամների ծայրերն աքցանով ձգելիս՝ ձեղքի յեղջերը մոտենում են: Դուրգամների ծայրերը փարչինում են այսպես, ինչպես պայտամեխերի փարչինները: Ձեղքերն ամրացնող գուրգամների քանակը կախված են սմբակի միջությունից, ձեղքի յեղջերի հաստությունից (նկ. 123):

Ձեղքերն ամրացնելու համար գործադրում են նույնպես տարբեր



Նկ. 122. Ձեղքը յեղերք-ների միջով գայլիկոնելլ:



Նկ. 123. Դուրգամներով ամրացրած ձեղք:

ձեմ պղնձե կամ յերկաթե թիթեղներ, վորոնք դնում են ճեղքին լայնակի և պտուտակներով ամրացնում ռմբակին. գործադրում են կարծ, խոր ակոսավոր և որածայր պտուտակներ. Պտուտակները պիտի բռնեն յեղջերի միայն միջին հաստ շերտը, հակառակ դեպքում նրանք կարող են վիրավորել սմբակի զգայուն մասերը: Հատուկ կապերով (կարթերով) ձեղքերն ամրացնելու համար պահանջվում են առանձին գործիքներ (խորշերն այրելու թիակ, կապերը ձգելու ունելիք): Կապը հաճախ ամուր չի լինում, կրնկի մասերում ճեղքերն ամրացնելու համար, վորտեղ յեղջերն ավելի բարակ է, կապեր չեն գործադրում:


Ճեղքերն ամրացնելու ժամանակ պտուտակներով նախապես յեղջերապատի վրա փոսիկ են անում և անցքը զայիկոնով ծակում, ինչպես նկարագրված ե զուրգամներով ճեղքերն ամրացնելու դեպքում: Ծակած անցքի մեջ դնում են բարակ պտուտակ, վորը ճեղքի յեղքերն ամրացնում և ձգում է: Կրնկի ճեղքերը պտուտակներով չի կարելի ամրացնել:

Յեթի ճեղքը ցավզաց է, նրանից արյուն կամ թարախ և հոռում, պետք ե բուժել և բուժելուց հետո միայն ճեղքը կարել, Ցավզագաց-

ցության և արյուն հոսելու դեպքում սառը կոմպրեներ են գործադրում, իսկ թարախակալվող ճեղքերը բուժելիս՝ ախտահանիչ լուծութներով (կրիոլին) տաք լոգանքներ (վանսաներ):

Սվորաբար ճեղքերը կարելուց 3-4 որ հետո կաղությունն անցնում և և ձիուն կարելի յեղջերի լայնակի ճեղքերը կոչվում են «պատովածքներ». այդպիսիք յեղջերի աճման հետ միասին, մեծ մասամբ, ցած են իջնում: Պատովածքները չեն կարգում. ցեխը մաքրելուց հետո նրանց մեջ կարելի յեղնել տերպենտինի և մոմի ոճանելիք (նկ. 124):

Յեղջերապատը անջատված յեվ գատարկ պատերով սմբակներ (նկ. 25): Անջատված կամ բաժանված յեղջերապատ հաճախ պատառում և առջնի սմբակների վրա, և առաջանում և սպիտակ գծի քայլակներու հետեւանքով, դրա հետ միասին խանգարվում է յեղջերապատի



Նկ. 124. Պատովածք:

և յեղջերի ներբանի միացումը: Պատի անջատվելու հիմնական պատճառներն են՝ ախոռի հատակի կեղտու պահելը, վորից սպիտակ գծի յեղջերը քայլակներու ու նրա հետ սպիտակ գծի չափից ավելի տաշելը: Պայտի անջատվելը հայտնի յեղնում սպիտակ գծի ուղղությամբ փոսիկ առաջանալով, վորը ցեխով ելցվում: Հենց պատի հաստության մեջ յեղջերի թերթիկային և խողովակային շերտերի իրարից անջատվելը «դատարկ պատ» անունն ե կրում: Դատարկ պատը միշտ ել սպիտակ գծից չի ուսպիւմ. այդպիսի դեպքում այն կարելի յեղջերապատի պատի վրա դուրս ցցված տեղով կամ յեղջերապատին ընդբաղիսելու ձայնից:

Անջատված կամ դատարկ պատ ունեցող սմբակները յենթակա յեն՝ պատի փշրկելու, ճաքելու, տափակ սմբակ առաջանալու և ճմուղելու: Նրանց ուղղելու համար պետք ե նախ և առաջ վերացնել պատճառները և ալա սմբակը կանոնավոր մաքրել: Անջատված պատ ունեցող սմբակները պայտում են լայնաճյուղ պայտով, ըստ վորում ներբանի արտաքին յեղը պետք և նստի պայտի մակերեսի վրա:

Դատարկ պատ ունեցող սմբակներին ամպած պատով սմբակը բացնում են սովորական, կամ ավելի լավ և, հարթ պայտ, դատարկ պատի յերկարությամբ սմբակի ներբանային յեղը տաշում են այնչափ, վոր պայտին չկացի: Անջատված կամ դատարկ պատ ունեցող սմբակների համար պայտ պատը առաջանալու ժամանակ, մեխանցքերն արվում են այն հաշվով, վոր նրանք ընկնեն սմբակի առողջ մասերի դիմաց: Պատի վրայի ճնշումը նվազեցնելու համար առառով կլոր պայտ են գործադրում:


Պայտն ամրացնելուց առաջ պատի դատարկ տեղը կեղտից ու փշրկող յեղջերից մաքրվում և և լցվում տերպենտին կամ մաքուր փայտի ձյութով թրջած տամպոններով (խծուծ ե):

Յեղբեմն դատարկ պատերում թարախ և գոյանում, նման դեպքերում պետք ե զիմել անառնաբուժական ողնության:

ՄՄԲԱԿԻ ԶԳԱՅՈՒՆ ՄԱՍԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ

Մեխով զցելը: Սմբակի մաշկի հիմքի վնասվելը, կամ պայտամեխը խփելիս նրա վրա ճնշում գործադրելը կոչվում և մեխով զցել (նկ. 126):

Մեխով զցելու պատճառներն են՝ պայտառի անհմտությունը,



ճմուտվածքները կոչվում են թարախային։ Անխնամ թողնելուց թարախը կարող է թափանցել մինչև մաշկահիմքի պատի մակերեսը, բարձրանալ և պահի մոտից դուրս գալ։

Ամենից առաջ անհրաժեշտ է ճմուտվածքների պատճառները պարզել և վերացնել նրանց։

Ճմուտվածքները դոյանալու ընթացքում, նրանց հայտնաբերելիս՝ ձիռ կաղալու և ցավ զգալու դեպքում, սմբակը պայտահան են առում։ այնուհետև յեթե թարախակույտ և կեղոտություն չկա, 2—3 որ շարունակ գործադրում են ռառը կոմպրեներ, ու ձիռն ազատում աշխատանքից։

Յեթե յեղջերային ներքանի տակ թարախ է կուտակվել, պետք ե մաքրել այն դրա համար ճմուտվածքի դիմացի ներքանի լեղջերը զգուժությամբ փորում են, վորպեսզի թարախը դուրս գա։ Յեղջերը կորելուց հետո ախտահանիչ լուծույթով լոգանքներ կամ լվացումներ են անում և կապում։

Ցավն անցնելուց հետո ձին մեծ մասամբ պայտում են խծուծներ և կաշվե աստառավոր կլոր պայտով։

ՍԼԱՅԻ ՆԵԽՈՒՄԸ

Սլաքի նեխելու հիմնական պատճառներն են՝ ախոռի հատակի կեղանոտ պահելը և սմբակը մաքրելու ժամանակ սլաքի յեղջերի չափեց ավելի տաշելը։ Բարձրագույն պայտով պայտելին արգելում և ոլաքի գետնին կպչելը և արյան կանոնավոր շրջանառությունն ու ոլաքի փակելու տրամադրում։ Խոր բուխտովկայով լայն պայտ կպցնելը, յերբ պայտի տակ ցեխ ու գոմաղը և կուտակվում, նույնպես կարող ե ալաքի փակելու պատճառ հանդիսանալ։ Շարունակ ախոռում պահող և քիչ բանող ձիերը ոլաքի փառումով տառապելու տրամադրի են։ Սլաքի փառումը յետին սմբակներում ավելի հաճախ և պատահում։

Փակելիս սլաքի յեղջերը ճաքճքվում է և ամբողջ լաթերով անջատվում է, ճաքում և լաթերի տակ մոխրագույն, գարշահոտ հեղուկ և լինում։ Սլաքի փառումն անխնամ թողնելու դեպքերում սլաքի մաշկի հիմքը մերկանում է։

Սլաքը փակելուց պաշտպանելու համար պետք է հետեւ ախոռի մաքրությանը, ամեն որ մաքրել ներքանի վրա կուտակված ցեխը և սմբակները, առանձնապես նրանց ներքանային մասերը, լվանալ։

Սլաքի փառումը վերացնելու համար սլաքի վրայից պետք է


կտրել բոլոր պոկված լաթերը և ճաքճքված յեղջերը, սմբակի ներքանը լվանալ և ոլաքի ակոսների մեջ դնել կրիոլինով։ Փորմալինով (1 տուկուային լուծույթ) թրջած բամբակ և այլն Սլաքների փառում ունեցող վատները պայտելու համար (յեթե մաշկի հիմքը չի մերկացնել) ավելի լավ և ոգտվել անգղեռ հարթ պայտով։ Այն դեպքում, յերբ մաշկի հիմքը մերկացած է պիտի բուժել անսանաբուժի կամ բուժակի ցուցումով։

ՍՄԲԱԿՆԵՐԻ ՌԵՎՄԱՏԻ ԲՈՐԲՈՅԻ ՈՒԽ

Սմբակների ռեմատիկ բորբոքման հիմնական պատճառները մըսելու բնույթի պատճառներն են։ տաքացած և քրտնած ձիերին սառը ջուր տալուց միջանցիկ քամում քրտնած ձիերին արագ սառոցներուց։

Դիվարամարս կերեկով կերակրելը (տարեկան ցորեն, գարի, գարնան ցորեն, կանաչ յերեքնուկի խոտ), մանավանդ տաքացած ու քրտնած ձիերին, հաճախ նույնպես սմբակների ռեվմատիկ բորբոքում և առաջացնում։ Հիվանդանալու տրամադրի են տափակ, լիքը և շեղ սմբակները։ Յեթե հիվանդանում են միայն առջեկի սմբակները, ձին խիստ ցավ զգալով, առջեկի վոտներն առաջ և դնում, իսկ յետին վոտները քաշում և իրանի տակ։ Բոլոր չորս սմբակների հիվանդանալու գեղագում ձին գժվարությամբ և առաջ շարժվում և փոքր քայլեր և անում, վոտը բարձրացնելով, արագ իջեցնում և գետին, հենվելով նախ սմբակի յետեկի, տպա առջեկի մասի վրա։ հաճախ ձին ամենային չի կարողանում առաջ շարժվել ու պառկում է։ Սմբակը շոշափելիս ջերմություն և նկատվում պսակին սեղմելիս ձին ցավ և զգում։


Գետնին ձիու անկանոն հենվելու և հիվանդագին պրոցեսի հետեւան-




Կտ. 129. Վողնաձև սմբակ։

Ա—ալտաքին տեսք, Բ—յերկայնակի կտրվածք։

քով թմբակոսկրը կարող ե տեղաշարժվել և բռնիչով խոնարհվել գեղի ժար ու յետ։ Մաշկի հիմքի պակիսերն ու թերթիկներն ընդունում են անկանոն ուղղություն, վորի վերջում խախողում ե յեղերի նորմալ անը Սմբակն անկանոն և հաճախ այլանդակ ձև ու ոտանում, սմբակի լայնակի տրամագիծը նեղացած ե, բռնիչի պատը գետնի հետ կազմում ե 20—25°-ի անկյուն, ստորին առաջնային մասում պատը խիստ հաստացած ե, ծածկված ողակներով, վորոնք բռնիչի մասում մոտենում են իրար և կրունկների ուղղությամբ իրարից հետանում։ Ներբանը տափակ կամ նույնիսկ ուռուցիկ ե, բռնիչի մասում ռպիտակ գիծը լայնացած ե, յեղերը փափկանում և փխրունանում ե։ Այսպիսի սմբակը վողնաձև է կոչվում (նկ. 129)։



Նկ. 129. Վողնաձև
սմբակի տաշելը։



Նկ. 130. Վողնաձև
սմբակի տաշելը։

Վողնաձև սմբակի տաշելն ու պայտելը հետևյալ ձևով ե կատարվում։ յեղերապատի առաջնային պալարաձև դուրս պրծած մասը տովրիչով քերում են, և ներբանային յեղըն այնքան հն կտրում, վոր ձին կարողանա հավասարաչափ հենվել գետնին (նկ. 130)։ Վողնաձև սմբակի պայտի բռնիչի մասում վահանիկ չեն շինում, այլ նրա փոխարեն շինում են 2 կողքի փոքր վահանիկներ։ Պայտը բռնիչի մասում ավելի լայն են անում, ըստ վորում բռնիչի մոտ, պայտի ու սմբակի մեջ, փոքր տարածություն են թողնում (նկ. 131)։ Վողնաձև սմբակները նպատակահարմար ե պայտել կոր պայտով, դնելով կաշվել և խծուծե աստառ։

ԵՇԵՐԻ, ԶՈՐԻՆԵՐԻ ՅԵՎ ԼԾԿԱՆ ՅԵԶՆԵՐԻ ՊԱՅՏՈՒՄԸ

ԵՇԵՐԻ ՅԵՎ ԶՈՐԻՆԵՐԻ ՊԱՅՏՈՒՄԸ

Եշերի սմբակը ձևով նեղ ու յերկար ե, բռնիչի մասն ավելի յեկլորացած, յեղերապատն ավելի հաստ ե, ուղաքն ավելի զարգացած։ այս նշաններով եշերի սմբակը տարբերվում ե ձիու սմբակից, եշերին

և ջորիներին պայտելու համար գործ ե ածվում նույն ձևի պայտ, ինչ վոր և ձիու համար, բայց պայտն ամրացվում ե սմբակին ավելի կարծ ու հաստ մեխերով, վորովհետեւ խփելիո բարակ մեխերը սմբակի մեջ ծովում են։


ԼԾԿԱՆ ՅԵԶՆԵՐԻ ՊԱՅՏՈՒՄԸ

Յեզն ու գոմեցն ունեն յերկու կճղակ (արտաքին և ներսի), իրարից բաժանված կճղակային ձեղքով։

Կճղակները յեղերապատն սլաք չունեն, ուղաքի փոխարեն ավելի զարգացած են յեղերապատն ավելի բարակ ե, արտաքին պատն ուռուցիկ ե, իսկ ներսինը, վոր դարձած ե զեպի կճղակային ձեղքը—գողակոր ե և ունի ուղղահայաց ուղղություն։ Յեղերապատի և ներբանի կառուցվածքը նույն ե, ինչ վոր և ձիունը (գլազուր, խողովակային և թերթիկային շերտ, ներբանի վրա սպիտակ գիծ)։ Սմբակի յեղերի ածն ու մաշվելը կատարվում ե ճիշտ այնպես, ինչպես ձիունը, ուստի պինդ գետնի վրա բանող յեզները պայտվելու կարիք ունեն։

Յեզներին պայտելու համար գործ են ածում 5—6 մմ հաստությամբ յերկաթե թիթեղներ, վորոնք մեխվում են առանձին կճղակներին և բացի դրանից, ամրացվում են մեկ կամ յերկու լահանիկով։ Նրանցից մեկը շինվում ե բռնիչի մասում, իսկ մյուսը կճղակի կողմային մասում։ Թիթեղի վերին մակերեսը պետք ե հարթ լինի, մեջտեղը աննշան բուխտովկա թիթեղի ստորին մակերեսի վրա, հնարավորին չափ արտաքին յեղըին մոտ, ակոսիկ ե արվում, 4—5 մեխանցքով։ Յերբեմն բռնիչային և կրնկային մասերում փոքր գզեռներ են շինվում։ Գործադրվում են նույնպիսի մեխեր, ինչպես ձիերի համար, սակայն չափով ավելի, վորովհետև յեզան յեղերապատն ավելի բարակ ե, քան ձիունը. այդ իսկ պատճառով մեխերը պիտք ե խփելի յեղերապատի բարձրության $\frac{1}{4}$ -ից վոչ բարձր (նկ. 132)։

Յեզներին պայտելու ժամանակ ներբանը զգուշությամբ պիտի մաքրել և խուսափել պայտը սմբակին ամուր սեղմելուց։



Նկ. 132. Լծի յեզների պայտումը։ Ա—յեզան կճղակի պայտ, Բ—յեզան պայտած կճղակներ։

ԴԱՐԲՆԱՊԱՅՏԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶԵՌՔՈՎ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մետաղների փականագործական մշակման գործիք: Դարբնոյում խարսոցները ծառայում են մշակման յինթակա առարկաների մակերեսը հարթելու, հղկելու և կտրող գործիքների բերանները սրելու համար (ձիառմբակային աքցան, հատիչ, ակոսահատ, ծակիչ, սմբակային դանակ):

Խարսոցները պատրաստվում են պողպատից: Խարսոցները լինում են՝ տափակ, յեռակող, քառակող, քառակուսի, կլոր և կիսակլոր: Խարսոցի մակերեսները ծրատված են իրարից հավասար հեռավորության վրա գոնզվող առամներով (աշխատող մակերես): Ծրատն իր մեծությամբ տարբեր են լինում: Խոշոր ծրատվող խարսոցը կոչվում է քերիչ (գրաչովի), մանրատամբ՝ յերեսային (լիչնի), իսկ բոլորովին մանրատամբ՝ հղկիչ (շլֆինի): Կոթ հազցնելու համար խարսոցի մի ծայրը սուր ե լինում:

Խարսոցները պետք ե պատրաստվեն լավ պողպատից, ունենան բավական կարծր մուխ, ուղիղ ձև, սուր և միակերպ ծրատ ու բաց մոխրագույն կոտրվածք: Խարսոց ընտրելիս կարծր մուխը վորոշում են այսպես, վերջնում են նախորդ ստուգված խարսոց և նրանով խարսոցում փորձվելիք խարսոցի առամները: Այն դեպքում, յեթե մուխը թույլ է, փորձվելիք խարսոցի առամները կծռմովեն: շատ կարծր մուխ տված լինելու դեպքում առամներն ընդհակառակ կփշվեն, իսկ լավ մուխ տվածի առամները կման անփոփոխ:

Գործածությունից բթացած խարսոցները կարելի յե մեքենայով նորից ծրատել: Հին, մաշված խարսոցները հաճախ դարբիններն ողագործում են և նրանցից պայտի մեխանցքերը ծակելու ձողիկներ են պատրաստում: Խարսոցները շուտ փշանալուց պաշտպանելու համար առամների արանքները լցված մետաղի թեփը մաքրում են մետաղի խողանակներով:

Ժանգից պաշտպանելու նպատակով խարսոցներին հատուկ խառնուրդ են քսում (կերսուին 16 մաս, ոլիֆ 13, ցինկի սպիտակ ներկ (բեկլիա) 0,5 և սիկատիկ՝ 0,5 մաս), քսելուց առաջ խարսոցները բոլորովին չոր պետք ե լինեն:

Բացի գրանից, դարբնոցի գործիքների թվում պետք ե ունեալ՝

1. Զեռնասղոցներ՝ մետաղ կտրելու համար;
2. Մկրատ՝ յերկաթե բարակ թիթեղ կտրելու համար;
3. Պառատակային (առակոսային) տախտակ՝ փոքր չափի պառատակներ պատրաստելու համար:

4. Կլուպներ, դնդերիթների (բոլտերի) և 3 մմ-ից ավելի արամագիծ ունեցող պտուտակների ակոսները հանելու համար: Յուրաքանչյուր կլուպ կազմված ե բոնակավոր դագղահից և տարբեր չափի պլաշկաների կոմպլեկտից:

5. Պողպատե նշիչներ (մետչեկներ), պայտի պտուտակային անցքեր ակոսիլու համար:

6. Կրոնցիրկուլ (ծուռ մատնանի կարկին), կլոր առարկաների արտաքին տրամագծերը չափելու համար:

7. Ներսաչափ (նուտրոմետր), անցքերի ներսի արամագծերը չափելու համար, ներսաչափ չինելու գեպքում, չափումներ կատարելու համար, ոգտվում են բաժանումներ ունեցող քանոնով:


8. Սրոցաքարեր, հետաներ (բրուսոլ), զմոնիտի (նաժդակի) բոլորակներ, այնպիսի գործիքներ որելու համար, վոր մետաղի կարծրության պատճռով չեն կարող խարսոցով սրվել:

Սրոցաքարերն ու հետանները պատրաստվում են կավային և լրային ավաղաքարերից: Սրելու հետանները զանազան չափի յեն լինում: Նրանք ել սրոցի պես կավային ավաղաքարերից են պատրաստվում: Գործիքներն ավելի նուրբ որելու համար հետանները թերթաքարից (ոլանեց) են պատրաստվում:

Ճմոնիտի բոլորակներն արհետական սրոցաքարեր են. պատրաստում են զմոնիտի փոշուց և բավական ավաղի սրոցաքարերից ավելի կարծր, լավ ու հարմար են:

Մետաղի խարսոցելք: Մետաղ խարսոցելք կատարվում է խարսոցներով: Խարսոցելքը Խարսոցներում ամենակ մետաղն ամրացվում և մամլակի (տիսկի) մեջ:

Խարսոցելքը համար աշխատակելի բարձրությունը վորոշվում և դարձնի հանակի համեմատ այն հաշվով, վոր խարսոցի ոկզրնական դրության ժամանակ նախաբազուկը հորիզոնական դրության մեջ լինի, իսկ բաղկուկը՝ ուղղահայց իջած (նկ. 133):



Նկ. 133. Աշխատողի գիրքը
խարսոցելքը ժամանակ:

Խարսոցով աշխատելիս, աջ ձեռքի բռնթ մատը գրվում է խարսոցի կոթի յերկարությամբ, մյուս մատներով կոթն այնպիս է բռնվում, վոր կոթի ծայրը հենվի ձեռ-

քե ափի մեջտեղին, բութ մատի հիմքի մոտ: Զախ ձեռքի թաթը դրվագ և կարտոցի մյաւ ծայրին:

Խարտոցն առաջ շարժելիս (առաջ՝ աշխատանքի շարժում, յետ՝ դատարկ շարժում) աջ ձեռքի ճնշումն աստիճանաբար պետք է ուժից զանա, իսկ ձափինը՝ պակասի: Խարտոցի շարժումները համաչափ պիտի լինեն, առանց սաստկության և ամեն մի աշխատանքի շարժումով պետք է խարստել ամբողջ խարտոցելի մակերեսը. Խարտոցի ուղղություններն, աշխատանքի շարժումներ կատարելիք, պետք եւ ներթառ կանոններն փոխել, վորպեսդի մակերեսի վրա ստացված գծիներն իրար հատեն միենույն անկյունով:

Խարտոցով աշխատել սովորեցնելու համար խորհուրդ եւ տրվում է գայտե ձողի վրա նախապես մի շարք փորձնական վարժություններ կատարել: Առաջին վարժությունը կատարվում է 180×50 մմ համատության ձողի վրա. ձողը, ծայրի մասում, խարտոցում են տափակ քերող խարտոցով, արագությունը 1 րոպեյում: Նայելով խարտոցելու աշխատանքի յուրացման ու ունակությունների չափին ֆայտե ձողի կտրվածքը (հատվածքը) հետզետե պակասեցնում են հետեւալ հաջորդականությամբ: 140×50 մմ, 110×50 մմ, 90×50 մմ, 75×50 մմ: Փայտե ձողի վրա փորձական վարժություններ կատարեց: Հետո կարելի յի անցնել յերկաթ խարտոցելուն:

Պաղպատմ իմանը: Պողպատի առանձնահատկությունը՝ նրա միավերությունն է:

Այդ հատկության շնորհիվ պողպատը պորձադրվում է այնպիսի առարկաներ ու գործիքներ պատրատելու համար, վորոնցից աշխատեցնելիս հատուկ կարծրություն ու առաձգականություն եւ պահանջվում:

Պողպատի կարծրությունը կախված է միսելու ժամանակ տպաքացման և ստոքման ջերմառարիճանից:

Ենթե պողպատը տաքացվի մինչև յեռացման ջերմառարիճանը և սառը ջրում արագ ստոքվի, մեծ կարծրություն կստանա, սակայն կիսրունանա և կարող եւ հեշտությամբ, մինչև փոշիացուցը փշրվել:

Ենթե պողպատը տաքացվի մինչև մուգ գորշագույն շիկացումը և ստոքվի՝ մխում չի ստացվի:

Միմիկու համար պողպատը պետք է տաքացվի մինչև կառմբության շիկացումը, բայց շիկացման ջերմությունը կախված է պողպատի տեսակից: Կարծր տեսակ պողպատների համար ջերմությունը պակաս պիտի լինի, քան փափուկ, պողպատի համար: Որինակ գործիքային պողպատը պետք է տաքացվի շիկացմանը միայն գորոշ առտիճանը, ուստի միսելիս ղեկավարվում է այդ գույներով, նայելով թե ինչ նպատակ յի ծառայելու մխում պողպատը:

Կարծրություն, վորքան առաձգականություն, ապա նրան պետք եւ տաքացնել մուգ գորշագույն շիկացումից. քիչ ավելի:

Տաքացած պողպատը հովացնելու համար կարելի յե ոդափել ոտոնողի հոսանքով, ջրով, զնդանի մակերեսով, աղբերի լուծույթով, ճարպով, մնդիկով և այլն: Թված միջոցներից լավագույնը օնդիկին է, զարդարացած շերմհաղորդություն ունեցող, և վոր գլխավորն է, նաև շփվելով տաքացած մետաղի հետ գոլորշիներ չի արձակում: մնդիկը գործ են ածում գլխավորապես թանգարժեք գործիքներ մխելու համար: Զրին թթուներ կամ աղեր աղելացնելը նույնական բարձրացնում է ջրի ջերմահաղորդումը և պակասեցնում գոլորշիների առաջացումը, բայց հետ միասին ժանդարմում: Ժանդուելը կանխելու համար մխելուց հետո առաջանա լուծույթի մեջ: Դարբնոցներում մխելու համար, սովորաբար չուր են գործ ածում:

Միսելուց առաջ անհրաժեշտ է վորոշել, թե ինչ ձեռք պետք է պարկան ջրի մեջ ընկղմել, վորպեսդի միսան լավագույն արդյունք ստացվի: Յերկար առարկաները ջուրն են իջեցվում ուղղահայաց գրությամբ, իսկ յեթե առարկան միատեսակ հաստություն չունի, ջուրն են իջեցնում հաստ ծայրը դեպի ցած: Յեթե ուզում են մխել փոչ թե ամբողջ գործիքն, այլ միայն նրա մի մասը, որինակ՝ ծիա-ամբակային աքցանի շրթերը, թրջում են միայն մխման յենթակա մասը:

Մխում առարկան ընկղմելով ջրի մեջ, պետք է նրան պտտել, վորպեսդի նրա շուրջը գտնված ջուրը չտաքանա, քանի վոր տաքացած ջրում պողպատը չի մխում:

Այդպիս կարծր մխմած պողպատը շիկացած յերկաթի վրա, կամ մեղմ կրակի մեջ աստիճանաբար տաքացնելով մխամեղմվում է (ոտպուտակ) (փափկանում ե), այսինքն մկնում է գունափոխվել, ստանդարտով նարնջի, բաց կարմիր, մանուշակի և կապույտ (գունափոխություն) գունավորումները: Թված գույներից յուրաքանչյուրին համապատասխանում է պողպատի կարծրության վորոշ առտիճանը, ուստի միսելիս ղեկավարվում է այդ գույներով, նայելով թե ինչ նպատակ յի ծառայելու մխում պողպատը:

Գունափոխության աղյուսակ

(ըստ Վենոգրադովի՝ «Մետաղների տեխնոլոգիա»),	
Բաց ծղոտագույն	2210
Կարմակաղեղին	2320
Մուգ ծղոտագույն	2430
Ամբողջպին մուգ ծղոտագույն	2540
Կարմրաղեղնագույն	2600

Փեղին, գոր գործվում եւ ծիրանու .	2710	Բարակ՝ բերանով գործիքներ
Քաց ծիրանագույն .	2770	
Մուգ ծիրանագույն .	2880	Զապանակներ
Մուգ կապույտ .	2990	
Քաց կապույտ .	3100	Թույլ միւլած գործիքներ
Ամբողջովին բաց կապույտ .	3210	
Քաց կապույտ՝ կանչափուն գույնով .	3320	

Պայտառի գործիքները, ինչպես՝ հատիչը, ձիասմբակային աքցանը, ծակիչը և այլն, մխվում են ալսպես. տաքացրած գործիքի ծայրը խորառությում են ջրի մեջ և ապա՝ ջրից հանելով, խարտոցով արագ մաքրում են ոքսիդի շերտը և դիտում գունավոխությունը. Յերբ պահանջված գույնն արդեն ստացվել է, գործիքն ընկղմում են Ջրի մեջ վերջնականորեն հովացնելու համար:

Միելու ժամանակ անհրաժեշտ ե նկատի ունենալ նաև պողպատի բաղադրությունը, մխման յենթարկվող առարկաների մեծությունըն ու ձեզ, վորովինետև մուլի տվող միջավայրի աղղեցությունը պողպատի վրա կլինի այնքան ուժեղ, վորքան պողպատը շատ ածխածին պարունակի և վորքան առարկան բարակ լինի:

Մուխ տալու ժամանակ լավ հետևանքներ ստանալու համար պետք ե ուշադրություն դարձնել ամանի ծավալի վրա, վորի մեջ կատարվում ե մետաղի մխումը: Միայն միջավայրի ամանի ծավալը պետք ե շատ փոքր չլինի, վորպեսզի միջավայրի ջերմությունը շատ ջրածրանա, քանի վոր միջավայրի տաքանալուց պակասում ե մխելու ուժը:

Մեծ նշանակություն ունի նաև միելու ժամանակի ճիշտ հաշվելը: Յեթե հաստ առարկան մխող վաննայում քիչ պահի, այն ժամանակ նրա մակերեսն սկզբում կարծրանում է, իսկ հետո ներսի տաքությունից մխամեղմվում և փափկում է:

Պայտառի ձեռքի աքցան պատրասելը: Պայտառի ձեռքի աքցանը ծառայում ե յերկաթը հնոցի մեջ դնելու և կոելու ժամանակ. Աքցանը կազմված ե ծխուռ (շառնիրի) վրա պտավող յերկու կեսից: Աքցանի շուրթերն ունեն տարրեր ձև ու մեծություն: Ամենից ավելի գործածական ե հարթ և կիսակլոր շուրթ ուղղող աքցանը:

Հարթ շուրթավոր աքցանը սովորաբար յերկու տիպի յելինում ձեռքի աքցան և հնոցային աքցան: Նրանց տարրերությունը միայն չափաբերի մեջ ե. ձեռքի աքցանն ավելի փոքր ե ու կարճ, քան հնոցայինը: Յերքի աքցանի կոթի ձեզ կլոր ե, հաստությամբ 11—12 մմ-ից

վոչ ավելի: Ձեռքի աքցանի յերկարությունը՝ 400 մմ ե, հնոցայինի յերկարությունը՝ 600—800 մմ: Կրասկար շուրթիրով աքցանները, նայած մետաղի ձողի հատվածքներ (կարվածքներ), վորով գարբենն աշխատում եւ տարրեր չափերի լին լինում:

Աքցանը շինուած էն կամ ամրացված կլոր շիրկաթից, կամ պես շուրթերը կուռամ են առանձին և ապա յերացնում կոթին: Աքցան շինելու համար վերցնում են 24×12 մմ ձող, պարագնում են մեկ ծայրը մինչև պափառէ շիկացումը և ծայրի վրա, ուղարկաց բանելավ նրա ճակատը նույիցնում են, մինչև վոր հատությունը: հասնի 15 մմ-ի և լայնությունը՝ 26 մմ: Պատրաստվածքի կողի վրա նստացըրած ծայրից 17—18 մմ դեպի յետ հատիչով նշան են անում, նույն ծայրը շիկացնում են մինչև բաց կարմիր գույն ստանալու նիշի կողմով գարբնի կողմից դնում են զնդանի վրա և կոելով բարակացնում են այնքան, վոր հիմքում հաստությունը համար 12 մմ, ծայրում 7 մմ և լայնությունը դառնա 20 մմ (առաջին ուժ):

Այնուհետև պատրաստվածքի տափակ մասի վրա առաջին ուժի դիմացը, յերկրորդ նշանն են անում և պատրաստվածքը (կանանագի հետ) կոելով յերկարացնում են, ծայրի լայնությունը հասցնելով 30 մմ-ի և հաստությունը՝ 10 մմ (յերկրորդ ուժ): Դրանից հետո պատրաստվածքը, դարբնի ճակատկ կողմից դնում են զնդանի յեզրին և յերկարացնում կողի յերկարությամբ (յերրորդ ուժ): Հակառակ կողի վրա պատրաստվածքի առաջին ուժից, աքցանի շրթի հիմքում չափերը պետք ե լինեն՝ լայնությունը՝ 20—21 մմ, հաստությունը՝ 10 մմ: Այնուհետև պատրաստվածքը նորից տաքացնում են մինչև սպիտակ շիկացումը և կոթը կոելով յերկարացնում են, սկսած յերրորդ ուժից 120—150 մմ հեռավորությամբ (տափակմասը) շըրթի հիմքի մոտ թողնելով 22 մմ լայնություն: Առաջինանաբար նեղացնելով և ծայրը հասցնելով 13 մմ-ի, նրան պալիս են քառակում ձև հետո անկյունները կլորացնում են, նախ ձեռքի մուրճով, հետո 12 մմ-ոց սեղմիչի (սբժիմկա) մեջ, կոթի տրամագիծը հասցնում են մինչև 10—11 մմ-ի:


Յեթե պատրաստվածքը հովացել է, այն կրկին տաքացնում են մինչև կարմրելը և կենտրոնում, առաջին և յերկրորդ ուժերի մեջ կլոր ծակիչը ծխուռ համար անցք են պատրաստում, ու հետագայում հարթում: 40—45 մմ յերկարությամբ և անցքի լայնության հաստությամբ տաքը վիճակում ծխնին (կլոր սոնակ), գովում ե անցքի մեջ. այդ ժամանակ աքցանը սովորաբար պատրաստվածքը ե լինի: Մինու ամրացնումը կատարվում է ձեռքամուրճի թեթև հարվածներով, իսկ վերջնական հրդերը՝ ճռվամալով մեջ:

Յեթե փարչին անելուց հետո աքցանն ազատ չի բացվում, այն

ժամանակ ծխնու (սոնակի) տեղը մինչև կարմրելը շիկացնում են և տաք դրության մեջ մի քանի անգամ բաց ու խուփ են անում, մընչեւ վոր ճշողերն աղատ բացվեն:

Աքցանը պատրաստելուց հետո շուրջերը հարմարեցնում են յերկաթի ձողերի չափին, վորոնց վրա աքցանով պիտի աշխատեն:

Զիօն սմբակային աքցան պատրաստելը (նկ. 134): Սմբակային աքցանը ծառայում է յեղջերապատի յերկարացած ներքանային յեղջերը կտրելու, պայտը սմբակից պոկելու ժամանակ գործադրելու համար: Աքցանով կտրում են նաև պայտամեխերի ծայրերը և պայտելու ժամանակ սարքում փարչինները:



Նկ. 134. Զիօն սմբակային աքցան պատրաստելու առանձին փուլերը:

Հայնությունը մինչև 30—32 մմ-ի (յերկրորդ ուսը): Այս գործողությունը կատարելու ժամանակ շըր-

թի ներսի մակերեսը զնդանի վրա պետք ե գրված լինի աջ դրաւթյամբ: Հետո պատրաստվածքը կրկին տաքացնում են մինչև բաց կարմիր գույն ստանալը և յերկարացնում: առաջին նիշից 36 մմ հեռավորության վրա ու հակառակ կողի կողմից (առաջին ուսի կտոմից) այն հաշվով, վոր կոթի հիմքում լայնությունը հառնի 23 մմ-ի և հաստությունը՝ 12 մմ-ի (յերրորդ ուս): Պատրաստվածքը յերրորդ ուսով դնում են զնդանի յեղին և ձեռքի մուրճով հարվածելով յերկարորդ ուսի անկյան շուրջերը ծոռում: Են դեպի յետ այնուհետեւ զնդանի լեղջուրի վրա առաջին ուսի հիմքից շարունակում են ծայրը ծռել մինչև վոր նա ստանա ձիառմբակային աքցանի շըրթի ձև:

Աքցանի կոթերի կոելը կատարվում է ձիշտ այնպես, ինչպես դարբնի ձեռքի աքցան պատրաստելու ժամանակ:

Կոթերն ուղղելով, պատրաստվածքը տաքացնում են և առաջին ու յերրորդ ուսերի կենտրոնում ծակում են 10—12 մմ տրամագիծ ունեցող ծխնու (շառնիր) համար: Ծխնին պատրաստում են պողպակի կտորից, անցքի տրամագիծին համապատասխան, 40—45 մմ յերկարությամբ և մինչև կարմիր շիկացումը տաքացրած վրձակում դնում են անցքի մեջ: այդ ժամանակ աքցանը հովացած պիտի լինի: Ծխնու վերջնական ձևավորումը կատարում են ձուլամայրի: վրա: Փարչիններին գոյացած ծխնու գլխի տրամագիծը 13 մմ-ից և բարձրությունը 5 մմ-ից ավելի չպիտի լինի:

Պատրաստի աքցանի շուրջերի յեղին պետք ե ընդհուպ միանան միմյանց: Կոթերի հեռավորությունը միմյանցից պետք ե կայդ 70—75 մմ: չափումը կատարվում է կոթերի կենտրոնից:

Դարբնական աշխատանքից հետո աքցանը յենթարկվում է փականագործական մշակման (խարտոցելու):

Խարտոցելը: Աքցանը խարտոցվում է քերող խարտոցով՝ մամլակի մեջ սեղմված վիճակում: Շուրջերի արտաքին մակերեսը կիսաձված են խարտոցում, իսկ շուրջերի մոտեցման տեղը մոտ 25 միլիմետրաչափ հարթություն են խարտոցում: Շուրջերի յեղին վրա, դրսից մանրատամ խարտոցով 2 միլիմետրաչափ շեղ յեղը են հանում, իսկ ներսից կռնածե 8 միլիմետրաչափ խարտոցում են: Աքցանի կտրող մասը ուր ե արվում: Շուրջերի արտաքին կիսաձվածն յեղին յերկարությամբ 0, 5 մմ ուր անկյունները հանում են նրա համար, վոր փարչինները պատրաստելիս միխերը ուր անկյուններով չկտրվեն և սմբակի գլազուրը չճանկովի: Բացի դրանից խարտոցով հարթում և կլորացնում են կոթերի ծայրերը:

Մի ելը: Փականագործական մշակումից հետո ձիառմբակային աքցանը միզում եր Միելը համար շուրջերը տաքացնում են մինչև մուգ կարմիր գույն ստանալը և հետևում են, վոր յերկու այնուհետեւ շուրջերը շարությունը միզում են:

թըն ել հավատարմաշափ տաքանանու Տաքացնելուց հետո աքցանը ջուրը թերով ընկղմում են ջրի մեջ (բացված դրությամբ): Յերբ շուրթերը հովանում են, առջանը ջրից հանում են և հետառում գունափոխությանը, պատասերով մինչև միխոնդ մասը կատարյա գույն ստանա:

Յերբ շուրթերի այտերը մուգ գույն կրտանան, աքցանը ջուրն են խորասուզում մերժնականապես ստոցնելու համար: Աքցանի այտերը չպետք ե միեւ, ուստի յեթե տաքացման ջերմությունը շատ բարձր է, միեւու ժամանակ այսերը չպետք ե թրջել:

Աքցանի շուրթերի միխածության ամրությունը ստուգվում է առափակ թարտոցով: Յեթե խարաւոցը բերվ չի հանում, մուխը շատ ե ամած և շարթերն աշխատելու ժամանակ կիշրկվեն, իսկ յեթե խարդոցը շատ ե թեփ հանում, կնշանակի մուխը թույլ ե տված, նորմար զավ մխելու ժամանակ խարարցը շատ քիչ թեփ ե հանում:

Ակոսանատ պատրասելը: 28—30 մմ հաստության պողպատի ձողից կտրում են 80 մմ յերկարությամբ մի կտոր, տաքացնում մինչև բաց կարմիք գույն ստանալը, և մի ծայրը կոնաձև կռում, հաստությունը հասցնելով 23 մմ-ի: Այնուհետև գործիքային ծակիչով անցք են քացում:

Ծակած անցքի մեջ հագցնում են շտկիչը (ապրավկա), ծեծում պկասահատի այտերը և նըան հարթում հարթիչնիք: այտերը պետք ե ունենան 10 մմ հաստություն և 23—24 մմ լայնություն: Երկին տաքացնում են մինչև բաց կարմիք գույն ստանալը, հարթիչով նշում են ուսերի տեղը և անցքի յեղիքը 10 մմ դեպի դուրս կռելով՝ յերկարացնում են պատրաստվածքը (դեսպի աշխատող ծայրը): Ուստեղում պատրաստվածքի հիմքի լայնությունը հասցնում են 16 մմ, և լայնությունը 25 մմ, ծայրում լայնացնելով մինչև 26 մմ, իսկ հաստությունը՝ 9 մմ: Աշխատող ծայրի յերկարությունը, հաշվելով անցքի ուստրին ծայրից՝ պետք է լինի 53 մմ: Այնուհետև պատրաստվածքը նարդից տաքացնում են և շտկիչի ուստրիթյումը անցքը լայնացնում (յերկարությունը 24—25 մմ, լայնությունը 12—13 մմ) և կատարում պկասահատի գլխիկի վերջնական մշակումը:

Ակոսանատի աշխատող ծայրի կենտրոնը պետք ե գտնվի անցքի քայլիք դեպի գլխիկի գլխիկի կենտրոնը քաշած ուղիղ գծի վրա: Խարդարում նախ խօսքուցում են բանող ծայրը, թողնելով նշան մեծատեղը մի քիչ բարձր: ծայրը կոնաձև խարտոցում են այն հաշվով, վեր բանող ծայրը մի կողմէից գուրք գտա կիսաձվածեն և ուսուցիկ, իսկ մյուս կողմէից մի քիչ գորգավոր: բանող ծայրի յեղերքներից շեղությունը քերառք են, պորից հետո խոշորատամ խարացողի հարթում են հարվածակիք ժակերներ:

Մի եղլը Ակոսանատի մխելը (ինչպես հատիչի և ծակիչի) կա-

տարում են միայն բանող ծայրերում, վորոնց տաքացնում են մինչև չե մուգ կարմիք գույն ստանալը, 20—30 մմ խորաթյան պաշտպանում են ջուրը, հետագայում մխամժղմելով մինչեւ կապուա գույնը:


Զեսամուրեն պատրասելը: 48 մմ տրամագծով և 100 մմ յերկարությամբ մի կտոր կլոր պողպատ շիկացնում են և մեջանդը դործիքային ծակիչով ծակում: Ծակիչը պետք ե ունենա կոնաձև աշխատանք մաս, ծայրում 14×7 մմ և հիմքում 17×12 մմ չափ: Այնուհետև պողպատի կտորը մինչև բաց կարմիք գույնի շիկացնելը, անցքն ուղղում են գործիքային շտկիչով, հետո պողպատի կտորը յերկին տաքացնում մինչև բաց կարմիք գույն ստանալը և մի ծայրը կոնաձև յերկարացնելուց հետո՝ ժեղմիչի մեջ կլորացնում: դրանից հետո պողպատի տափակ ծայրը հարթում են և թողնում կիսապատրաստ վեճակում՝ վականագործական մշակման յենթարկվու համար: Այնուհետև յերկարացնում են մյուս ծայրը վորոն նույնպես կլորացնում են սեղմիչի մեջ, մինչև վոր տրամագիծը 43 մմ գանդա և կռում են ուսուցիկությունը: Վերջապես, տաքացնում են ամրող մուրճը և անցքի յերկարությունը հասցնում 30 մմ-ի, իսկ լայնությունը 22 մմ-ի, վորից հետո անցքը հղկում են, վորպեսզի յեզրերը սուրը չի հինեն:

Խ ա ր տ ո ց ե լ ը: Զեսամուրեն ամուր սեղմում են մամլակում (անցքին լայնակի) և զարկանի տափակ ծայրն այնպես են խարտոցում, վոր հարթ և ուղիղ մակերես ստացվի: Խարտոցում են նախ խոշորատամ, ապա տափակ խարտոցով, վորպեսզի զարկանի մակերեսի վրա փոսիկներ և շերտեր չմնան: զարկանի յեզերքները փշրվելուց և ջարդվելուց պաշտպանելու նպատակով, նաև աշխատելիք ջարդվելը կանխելու համար շեղ են խարտոցում: Աշխատող ծայրի շուրջը, սկզած հարվածող մակերեսից, խարտոցում են 20 մմ-ից վոչ ավելի բարձրությամբ: Այնուհետև խարտոցում են մուրճի բումառվկայի ծայրը, հարթելով նրա մեջանդը և թողնելով ուսուցիկ (կիսապատրաստ) բարձրությունը 5 մմ-ից վոչ պակաս: Վերջապես, հարվածող մակերեսից 20 մմ հեռավորությունից վոչ ավելի յերեսային խարտոցով, հղեաւմ են զարկանը և նրա յեզրերի շուրջը շեղ խարտոցում:

Մ ի ե լ ը: Միվում են ձեռնամուրենի միայն զարկանները: Դրա համար ամրող մուրճը տաքացնում են մինչև մուգ կարմիք գույն ստանալը և հերթականորեն մեկ: մեկ՝ մյուս ծայրը ստորը նշում են ընկղմում: Յերկրորդ ծայրը ստոչելու ժամանակ հետևում են առաջին ծայրի գունափոխությանը, ստանալով միելու համար պահանջված գույնը, արագ շարժումով այդ ծայրը շրջում, ընկղմում են ջրի մեջ և հետևում մյուս ծայրի գույնին: այդ գործողու-

Քյունք կատարվում ե մի քանի անգամ, մինչև ամբողջ մուրճը չըկորցնի տաքացման գույնը: Այնուհետև սառեցվում ե ամբողջ մուրճը: Մուրճի այտելը չեն մխվում, վորպեսզի աշխատանքի ժամանակ չկոտրվեն: Մխելուց հետո ձեռնամուրճը կոթում են և ռեպով ամրացնում:

Պայտելու մուրճ պատրաստելը (նկ. 135): 24 մմ կտրվածքով և 100 մմ յերկարությամբ մի կտոր կլոր պողպատ շիկացնում են մինչև քաց կարմիր գույն ստանալը և մեջտեղը նստեցնում (հաստացնում), պատրաստվածքին տալով այնպիսի ձև, վոր կտրվածքը մոտենա (30×28 մմ) քառակուսու: Պատրաստվածքի 28 մմ-ոց մակերեսը ծայրից (զարկանից) 34 մմ դեսպի ներս ծակում են այնպես, ինչպես ձեռնամուրճը: Անցքի մեջ դնում են շտկիչը և մուրճի այտելը կուելով, հետագայում ուղղում են հարթիչով: Այտելի լայնությունը պետք ե լինի 35 մմ. իսկ հաստությունը մինչև 4 մմ այտելի մի ծայրը դեպի կոթի (նասադկայի) կողմը յերկարացվում է: Այտելը շինելիս միաժամանակ հարթում են նաև անցքը, վորի յերկարությունը հասցնում են 25 մմ, իսկ լայնությունը մինչև 13 մմ:



Նկ. 135. Պայտելու մուրճ պատրաստելու առանձին փուլերը:

Առարկութեք և 24 մմ-ոց ներքնակի (նիժնիկ) վրա, հարթիչի ոգնությամբ, վորի շնորհիվ մակերեսներից մեկը ուռուցիկ ձև և ստանում, մյուսը՝ ռուղիղ (հարթ): Մայրը կրկին տաքացնելով, հատիչի ոգնությամբ ճեղք են կտրում, վորի լայնությունը հիմքում պետք ե լինի մինչև 6 մմ:

Այնուհետև պատրաստվածքը տաքացնում են, զնդանի վրա յերկարացնում և զարկանի յերկարությունը հասցնում 40 մմ, իսկ հաստությունը 25 մմ: Զարկանը վերջնականապես կոռում են 24—25 մմ-ոց սեղմիչի ոգնությամբ: Զարկանի հիմքը պետք ե լինի 23—24 մմ և ծայրը 24—25 մմ:

Զարկանի հակառակ ծայրը տաքացնում, կոռում են և հիմքը հասցնում 20—17 մմ, ծայրը 15—10 մմ: Այս գործողությունը կա-

տաքարվում է 24 մմ-ոց ներքնակի (նիժնիկ) վրա, հարթիչի ոգնությամբ, վորի շնորհիվ մակերեսներից մեկը ուռուցիկ ձև և ստանում, մյուսը՝ ռուղիղ (հարթ): Մայրը կրկին տաքացնելով, հատիչի ոգնությամբ ճեղք են կտրում, վորի լայնությունը հիմքում պետք ե լինի մինչև 6 մմ:

Յեղջյուրները ծուելու համար մուրճի անցքի մեջ հաղցնում են գլանաձև յերկար գործիքային շտկիչը, վորի ծայրը դնում են զնդանի յերեսի յեղջյուրքի վրա աշխատաղիքի կողմից այնպիս, վորպեսզի մուրճի պատրաստվածքն ընդհուպ կպչի զնդանի կողի մակերեսին և ձեռնամուրճով դեպի իրեն հարվածելով՝ ծուում են յեղջյուրները: Այնուհետև մուրճը դրախ յերեսով դնում են զնդանի ուսի վրա և հատիչին կռանով թեթև հարվածներ հասցնելով՝ ուղղում են ճեղքը, հատադիր ճեղքից չհանելով յեղջյուրներն ուղղում են կողքերից: Վերջապես մուրճը կրկին տաքացնում են մինչև մուգ կարմիր գույն ստանալը, ուղղում են անհարթությունները և թողնում, վոր դանդաղ սառչի:


Խարտուց ելը: Մուրճը սեղմում են մամլակի մեջ և զարկանը բողոք կողմերից խարտոցում, մինչև վոր մակերեսը հարթ և ուղիղ տեսք ստանա: Զարկանի յեղջյուրը մի փոքր շեղ խարտոցում են, վորպեսզի աշխատանքի ժամանակ սմբակի յեղջերապատը չհանկավի: մուրճի յեղջյուրները վերին մակերեսից կլորացնում են, իսկ յեղջյուրների ծայրերը ստորին մակերեսից կռնածեն են անում: Մանրատամ խարտոցով խարտոցում են յեղջյուրների ճեղքը և մուրճի այտելը, տալով նրանց հարթ և ուղիղ տեսք:

Մի ելը: Պայտափի մուրճի միայն զարկանն են մխում, վերջինս ձիկացնում են մինչև մուգ կարմիր գույն ստանալը և ջրում սառեցնում են մինչև կապույտ գույն ստանալը:

Մխելուց հետո մուրճը կիթում և ռեպում են:

Մմբակային գանակ պատրաստելը (նկ. 136): 20×5 մմ կտրվածքով պողպատե ձողից կտրում են 110—115 մմ յերկարությամբ մի կտոր, տաքացնում են մինչև քաց կարմիր գույն ստանալը և պատրաստում դանակի կիսափարիկատը: Դանակ պատրաստելու հիմնական աշխատանքը փափանագործական մշակումն է:

Խարտուց ելը: Դանակը մամլակի մեջ սեղմելով, նախ խարտոցում են կողերը, վորից հետո խարտոցում են ստորին մակերեսը, տալով նրան ուղիղ և հարթ տեսք: Դանակի պատրաստվածքի ծակուտած կոթն ամրացնում են փայտե տախտակին և սեղմում մամլակի մեջ: Վերին մակերեսը խարտոցում են կռնածեն, յեղջյուրը հասցնելով մինչև բերանը, բայց առանց նրանց վերջնականապես որելու, հա-



Նկ. 136. Մմբակային դանակ պատրաստելու առանձին փուլերը:

կառակ դեպքում միսելը կղմվարանա և դանակը կարող ե ճկվել (կորանալ):

Կտրող ժամի յեղբերը խարսոցվում են հետեւյալ հաջորդականությամբ, նախ՝ խարսոցվում ե ստորին, ամենի յերկար յեղը, ապա՝ վերին Դանակի բանող ծայրը, յեղբերի կողմից կլորացնում են, իսկ տափակ կողմից՝ կոնաձև խարսոցում, նախոցելուց հետո՝ դանակի ծայրը տաքացնում, ծռում և միսում են:

Մխելը: Դանակը տաքացնում են մինչև մուգ կարմիր գույն ստանալը, կողով արագ ընկղմում են ջրի մեջ և պահում մինչև վերջնականապես սառելը: Այնուհետև հանում են ջրից, որը ունի մինչև չորսանալը, յուղում և պահում կրակի վրա, մինչև յուղի այրվելը: Հետո դանակը կրկին թրջում են ջրի մեջ՝ մինչև կատարելապես սառելը:

Ծուխ տալու այսպիսի ձեզ պողպատին ձկում և առաձգական հատկություն ե տալիս: Մխելուց հետո դանակը կոթում են:

Հավելված

ԴԱՐԲՆԱ-ՊԱՅՏԱՌԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՃԻՄՆԱԿԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԻ
ԱՂՅՈՒՄԱԿ¹

Ձեռքի աբցանի իմմանական չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափերը միլի-մետրերով	Թույլատրվում ե ավել կամ պակաս
Աքցանի յերկարությունը	400	+ 2
Շուրթերի յերկարությունը	30	+ 2
Առաջին ուսի շուրթերի հաստությունը	12	+ 2
Հաստությունը շուրթերի ծայրերում	7	+ 1
Շուրթերի լայնությունը	21	+ 2
Առաջին և յերրորդ ուսի միջի տարածությունը	32	+ 2
Լայնությունը	32	+ 2
Հաստությունը	10	+ 1
Կոթի տափակ մասի յերկարությունը	150	+ 2
» » հաստությունը	11	+ 2
Ցերորդ ուսի լայնությունը գեղի ծայրը հետո նետե նեղանում ե	20	+ 1
Կոթի կլոր մասը	236	+ 1
Տափակ մասի տրամագիծը	13	+ 1
Ծայրի տրամագիծը	12	+ 1
Ծինու (շառների) անցքի տրամագիծը	10	+ 1
Ծինու փարչինի յերկարությունը	40	+ 1
Փարչինի գլխիկի լայնությունը	13	+ 1
» » բարձրությունը	6	+ 1
Շուրթերի միջի տարածությունը հիմքում, սեղմած վիճակում	12	+ 1
Շուրթերի միջի տարածությունը ծալիքում սեղմած վիճակում	6	+ 1
Աքցանի կշեռը (գրամներով)	900	+ 50%

Ձեռնամուրնի իմմանական չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափը միլիմետրերով	Թույլատրվում ե ավել կամ պակաս
Զեռնամուրնի յերկարությունը	120	+ 2
Տայլերի տրամագիծը	42	+ 1
Զարկանների ծայրերի և կոթանցքի տարածությունը	45	+ 1
Կոթի համար	30	+ 1
Կոթանցքի յերկարությունը	22	+ 1
Զեռնամուրնի հաստությունը կոթանցքի յերկարությամբ	44	+ 3
Հաստությունը կոթանցքի լայնությամբ	60	+ 3
Կոթի յերկարությունը	400	+ 2
Կոթի հաստությունը մեջտեղում	27	+ 1
Կոթի լայնությունը	32	+ 1
Կոթի հաստությունը ծայրում	31	+ 2
Կոթի լայնությունը	35	+ 1
Զեռնամուրնի կշեռը (գրամներով)	1450	+ 50%

¹⁾ Այս աղյուսակներում ցույց տված դարբնի և պայտառի գործիքների չափերն ընդունված են և ենինդրագի պայտառական հրահանգիչների դպրոցում:

Պայտառական մեցանի չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափը միլիմետրն.
Աքանի յերկարությունը	370
Կոթի լայնությունը յերբորդ ուսի մոտ	20
Ուսի լայնությունը ծինուն (շամփեխն) լայնակի	30
Շուրթի հաստությունը հիմքում	18
» » » մեջտեղում	11
Սեղմած շուրթերի մեջ յեղած լայնությունը (շուրթերի ներսի յեզրերի մեջ)	38
Նույնը արտաքին յեզրերի մեջ	60
Շրթի բարձրությունը ծինուն մեջտեղից	50
Կոթի ապակի մասի յերկարությունը	120
Կոթի տրամագիծը ծայրում	12
Կոթերի ծայրերի մեջ յեղած տարածությունը պեղմած պատրաստի վիճակում	50
Շրթերի բացվածքը	60
Շուրթերի լայնությունը	22
Աքանի կշիռը (գրամներով)	1000
Մանոթություն: Բոլոր չափումներում թույլատրվում են մեկ միլիմետր ավել կամ պակաս	

Պայտառական մուրնի չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափը միլիմետրն.
Մուրնի յերկարությունը	115
Զարկանի տրամագիծը հիմքում	24
» » » ծայրում	26
Զարկանի յերկարությունը	37
Զարկանի ուսի և անցքի յեզրի մեջ յեղած տարածությունը	5
Անցքի յերկարությունը	28
» » լայնությունը	17
Այտերի հաստությունը	4
» » բարձրությունը	37
Կոթի և յեղյուրների ծայրերի տարածությունը	45
Ցեղյուրների հաստությունը նշած տեղում	15
» » » յեղյուրների հիմքում	15
» » » յեղյուրների ծայրում	8
Ցեղյուրների լայնությունը ճեղքի հետ (արտաքին յեզրերի մեջ)	21
Ճեղքի յերկարությունը	40
Մուրնի կոթի յերկարությունը	350
Կոթի լայնությունը անցքի սկզբում առանց պլանկաների	26
» » հաստությունը	21
Կոթի լայնությունը մեջտեղում	30
» » հաստությունը	23
Կոթի ծայրի լայնությունը	33
Գլաների յերկարությունը	22
» » լայնությունը մուրնի մեջ	125
» » կոթի վրա	12
» » հաստություն ամբողջ յերկարությամբ	15
» » ծովածքը վերելից	1
Փարչինների անցքը (տրամագիծը)	5
Տարածությունը մուրնի մինչև 1 փարչինը	3
» » 1 փարչինից մինչև 2 փարչինը	40
» » 2 փարչինից մինչև 3 փարչինը	45
Մուրնի կշիռը կոթի հետ (գրամներով)	15
Մանոթություն: Բոլոր չափումներում թույլատրվում են մեկ միլիմետր ավել կամ պակաս	580

Ակոսահատի եկմանական չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափը միլիմետրն.	Բույլարգում ետքել կամ պակաս
Ակոսահատի յերկարությունը	120	± 2
Տարածությունը զվարդից մինչև անցքի վերին յեզրը	45	± 1
Աշխատող յեզրի յերկարությունը հաշված անցքի ստորին յեզրից	53	± 1
Աշխատող ծայրի յերկարությունը, հաշված ուսից	40	± 1
Անցքի յերկարությունը	2	± 1
» լայնությունը	14	± 1
Ակոսահատի լայնությունը անցքի յերկարությամբ Քառակուսությունը գլխում	27	± 1,5
Աշխատող ծայրի հաստությունը հիմքում	20	± 2
Աշխատող ծայրի հաստությունը հիմքում	15	± 1
Աշխատող ծայրի լայնությունը հիմքում	8	± 4
Այտերի հաստությունը	23	± 1
Այտերի հաստությունը	8	± 1
Ակոսահատի հաստությունը անցքի լայնությամբ	30	± 1
Ակոսահատի քաշը (գրամներով)	500	

Միբակային գանակի չափերի աղյուսակ

Չափերի անունները	Չափը միլիմետրն.
Դանակի յերկարությունը	215
» » կոթից	89
» » յերկարությունը, ստորին բերան	79
Դանակի լայնությունը վերին բերան	38
Դանակի ծայրում	21
» » ծայրում	15
Դանակի կոթի յերկարությունը	126
» » լայնությունը	21
» » ծայրում	33
Կոթի ճեղքի յերկարությունը	17×22
Կոթից 45 մմ ճեղքագրության վրա բերանի ծովածքը	65
Բերանի ծայրի ծավածքը (յերկարություն)	5
Հեռավորությունը կոթի սկզբից մինչև առաջին փարչինը	20
Հեռավորությունը մինչև յերկրորդ փարչինը	80
Հեռավորությունը յերկրորդ փարչինից մինչև կոթի ծայրը	76
Դանակի հաստությունը կոթի մոտ	3
» » մեջտեղում	2
» » ծայրում	1,5
Կոթի բարձրությունը ծայրում ստորին յեզրից	42
Դանակի քաշը կոթի հետ (գրամներով)	100

Մանոթություն: Բոլոր չափումներում թույլատրվում են մեկ միլիմետր ավել կամ պակաս

Պայտելու նշանակությունը	1
Զիռի վորի ստորին մասի կառուցվածքը	1
Հողեր և կապաններ	1
Սմբակային (փափկանային) կռձիկներ	1
Փափկան	1
Զեր	1
Արյունատար անոթներ և նյարդեր	1
Վոտի ստորին մասի մաշկը	1
Յեղջերային մաշիկ	1
Սմբակի յեղջերի հատկությունները	1
Զիռ սմբակի զարգացումը	1
Ուղիղ և առողջ սմբակի հատկությունները	1
Սմբակային յեղջերի աճը	1
Սմբակի լայնացումը	1
Պայտառական դարբնոցը և նրա սարքավորումը	1
Դարբնոցի շենքը	1
Դարբնոցի սարքավորումը	1
Յերթային դարբնոց	20
Դարբնոցային նյութ	20
Յերկաթ	20
Պողպատ	20
Դարբնոցում գործադրվող վառելանյութը	30
Ածուխ ծախսելու նորման	30
Մեքենայական պայտերի արտադրությունն ու պայտի նկարագրությունը	30
Պայտի նկարագրությունը	30
Արևելյան պայտեր	30
Պայտի գղեռներ	30
Պայտի մեխեր	30
Պայտ պատրաստելու գործիքներ	30
Պայտառին պայտեր պատրաստել սովորեցնելը	40
Զեռքով պայտ պատրաստելը	50
Յերկու մշտական գղեռով պայտ պատրաստելը	50
Բոնիչային գղեռի յեռացումը	60
Պայտի գղեռային անցքերի ծակոտելը, շտկելը և փորակելը	60
Կլոր պայտ պատրաստելը	60
Վոտաներն իրար խփող (թորուխ տվող) ձիերի համար պայտ պատրաստելը	60
Լայնացուղ և խորացրած բուխտովկա ունեցող պայտ պատրաստելը	60

Զեկունիք ձողավոր պայտ	68
Չեռքով պայտ պատրաստելու ժամանակ տաքացումների քանակը և ժամանակի հաշվարկը	69
Չիու վասների դրվածքը	70
Վուճների ուղղղ դրվածք	70
Սմբակների ձեւփոխությունը վասների դրվածքի կազմակցությամբ	71
Վասների անկանոն դրվածքներ	71
Քայլվածքը վասների դրվածքի կազմակցությամբ	73
Զի պայտելու գործիքներ	75
Զի պայտելու տեխնիկան և կանոնները	77
Զիու զննումը պայտելուց առաջ	77
Պայտելու ժամանակ ձիու հետ վարվելը	79
Սմբակների պատրաստելը պայտելու համար	83
Պայտի հարմարեցումը	89
Պայտի ամրացումը	93
Վերապայտման ժամանակի հաշվարկը	96
Պայտի թերությունները, նրանց ազդեցությունը սմբակի և պայտման ամրության վրա	96
Վերապայտելու ժամկետը	99
Սմբակների խնամքը	100
Վասների անկանոն դրվածք և անկանոն քայլվածք ունեցող ձիերի պայտումը	102
Անկանոն դրվածք ունեցող վասների սմբակների պայտումը	102
Թորուխ տվող ձիերի պայտումը	103
Ցետեի վոտով առչելի վասնի խփող ձիերի պայտումը	104
Արատափոր և հիվանդ սմբակներ	106
Սմբակի ձեւփոխությունը	107
Յեղջերի վրակի վատթարացումը	112
Յեղջերի ամբողջության խախտումը	113
Սմբակի զբայուն մասերի ֆլավածքները	117
Սլաքի նեխումը	120
Սմբակների սեվմատիկ բորբոքում	121
Եշերի, ջորիների և լծկան յեղների պայտումը	122
Եշերի և ջորիների պայտումը	122
Լծկան յեղների պայտումը	123
Դարբնապայտային գործիքների ձեռքով պատրաստելը	124
Համելված	137
Դարբնապայտային գործիքների հիմնական չափսերի աղյուսակ	137

Թարգմանիչ՝
Գ. Տեր-Հակոբյան
Պատ. խմբագիր՝
Դ. Փաջացյան
Մասնագ. խմբագիր՝
Ռ. Մանուկյան
Լեզվական խմբագիր՝
Գ. Մելքոնյան
Տեխ. խմբագիր՝
Լ. Ոհանյան
Մրգագրիչ՝
Մ. Թումանյան

Վ. 703. Հրատ. 5190.

Պատվեր 240. Տիրաժ 1000.

Հանձնված ե արտադրության 14/III 1940 թ.

Ստորագրված ե տպագրութ. 28/VIII 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերևան, Աբովյան, 65



21.988

ԳԻԱԸ 5 ր.

П. ВАРВАРИН и С. КРЕВЕР
КОВКА ЛОШАДИ
Армгиз, Ереван, 1940 г.